

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

**«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԶՈՐԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ»**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17 –ԻՆ ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**

ԵՐԵՎԱՆ 2017
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ **Աշոտ Ներսիսյան**

**Երիտասարդության խնդիրները և պետության հզորացման
միտումները: Գիտաժողովի նյութեր(17 փետրվարի, 2017) –
Եր:ԵՊՀ հրատ., 2017, 162 էջ:**

Ժողովածուն ներառում է 2017թ. փետրարի 17 –ի ԵՊՀ ԻՄ –ի ՈւԳԸ –ի կազմակերպված «Երիտասարդության խնդիրները և պետության հզորացման միտումները» գիտաժողովի ընթացքում հնչած զեկուցումների գլխավոր կամ գնահատելի մասը: Ելույթներով հանդես են եկել հանրապետության տարբեր բուհերի ներկայացուցիչներ, հիմնականում ուսանողներ: Դրանք առնչվում են պատմության, քաղաքագիտության, գրականության, լեզվաբանության, տնտեսագիտության և այլ ոլորտների, որոնցում շատ հաճախ հանդիպում են գիտական նշանակության եզրահանգումներ: Ժողովածուն տպագրվում է՝ հաշվի առնելով նաև ուսանողության մտահոգությունը մեր պետության քաղաքական և գիտական ապագայով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ

ՍԱՆԱՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ *Երևանի Պետական Համալսարան*

Երիտթուրքական կառավարությունը շուտով դավաճանեց առաջին օրերի իր քաղաքականությանը և ուղղվեց դեպի ծայրահեղ իսլամական գաղափարախոսությունը: Կազմված նոր սահմանադրությունը սրբազան մահմեդական օրենքի հովանու ներքո էր: Երիտթուրքական ռեժիմն ավելի ու ավելի էր կրկնում համիդյան վարչակարգի տեռորիստական քաղաքականությունը: Վերադարձը դեպի հին ժամանակների սանձարձակ ու հակաժողովրդական բարքերը երիտթուրքերի կողմից, իրենց իսկ տրված խոստումների դրժումը, առաջացնում էին ոչ թուրք ժողովուրդների դժգոհությունը: Պատասխանը լինում էր կրկին տեռորին դիմելը: Սակայն այս ամենից հետո դեռևս մնացել էին որոշ լավատեսներ, որոնք համիդյան վարչակարգից հետո դեռ առաջդեմ էին համարում երիտթուրքերին: Նրանց վերջին հույսերը փարատեցին 1909 թվականին տեղի ունեցած դեպքերը: 1909թ.-ին Ադանա քաղաքում տեղի ունեցավ հայության զանգվածային կոտորած, ինչի կազմակերպման և հրահանգավորման գործընթացը միանշանակ տանում է դեպի երիտթուրքերը:

Դիանա Աբգարը հստակորեն ցույց է տալիս, որ Ադանայի 1909 թվականի կոտորածը կազմակերպել և իրականացրել է սահմանադրական կառավարությունը¹: Ադանայի հայկական ջարդերին մասնկացելու համար երիտթուրքերը Թուրքիայի եվրոպական մասից 3 գունդ են ուղարկել դեպքերի վայր: Նրանց մասնակցությամբ 2-րդ ջարդը տեղի է ունեցել նույն թվականի ապրիլի 12-ին: Իթթիհադի Սալոնիկի կենտրոնի գաղտնի հրահանգն այսպիսին էր. «Կարճ ճամփան ընտրեցեք, այսինքն՝ ջարդին պակաս ձգածը զինվորները թող լրացնեն»²:

1909թ.-ին կոտորելով ընդհանուր թվով մոտ 30.000 հայերի՝ երիտթուրքերը կանգնեցին համիդյան դիրքերում: Նույն թվականին կոտորվեցին մեծաթիվ հույներ, քաղդեացիներ, ասորիներ: Այնուհետև, մեկ տարի դեռ չանցած, կոտորվեցին մեծաքանակ ալբանացիներ, մակեդոնացիներ, բուլղարներ, արաբներ և այլն: Այս դաժան հաշվեհարդարի հիմնական պատճառներից առաջինը կարելի է համարել տնտեսական գործոնը, քանզի հայերը, հույներն ու հրեաները իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի ներքին և արտաքին առևտրի մեծագույն մասը: Մինչդեռ թուրքերը վեր չէին բարձրացել պարզունակ ու փոքր խանութպանությունից³:

¹ Տե՛ս **Apcar, Diana** «Peace and no peace» Yokohama, 1912, էջ 32:

² **Հ. Ղազարյան** «Ցեղասպան թուրքը» Բերլին, 1968, էջ 15:

³ Տե՛ս **Յ. Լեխիմուս**, «Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն», ԿՊոլիս, 1919, էջ 258:

Հակամարտությունը տեղի էր ունենում երկրի տնտեսության մեջ զգալի դիրքեր նվաճած հայկական առևտրական բուրժուազիայի և տակավին նոր վեր բարձրացող, թույլ թուրքական բուրժուազիայի միջև, որն օգտագործում էր ինչպես թուրքական զանգվածի կրոնական մոլեռանդությունը, այնպես և պանթուրքիզմը՝ իր ճանապարհից ուժեղ մրցակցին վերացնելու համար: Ամերիկացի Ժոզեֆ Գոուրմանը մասնավորապես այս խնդրի վրա է շեշտադրում կատարում, երբ փորձում է բացատրել ու մեկնաբանել երիտթուրքերի կազմակերպած Հայոց Ցեղասպանությունը⁴: Ըստ նրա՝ թուրքական ներմուծման՝ 60, արտահանման՝ 40 և ներքին առևտրի 80 տոկոսը կատարվում էր հայերի միջոցով: Արդյունաբերական գործառությունների մեջ 100-ից 50-ը հունական էր, 20-ը՝ հայկական, 5-ը՝ հրեական, 10-ը՝ եվրոպական և միայն 15 տոկոսն էր թուրքական⁵: Եթե ամբողջ Օսմանյան կայսրությունում սովորող դպրոցականների թիվը 242. 000 էր, ապա դրանց կեսը՝ 120. 000-ը հայկական դպրոցների աշակերտներն էին: Կիլիկիայում 1909թ.-ի հայոց ջարդից անմիջապես հետո թուրք հետամնաց գյուղացիներն առաջին հերթին խորտակում, ջարդում, փչացնում էին հարյուրավոր շոգեքարշեր, այն «կամոնակներն ու արոտները, որ հայ գյուղացիները եվրոպայից բերել էին տվել Կիլիկիայի դաշտերը մշակելու համար»⁶: 1909թ.-ի Ադանայի կոտորածից հետո «հայերն այլևս դադարեցին հավատալ երիտթուրքերին: Պատահական չէ, որ անգլիացի Բենսոնը Ադանայի հայկական ջարդերը երիտթուրքերի քաղաքականության մեջ համարում է փորձնական: Ադանայի կոտորածի կազմակերպիչները Ջևադ Բեյը և գորահրամանատար Ռեմզի Բեյն էին: Սրանք նաև սկսեցին հրահրել ազգամիջյան բախումներ կայսրության տարածքում: Որոշ աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն Ադանայի դեպքերի կազմակերպման հարցում ընդգրկված են եղել նաև Սալոնիկի սիոնիստները⁷: Ադանայում լույս տեսնող թուրքական մի թերթում անգամ հայերին կոտորելու բացահայտ կոչ էր արվում: Դրանից հետո թուրք խուժանն անարգել զավթեց զինապահեստը: Մկան Զադե Ռիֆաթը կոտորածի մեջ Իթթիհադի խաղացած դերը չի հերքում⁸:

1909 թվականին, երբ տեղի էին ունենում Կիլիկիայի հայության կոտորածները, և գերմանական մամուլը դարձյալ փորձում էր թերահավատություն հանդես բերել Գերմանիա ներթափանցող տեղեկությունների հանդեպ՝ դրանք համարելով անգլիական «հորինվածքներ», Ռոհրբախն էր, որ դարձավ այդ ամենը ներկայացնողն ու դատապարտողը: «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության վարչության հանձնարարությամբ մեկնելով

⁴ Տե՛ս **Guttman J.** «The beginnings of Genocide», New York, 1948, էջ 12-13:

⁵ Տե՛ս **Խ. Զ. Գաբրիլյույին** «Երիտթուրքական հեղաշրջում», Մոսկվա, 1936, էջ 96:

⁶ Տե՛ս **Յ. Լեախուս**, նշված աշխատանք, էջ 258:

⁷ Տե՛ս **Dale, Darley** «Armenia and Armenians», Philadelphia, 1917, էջ 567:

⁸ Տե՛ս **Ռիֆաթ Մկան Զադե** «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը» (թարգ. թուրք.) Բեյրութ, 1938, էջ 176-184:

Թուրքիա՝ նա այստեղ համակողմանիորեն իրազեկվեց եղերական իրադարձություններից և վերադարձից հետո հրատարակեց «Հշմարտությունը Ադանայի մասին» վերնագրով մի ծավալուն հոդված: Այդ հրապարակմանը բնորոշ էին ոչ միայն զարհուրելի իրադարձությունների և դրանց հետևանքների հանգամանակից նկարագրությունը, այլև Թուրքիայի ներքին կացության, սպանդի դրդապատճառների և դրան հետևած զարգացումների վերաբերյալ ուշագրավ քննական վերլուծությունները⁹:

Հավաստելով հանիրավի կերպով «անգլիական ստեր» անվանված տեղեկությունների ճշմարտացիությունը և մատնանշելով, որ կոտորածներին զոհ են գնացել ոչ պակաս քան 25.000 հայեր, Ռոհրբախը սուր քննադատության էր ենթարկում բոլոր նրանց, որոնց կարծիքով կատարվածի համար շարժառիթ էր ծառայել հայերի «հեղափոխական գործունեությունը»: Հոդվածում ոչ պակաս ուշագրավ էր նաև հիմնական կոտորածից 10 օր անց Ադանա ժամանած երիտթուրքական կանոնավոր զորամասերի գործողությունների լուսաբանումը, որոնք ըստ էության, ավարտին հասցրին Ադանայի հայերի բնաջնջումն ու նրանց ունեցվածքի կողոպուտը: «Այդ դեպքը՝ թուրքական կանոնավոր բանակի էլիտան համարվող՝ Եվրոպայում տեղակայված զորամասերի մասնակցությունը Ադանայի կոտորածին, բոլոր դեպքերում հանդիսանում է ամենասև քիծը, որ երիտթուրքական բանակը մինչև այժմ դրոշմել է իր վահանի վրա»¹⁰, - նշում էր Ռոհրբախը:

Ռոհրբախի հոդվածը, որտեղ համալիր պարզաբանումներ էին կատարվում ինչպես Ադանայի ջարդերի, այնպես էլ զուգահեռաբար՝ Կիլիկիայի այլ շրջաններում ևս տեղի ունեցած ավերածությունների ու կոտորածների մասին, հնարավորություն ընձեռեց ոչ միայն ճշգրիտ իրազեկվել կատարվածի վերաբերյալ, այլև զգալիորեն նպաստել գերմանական հասարակության աջակցմանը հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու հարցում:

Ապացուցված է, որ Ադանայի հայության կոտորածը կազմակերպել և հրահանգավորել էր երիտթուրքերի կենտրոնը, որպեսզի իր մեղքը համիդականների վրա բարդի, որը հետագայում բացահայտվեց և մերժվեց համապատասխան հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիայի հայաշատ գավառներն այցելած Փարամազը նամակների միջոցով տեղեկացնում էր կենտրոնին. «Իմ այցելած գավառներուն մեջ Իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի, որ հայ ազգի առաջադիմությունը Իթթիհադի սաստիկ նախանձն է գրգռում»¹¹: Այս բառերից ակնհայտ երևում են նրա կանխատեսումները սպասվող կոտորածների մասին: Սապահ - Գյուլյանը գրել է, որ Ադանայի կոտորածի առթիվ «Թուրքերի ցնծությունը սահման չուներ: Պոլիս էին

⁹ St' u **Rohrbach P.** Die Wahrheit uber Armenien, „Der Christliche Orient“, 1909, էջ 145-159:

¹⁰ **P. Rohrbach** նշված աշխատանք, էջ 153:

¹¹ **Փարամազ (Մաթևոս Մարգարյան)**, «Կյանքն ու գործունեությունը», Պրովիդենս, էջ 84:

լցվել Ադանայի ջարդի բոլոր գլխավոր գործակատարները: Փողոցների երթևեկողները հպարտությամբ մատնանշում էին, որ սրճարանների խոսակցության ընդհանուր առարկա էին դարձել այն չակերտյալ հայրենասերները, ովքեր Ադանայի ջարդի ժամանակ դարձել էին նշանավոր և աչքի ընկել, յուրաքանչյուրն իր դերակատարությամբ հանդես գալով: Մի առանձին պարծենկոտությամբ և հրճվանքով ջարդարարները հայտարարում էին, որ այդ գործը իրենց բերեց պաշտոնի բարձրացման: Ադանայից տեղահանված պատասխանատու պաշտոնյաներին ավելի մեծ ռոճիկով ու բարձր պաշտոնով ուղարկում էին Բուրսա, Կոնիա, Ադրիանապոլիս¹²: Ամբողջ այս գործընթացը տեղի էր ունենում հայ կուսակցական գործիչների աչքի առջև: Գործիչներ, ովքեր շարունակում էին բարեկամություն անել երիտթուրքերի հետ: Ոչ մի ձայն, ոչ մի հակահարված հայակեր արյունարբու թշնամուն, ոչ մի պատիժ նրանց: Իսկ Ադանայի անմեղ հայերին կախաղան էին բարձրացնում, հարյուրներով բանտերը լցնում ու աքսորում:

Ադանայի ջարդի մեջ իշխանությունների խաղացած բացասական դերը բացահայտել են դեռևս ժամանակի գործիչներ Մուշեղ Էպիսկոպոսը՝ 1909 թվականին հրապարակած իր գրքովքում և Հ. Թերգյանն իր «Կիլիկիո Աղետը» փաստերով հարուստ ուսումնասիրության մեջ: Հակառակ հայ երեսփոխանների բողոքներին, Կիլիկիայի ջարդի քննության հարցը թաղվեց օսմանյան մեջլիսի թղթերի մեջ՝ երբեք չդառնալով քննարկման առարկա: Իսկ այսօր թուրքական քարոզչական գրականության մեջ ասվում է, թե իբր Ադանայի կոտորածի նախաձեռնողները հանդիսացել են հայերը: 1981 թվականի փետրվարի 17-ին թուրքական «Թերջյուման» թերթը հրապարակեց «Հայկական ասիական խնդրանքները ծնունդ տվող աղբյուրներ» պրովոկացիոն նյութը, որի առաջին երկու մասերը վերնագրված էին «Կամ Հայաստան կամ գերեզման»: Այստեղ նոր սերունդներին Ադանայի ոճիրը ներկայացվում է, որպես անխուսափելի ձեռնարկ «շփացած հայերին» կարգի հրավիրելու համար: Նման կեղծագրերի մեջ այսօրվա թուրք շովինիստները փորձում են թաքցնել իրենց նախորդների ոճրագործությունների հետքերը:

Թուրքիայի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի հանձնարարությամբ հայոց հարցի վերաբացման առիթով կազմված մի տեղեկագրում տրված է երիտթուրքական հեղաշրջումից հետո հայ հասարակական քաղաքական կյանքում տեղի ունեցած անցուղարձի հանգամանակից պատկերը: Այս փաստաթղթում նշվում էր, որ «սահմանադրական ռեժիմի վրա մեր դրած հույսերը խիստ քիչ ժամանակամիջոցի մեջ ի դերն ելան»: Ոմանք թերահավատ էին հենց սկզբից, մյուսները հեղաշրջումից վեց ամիս անց արդեն հույսները կորցրել էին: Ոմանք Ադանայի ջարդի հետևանքով սթափվեցին, մյուսները շարունակեցին իրենց լավատեսական ընթացքը, համագործակցելով երիտթուրքական իշխանության հետ:

¹² Տե՛ս Մապահ Գյուլյան, «Պատասխանատուները», Պրովիդենս, 1916, էջ 100:

1909թ.-ի Ադանայի կոտորածը ցույց տվեց Իթթիհադի պարագլուխների ու նրանց հետևորդների իսկական էությունը: Դառը ճշմարտությունը ըմբռնող հայ մարդիկ անմիջապես հասկացան, որ ի դեմս երիտթուրքերի, նրանք գործ ունեն Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության հարազատ ժառանգորդների հետ: Ադանայի կոտորածի մասին Ջեմալը խոստովանել է, թե այն արդյունքն էր «վարչական ապակենտրոնացման» հայերի ձգտման: 1909թ.-ի մայիսի 18-ին «Ժողնալ օֆիսիելում» պառլամենտի դեպուտատ Մ. Դենիս Կոշինը փաստերի հիմամբ ապացուցում էր Ադանայում և ամբողջ նահանգում իրականացված սարսափելի կոտորածներին թուրքական կառավարական զորքերի մասնակցությունը: Կոշենը գրում է աննկարագրելի գազանությունների և դաժանությունների մասին, որ Կիլիկիան քանդված և կողոպտված էր, և որ եվրոպական ռազմածովային ուժերի ներկայությունը չկանխեց կոտորածը և այլն: Նա ֆրանսիական պաշտոնական շրջաններին և հասարակական կարծիքին էր դիմում՝ կոչ անելով ձայն բարձրացնել այդ, հիրավի ողբերգական պահին¹³:

Ֆրանսիացի Գեորգ Բրեգուլը իր «Այստեղից անցել են թուրքերը» գրքում, 1911 թվականին ցույց էր տալիս, որ ֆրանսիական պաշտոնական շրջանները, մամուլում ամեն կերպ թաքցնում էին թուրքական չարագործությունը Ադանայում: Ըստ նրա՝ 1909թ.-ին Մ. Պիշոնը ֆրանսիական պառլամենտի դեպուտատների պալատում հայտարարեց Կիլիկիայում սպանված հազարավոր հայերի մասին: Իսկ ֆրանսիական թերթերում թուրքական դեսպանատունը կեղծ տվյալներ էր հրապարակում իբր չորս հազար զոհվածների մասին: «Ժամանակն է,- գրում է Գ. Բրեգուլը,- ասել ճշմարտությունը, ցույց տալ չարիքն ամբողջ մերկությամբ: Մենք ձեռնարկել ենք այս օգտակար աշխատանքը, նախապես մի կողմ թողնելով գրական ուսումնասիրությունները, որոնք կարող էին խանգարել մեր անկողմնապահությանը:

Այս հատորը հանդիսանում է իսկական փաստաթղթերի՝ հաղորդումների, նամակների, պաշտոնական հաղորդումների, ճառերի, պառլամենտական հարցապնդումների, հոդվածների և այլնի հավաքածու...»¹⁴:

Ադանայի այրունոտ դեպքերից հետո արդեն սովորական բան էր դարձել վաղվա օրվա նկատմամբ անվստահությունը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ երիտթուրքական կառավարությունը ամեն կերպ ջանում էր իր ուսերին չվերցնել Ադանայի կոտորածների պատասխանատվությունը, սակայն ի դժբախտություն երիտթուրքերի և ինչու ոչ, ի դժբախտություն նաև արդի գեղծարար թուրքական պատմագրությանը, ժամանակի բազում գործիչներ ամենայն մանրամասնությամբ գրի են առել Ադանայում տեղի ունեցածի մասին և բարեբախտաբար դրանք հասել են մեզ մեծիմասամբ, որոնք և ծառայում են արդի պատմագրությանն ու իրենցից

¹³ St'u **Boyajian Dickran H.** «Armenia: The case for a forgotten genocide», New Jersey, 1972, էջ 51:

¹⁴ Նույն տեղում, էջ 49:

ներկայացնում են շատ կարևոր արժեք: Երիտթուրքական կառավարությունն ի վերջո չհասավ իր նպատակին այս հաշվով և չկարողացավ կոծկել կամ իր ուսերից գցել Ադանայում տեղի ունեցածը:

Резюме–Резня 1909г в Адане стала портретом правительства молодых турков. Реализовывая это преступление, молодые турки попытались ввести в заблуждение мир, везде искав виновных и избегая ответственности. Но их планам не суждено было осуществиться, так как униженному христианскому обществу империи благодаря отклика турецких и иностранных рабочих все стало ясно. Политика молодого турецкого правительства сводилась к идее панисламизма, а разработанная стратегия была беспрецедентной в истории Империи. Именно поэтому объективный отзыв и раскрытие правды современных людей стало важным фактором для разрушения этой политики. И поэтому в данной статье мы попытались раскрыть эти главные факты.

Summary–The 1909 Adana massacre became the Portrait of the Young Turks' government. Committing this crime (villainy), the Young Turks attempted to lead the world astray in every way possible, everywhere seeking sinners and avoiding the responsibility. But their plans were not to turn into reality since everything became clear to the transgressed Christian society of the Empire due to the reaction of foreign and Turkish contemporary politicians. The policy adopted by the Young Turks' government was leading to the idea of Pan-Islamism, and the evolved strategy was unprecedented in the entire history of the Empire. That is why the objective attitude of the contemporaries and the revelation of the truth have become an important factor for the overthrow of this policy. Therefore in this article we have tried to elucidate these important facts.

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
«ՄՇԱԿ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ (1877-1878 ԹԹ.)**

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խ. Արքայանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

1872թ. արևելահայ իրականության մեջ ասպարեզ է իջնում ազատական գաղափարների առաջամարտիկ «Մշակ» թերթը: Պարբերականը հրատարակվում էր Թիֆլիսում Գրիգոր Արծրունու խմբագրությամբ: Վերջինս իր հրապարակախոսությամբ 19-րդ դարի 70-ական թթ. դարձավ հայ ազգային-ազատագրական զինված պայքարի ջատագովը: «Մշակի» գաղափարական առանձնահատկությունները դրսևորվում էին արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, և դրա արդյունքում միջազգային դիվանագիտության ասպարեզ իջնող Հայկական հարցի շուրջ:

Դեռևս 1876թ. «Մշակը» խորքային վերլուծության էր ենթարկում արևմտահայերի իրավագուրկ և տանջալից կացությունը: Այս թերթի էջերում ներկայացվում էին արևմտահայերի սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի բոլոր կողմերը, հստակ մատնանշելով առկա խնդիրները: Առհասարակ, մշակականները գերծ էին այն մոտեցումից, որ արևմտահայերը Օսմանյան Թուրքիայում ապրում էին բարվոք վիճակում: «Մշակը» ներկայացնում էր արևմտահայերի ծանր դրությունը, որը պայմանավորված էր մոլեռանդ ցեղերի կեղեքումներով: Կապված դրա հետ, թերթը նշում է. «Հայերը, Հայաստանում և Փոքր Ասիայում ընկած լինելով այդ անշարժ, մոլեռանդ, առաջադիմությանը անընդունակ և քաղաքակրթութեանը թշնամի տարրի ազդեցութեան տակ, բոլորովին առանձնացած և շրջապատված են վայրենի, կոդոպտիչ, հարստահարող ցեղերով»¹: Հենց այս հանգամանքի պայմաններում էլ հնարավոր չէր պատկերացնել արևմտահայերի կյանքի առաջադիմությունը և զարգացումը:

Իհարկե, կամայական բռնությունները և խառնաշփոթ վիճակը պատահական չէին, քանզի հարկ եղած պարագայում պետական իշխանությունը կարող էր հարթել տվյալ խնդիրը և ազատվել իր երկրում տիրող անկայունությունից: Սակայն թուրքական կառավարությունն ինքն էր նպաստում դրան. «Փոքր Ասիայի նահանգապետներին տերութեան կողմից գաղտնի հրաման է տրված բնակեցնել քիւղերին հայերի գյուղերի մօտ, որպէս զի այդ վերջինները հարստահարվեն, ճնշվեն, բռնադատվեն, նրանց հողերը փոքր առ փոքր անցնեն քիւրդերի ձեռքը...Քիւրդը կողոպտում է, ավազակություն է անում և հարստահարում»²: Այս ամենից պարզ է, որ թուրքական իշխանությունները օգտագործում էին քրդերին հայերի դեմ:

¹ «Մշակ», 1876, N 25:

² Նույն տեղում

«Մշակի» կողմից ուշադրության արժանացան գավառահայ բնակչության տնտեսական առաջընթացին խոչնդոտող հարցերը: Բացի այն, որ արևմտահայերի հողերը հափշտակվում էին քրդերի կողմից, դրան ավելանում է նաև այն գիտակցությունը, ըստ որի «երկրագործն աւելորդ է համարում արդիւնաբերել աւելի քան հարկաւոր իր ընտանիքի համար»³: Սակայն դա պայմանավորված էր ոչ թե ցանկության բացակայությամբ, այլ առկա իրավիճակի թելադրանքով. «Ինչ անէ, որ աւելորդ արդյունաբերէ, նա չի կարող ոչ մի տեղ վաճառահանէլ, որովհետև երկրին մէջ չը կայ յարաբերութիւններ, ճանապարհներ: Աւելորդ որ արդյունաբերէ, այդ աւելորդը կամ պետք է պաշտօնեաները յափշտակվի, կամ պետք է փտի»: Ահա այսպիսի պայմաններում գոյատևման խնդիրը գնալով ավելի էր բարդանում, որի արդյունքում «հարուստ երկրներից ինչպես Մուշից, Վանից դիմում են գաղթի»⁴:

Սրանց պետք է ավելացնել կրոնական անհանդուրժողականությունը քրիստոնյաների, այդ թվում հայերի նկատմամբ: Բավական է ներկայացնել մի միջադեպ, որը լիարժեք արտահայտում է մահմեդականների կրոնական մոլեռանդությունը. «Մալաթիայի մէջ թուրքերը մի խաչ կախ են անում մի շան վզին և պտտում են անասունը քաղաքի բոլոր փողոցների մէջ, ծաղր առնելով քրիստոնէական կրօնը և կամ մահ սպառնելով հայերին»⁵:

Արևմտահայերի վիճակը առավել պարզորոշ ներկայացնելու համար «Մշակում» տպագրվեց «Մանգումեի Էֆքեարի»⁶ հոդվածը, որտեղ խոսվում էր Վան քաղաքի հրդեհի և այնտեղ իրականացված ավերածությունների ու կողոպուտների մասին:

Թերթը հատկապես ուշադրություն էր հրավիրում այն հարցի վրա, որ Կ.Պոլսի հայությունը անհադորդ է մնում գավառահայության ծանր դրությամբ: Այս հարցի շուրջ պարբերականի քննադատական մոտեցումները ամփոփ ներկայացված են «Կ. Պոլսի և Ասիայի հայերը» հոդվածում: Գրիգոր Արծրունին հոդվածում նշում է, որ Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում բնակվող հայերը առաջնորդվում են սեփական շահերով, անտեսելով իրենց ասիական ողորմելի եղբայրներին վրա⁷: Հարկ է նշել, որ 1863թ. ընդունված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը ևս դիտում էր պոլսահայերի մենաշնորհը. «Այդ երևելի սահմանադրութիւնն, որ վայելում են Կ. Պոլսի հայերը, ոչինչ նշանակութիւն չունէր գաւառների հայերի համար: Սահմանադրութիւնը անգոր էր պաշտպանելու նրանց թիրքերի և քուրդերի

³ «Մշակ», 1876, N 27:

⁴ «Մշակ», 1876, N 27:

⁵ «Մշակ», 1876, N 38:

⁶ 1866 թ. Կ. Փանոսյանը հիմնադրում և խմբագրում է «Մանգումեի Էֆքյար» թերթը հայատառ թուրքերենով: Պարբերականը հրատարակվել է մինչև 1896 թ. և վերահրդարարակվել է 1901-1914 թթ. հայերենով:

⁷ «Մշակ», 1877, N 27:

հարստահարության և ճնշման դեմ»⁸: Գավառահայությունը, ըստ թերթի խմբագրի, զրկված էր տարրական կրթություն ստանալու իրավունքից, մինչդեռ, պոլսահայերը ուսում էին ստանում ինչպես տեղի կրթական կենտրոններում, այնպես էլ արտասահմանյան ուսումնական հաստատություններում: Իհարկե, «պոլսահայեր» ասելով Գ. Արծրունին նկատի ուներ «պոլսեցի հայ բուրժուային, հայ հարստացած կապալառույին, պոլսեցի հայ էֆենդիին, ամիրային և փաշային»⁹, որոնք իրենց տնտեսական շահերով կապված էին օսմանյան պետությանը:

Գ. Արծրունին և մյուս մշակականները որևէ լուրջ սպասելիքներ չունեին նաև միջազգային դիվանագիտությունից և արևմտահայերի վիճակի բարեփոխումը չէին կապում եվրոպական երկրների հետ: Այդ թերահավատությունը հատկապես դրսևորվեց 1876թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1877թ. հունվարի 8-ը Արևելյան հարցի լուծման համար հրավիրված Կ.Պոլսի դեսպանաժողովի կապակցությամբ: Ի սկզբանե որևէ լուրջ ակնկալիք չունենալով դեսպանաժողովի գործունեությանից, պարբերականը գրեց. «1876 տարին Թուրքիայի հայ մասին մեջ ալ խառն յիշատակներ պիտի թողու: Մի հայ խնդիր երևան ելավ, որ մի օր իւր օրինաւոր լուծում պիտի ունենայ անշուշտ, թէ ոչ Կ. Պոլսի դեսպանաժողովին մեջ, գէթ պատերազմին դաշտին վերա»¹⁰: Պետք է նշել, որ թերթի նման մոտեցումը, հետագայում հիմնավորվեց, քանզի 1876թ. դեկտեմբերին Հայոց պատրարք Ներսես Վարժապետյանի արևմտահայերի խնդիրը դեսպանաժողովում բարձրացնելու պահանջը ուղղված անգլիական պատվիրակ էլիոտին, մերժվեց: Վերջինս շտապեց հայտարարել, որ դեսպանախորհրդի նպատակը ապստամբած նահանգները խաղաղեցնել է և ոչ թե ամբողջ կայսրության բարեկարգության հարցը¹¹:

Վերոհիշյալ դեսպանաժողովը անարդյունք էր ոչ միայն արևմտահայերի վիճակի բարեկարգման հարցում, այլ՝ նաև իր ողջ էության մեջ: Դրա ձախողման պատճառը հանդիսացավ 1876 թ. դեկտեմբերի 23-ին Օսմանյան Թուրքիայում ընդունված Միդհատյան սահմանադրությունը: «Նոր օսմանների» շարժումը, որը սկսվել էր դեռևս 1865թ., սրված Արևելյան հարցի և պետության ներսում օրեցօր մեծացող արտաքին միջամտության պայմաններում կարողացավ հասնել նրան, որ գահ բարձրացած Աբդուլ Համիդը ընդունեց սահմանադրությունը¹²: Ժամանակին կատարված քայլ էր դա, որը կանխեց Արևելյան հարցի լուծումը դիվանագիտական ճանապարհով, մինևույն ժամանակ նախանշեց հարցի լուծման ռազմական ուղին:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Մշակ», 1877, N 3:

¹¹ **Ռ. Հովհաննիսյան.** , Արևմտահայ ազգային ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 112:

¹² **Ռ. Սաֆրաստյան** Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, (1876-1920թթ.), Երևան, 2009, էջ 81:

Վերոհիշյալ սահմանադրությունով հայտարարվում էր բոլոր թուրքահպատակ ժողովուրդների հավասարությունն, ուստի դեսպանաժողովն այլևս անելիքներ չունեի: Իրականում սահմանադրության հիմքերում դրված էին պանիսլամիզմի հիմնադրությունները:

«Մշակը» հանդես եկավ սահմանադրության վերլուծությամբ, հրատարակելով դրա հետ կապված մի քանի հոդվածներ: Գ. Արծրունին «Թիւքիայի սահմանադրութիւնը» հոդվածում հայտնում էր իր տեսակետները դրա գործադրելի լինելու շուրջ. «Մենք նոյնպէս մեծ յոյս չունենք և չենք ունենայ այդ սահմանադրութենից, մենք չենք կարծում, որ ամենածայրահեղ բռնաւորութեանից յանկարծ և միանգամից կարելի լինէր անցնել ազատ կառավարութեան ձևին»¹³: Թերթի համար սահմանադրությունը իրագործելի կլինէր միայն այն դեպքում, եթե Թուրքիայում լուծվէին երկու կարևոր հարցեր. մեկը դա «բոլոր հպատակներին իրենց մայրենի լեզվով, պարտադիր տարրական ուսման օրէնքի հրապարակելը» և մյուսը «դաւանութիւնների կտրապէս հաւասարութեան յայտնելը, վերցնելով մահմեդականութեանից պետական տիրապետող կրոնի նշանակութեան բոլոր իրաւունքները»¹⁴: Ըստ էության բարձրացվում էր խնդիրներ, որոնք հիմնաքարային դրույթներ էին հանդիսանում «նոր օսմանների» գաղափարախոսության համար¹⁵: Կարելի ասել, որ Գ. Արծրունին որսացել էր այն պլոնները, որոնց վրա հենվում էր սահմանադրությունը, ուստի առաջարկում էր առաջին հերթին ամատախիլ անել այդ խնդիրները:

Տեսնելով Օսմանյան պետության արատավոր դրությունը, որը առժամանակ թաքնվեց սահմանադրության քողի ներքո, Գրիգոր Արծրունին սահմանադրական կարգերի անգործադրելի լինելը ապացուցում էր մի փաստով: Սահմանադրության հեղինակ Միդհատ փաշայի և Աբդուլ Համիդի տարաձայնությունները այնքան խորացան, որ 1877թ. փետրվարի 5-ին Միդհատը ձերբակալվեց և ուղարկեց արտասահմանյան նավահանգիստներից մեկը: Այս քայլը սուլթանը արդարացնում էր՝ հիմք ընդունելով սահմանադրության 113-րդ հոդված, որի համաձայն ինքն էր որոշում թե ուր գործուղի իր պաշտոնյաներին: Այս փաստին «Մշակը» արձագանքեց հետևյալ կերպ. «Ի՞նչ է մտածում Միդհատ փաշան աքսորանքում միայնակ: Եթե սահմանադրութիւնը Թիւքիայում ապահովութիւն չի իրէն պէս մարդու համար կազմում բռնութեան դէմ, ուրեմն ինչ կարող է այդ տեսակ սահմանադրութեանից սպասել խեղճ Մշեցիին, Վանեցիին, որոնց յանցանքը կայանում է միայն նրանում, որ անչափ հլու և անպայման ծառա են իրենց տիրոջը»¹⁶:

¹³ «Մշակ», 1877, N 17:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Ռ. Մաքրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, (1876-1920թթ), Երևան, 2009, էջ 81:

¹⁶ «Մշակ», 1877, N 12:

Առավել ուշագրավ են «Մշակի» էջերում ներկայացված գաղափարները արևմտահայերի իրավունքների հետ կապված: Այդ հարցի շուրջ թերթը գրում է. «որպես ինքնուրոյն, աւելի հին քաղաքակրթութեանը պատկանող ազգութիւն, վերջապէս որպէս ազգութիւն, որ թվով նշանավոր է (Գ. Արծրունին նշում է 3 միլիոն հայ բնակչություն), որն ունի բարոյական, տնտեսական և պատմական առանձնահատկութիւններ և ապրում է իր հայրենիքում, իր պատմական հողի վրա, -հայերը իրաւունք ունեն պահանջել իրենց մի անկախ ինքնաւարութիւն, մի սէյմ, մի ազգային ժողով, բայց ոչ թե Կ. Պօլսում՝ մի որևէ պատրիարքի նախագահությամբ, ոչ թե մի որևէ կրօնական կամ խառն ժողով, այլ մի ճշմարիտ կազմակերպված քաղաքական ազգային ժողով, իրենց հայրենիքում, Հայաստանում»¹⁷:

Այս մոտեցումից պարզ է դառնում, որ թերթը մինչ ռուս-թուրքական պատերազմի սկսվելը, արդեն իսկ բարձրացնում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը բերելով լուրջ փաստարկումներ: Պարբերականը նշում է երկու կարևոր հանգամանք. մեկը դա հայերի թվական գերազանցությունն էր Արևմտյան Հայաստանի տարածքում, մյուսը այդ հողերի նկատմամբ արևմտահայերի պատմական իրավունքները: Սրանից բացի, «Մշակի» դիրքորոշման վերլուծությունից պարզ է դառնում նաև, որ Կ. Պոլսում տեղակայված հայոց ազգային ժողովի և հայոց պարիարքարանի ծավալած գործունեությունը թերիթին չէին գոհացնում: Վերջինս առաջ է քաշում այն հարցը, թե ինչու արևմտահայերի կյանքը կարգավորող հայոց ազգային ժողովը բուն Արևմտյան Հայաստանում չի գտնվում, այլ պարփակվել է Օսմանյան պետության մայրաքաղաքում:

Պետք է նշել, որ Գրիգոր Արծրունին և իր «Մշակը» քննադատաբար էին մոտենում նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրականացրած քայլերին: 1877 թ. «Մշակում» ներկայացվեց Արևելյան հարցի վերլուծությունը և դա հետ կապված Ներսես Վարժապետյանի դիրքորոշումը: 1876 թ. հուլիսի 6-ին Ներսես Վարժապետյանը հրապարակեց իր հայտնի կոնդակը, բալկանյան ժողովուրդների դեմ կովող թուրքական բանակներին կամավորներ տալու և օգնելու մասին¹⁸: Սա չվրիպեց թերթի ուշադրությունից և Ն. Վարժապետյանի գործելակերպի հետ կապված գրվեց. «հայերին խրախուսում էր անկախութեան, ազատութեան համար մարտնչող քրիստոնեաների դեմ գնալու թուրքերի հետ, որովհետև թուրքերը պաշտպանել են միշտ (ու՛մ դեմ) հայոց լեզուն, ազգութիւնը, պատմութիւնը... Բայց Թիւրքիայի հայոց պատրիարքը, որ ազգութեան ներկայացնողը և միջնորդն է տէրութեան առաջ նախ պետք է լաւ մտածէ, կշռէ և վերջը յուր օրհնած բերանից խօսքերը բաց թողնէ»¹⁹:

¹⁷ Նույն տեղում, 1877, N 17:

¹⁸ **Մարտիան**, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Օսմանյան Թուրքիայում, էջ 115-117:

¹⁹ Նույն տեղում, 1877, N 12:

Հետևաբար պատրիարքից պահանջվում էր անվերջ հնազանդության կոչերով հանդես չգալ: Սակայն պարզ էր, որ վերջինս արևմտահայերի վիճակի բարելավումը տեսնում էր միայն Բ. Դոան հետ համաձայնեցված քայլերի միջոցով, այդ իսկ պատճառով կտրուկ գործողությունների չէր դիմում:

Այնուամենայնիվ, արդեն իսկ Կ. Պոլսի դեսպանաժողովի ձախողումից հետո պարզ էր, որ Արևելյան հարցը դիվանագիտական սեղանից տեղափոխվելու էր ռազմի դաշտ: 1877 թ. ապրիլի 12-ին ռուսաց ցար Ալեքսանդր II-ը պատերազմ է հայտարարում Օսմանյան Թուրքիային: «Մշակը», որ արևմտահայությանը զինված պայքարի կոչեր էր անում մինչ պատերազմի սկսվելը, առավել ոգևորություն դրսևորեց ռազմական գործողությունների ծավալման հենց սկզբից: Այս պարբերականը մանրամասն ներկայացնում էր պատերազմական գործողությունների ընթացքը: Սակայն դրանից զատ թերթը հնչեցնում էր մարտաշունչ կոչեր՝ օգտվելու հարմար պահից և դիմելու զինված ապստամբության: Դա պայմանավորված էր թերթի այն համոզմամբ, որ Ռուսաստանը հանդես է գալիս օսմանյան տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների փրկիչ և ազատարար: «Մշակը» դրա հետ կապված գրում էն «Այժմ աւելորդ են ուրեմն դատողութիւններ: Քրիստոնեաների պաշտպանութեան գործը ընդդէմ մահմեդական տարրի բարբարոս ճնշման, այն անվերջանալի Արևելյան խնդիրը թագաւոր կայսեր կամքով կը վճռվի ոչ անորոշ դիպլոմատիկական բանակցություններով, այլ սրով ու արյունով»²⁰:

Ռուս-թուրքական պատերազմն ընթացավ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Ռուսական զորքերը կարողացան հաջողություններ արձանագրել Կովկասյան ռազմաճակատում՝ գրավելով Կարսը, Բայազետը, Էրզրումը, Մուշը: Մանրամասն ներկայացնելով Կարսի ուղղությամբ ռուսների հաղթարշավը, «Մշակը» գրում էր. «Ամեն տեղ բնակիչները բարեկամական կերպով են ընդունում ռուսաց զորքերը: Գիւղերի տանուտերերը, պատուաւոր գյւղացիների հետ դուրս են գալիս ռուսական զորքերին ընդունելու համար հացով և աղով»²¹: Սրանով Գ. Արծրունին նշում էր, որ ռուսները ամեննին էլ նվաճողական գործողություններ չէին իրականացնում, այլ տեղի հայ բնակչությունը նրանց դիմավորում էր որպես ազատարարի: Թերթը ուշադրություն էր հրավիրում ևս մեկ կարևոր հանգամանքի վրա, որը ապացուցում էր թուրքական կառավարության նենգամիտ քաղաքականությունը: Համաձայն այդ քաղաքականության թուրքական կառավարությունը օգտագործում էր իր տիրապետության տակ գտնվող տարրերին, հատկապես քրդերին հայերի զինական ուժը թուլացնելու և նրանց աջակցությունը ռուսական կողմին թույլ չտալու համար: Պարբերականի էջերում ներկայացվեց Ալեքսանդրապոլից հաղորդված հեռագիրը, որը ուներ հետևյալ բովանդակությունը. «Արշակ Տեր-Ղուկասովը մեկնելով Բայազետ, գտաւ այդ քաղա-

²⁰Նույն տեղում, 1877, N 26:

²¹ Նույն տեղում, 1877, N 28:

քը այնպիսի մի ավերակ դրության մեջ և այնքան ծածկված բնակիչների դիակներով, որոնց թիրքերը բոլորին էլ անխնայ կոտորել էին, որ զօրքին այնտեղ մնալը անհնար եղաւ»²²: Փաստորեն Թուրքիան կոտորում էր իր հպատակներին, որի համար պատասխանատվություն չէր կրում, պատճառաբանելով, որ դա արվում է անհնազանդ տարրի կողմից:

Շատ լավ տեղյակ լինելով այս ամենի մասին, «Մշակը» կոչ էր անում արևմտահայերին հետևել բալկանյան ժողովուրդների օրինակին և բարձրացնել զինված պայքար. «Թուրքիայի քրիստոնեաները չկարողանալով համբերել օսմանեան պետութեան անտանելի լուծը, զենքը ձեռքին ոտի էին կանգնում և ապստամբում էին թիրքաց բարբարոսութեան դէմ, Ասիայի քրիստոնեաները, հայերը սլավեաններից և յոյներից աւելի անտանելի ճնշման տակ գտնվելով, երբեք չէին ապստամբում և ստրկական համբերութեամբ կրում են մօղոլական լուծը»²³: Թերթը գտնում էր, որ նման տեսակի պետությունից այլ կերպ հնարավոր չէ իրավունքներ պահանջել: Պատերազմի ավարտից հետո էլ արևմտահայության ազատագրության հարցում թերթը առանձնացնում էր երկու ճանապարհ և վերլուծում վերջիններիս իրագործելի լինելը: Դրանցից մեկը, ինչպես արդեն նշեցինք, բալկանյան ժողովուրդների օրինակով զենք բարձրացնելն էր՝ «փոխանակ իրանց տան ծածկի տակ քրդերի սրից կոտորվելու, պատերազմի դաշտում մեռնելին»²⁴: Թերթի առաջարկած մյուս տարբերակի համաձայն արևմտահայերը պետք է «իրանց բողոքը յայտնէին, ուր որ հարկն էր»: Առաջին պարագայում պարբերականի դիտարկմամբ արևմտահայերը չունեին բավարար ուժ, քանզի «Յայտնի բան է, որ Աղբակայ հայերը, որոնց 24 գիւղերը մոխիր դարձան, քահանաները ձողերի վրա բարձրացան, կոտորվեցան, ջարդվեցան ...Նոյնը չէին կարող անել նաև և Վանայ հայերը, որոնց հրդեհած քաղաքի ծուխը դեռևս բարձրանում է բազմաթիւ անբաղդացած ընտանիքների սրտերից... Նոյնը չէին կարող անել նաև և Բայազէթի ու Ալաշկերտի հայերը, որոնց վիճակը ամենիս յայտնի է: Այլևս չեմ խօսում Մուշի, Բաղէշի, Տիգրանակերտի և տաճկական Հայաստանի ուրիշ շատ հայերի մասին»²⁵:

Առավել ուշագրավ է, որ «Մշակի» էջերում առաջ էր քաշվում «ցածրից» և «վերնից» իրականացվող ազատագրական պայքարի գաղափարը: Վերնից իրականացող պայքարի պայմաններում մեծ կարևորություն էր ներկայացնում պայքարի միասնական կենտրոնի առկայությանը, որը, ըստ թերթի, տվյալ շրջանում հանդիսանում էր Կ. Պոլիսը, որտեղ կենտրոնացած էր «հայոց Պատրիարքի աթոռը, այնտեղ է գտնվում Ազգային ժողովը և այնտեղ են

²²Նույն տեղում, 1877, N 49:

²³ Նույն տեղում, 1877, N 63:

²⁴ Նույն տեղում, 1878, N 41:

²⁵ Նույն տեղում:

լինում մտածող ու բանիմաց գլուխները»:²⁶ Ինչպես նկատում ենք, գավառահայությունը տվյալ ժամանակաշրջանում ի գործու չէր իր վրա վերցնելու ազատագրության գործը, դրա իրականացնողը կարող էր հանդիսանալ միայն արևմտահայ մտավորականությունը, որը կենտրոնացած էր Կ. Պոլսում: Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո թերթը խոսում էր ոչ այնքան զինված պայքարի, այլ պահանջների և բողոքի ներկայցման արդյունավետության մասին:

Հետաքրքրական են նաև «Մշակի» մոտեցումները սուլթանի հրամանի հետ կապված, որով զենքի էր կոչում 17-45 տարեկան բոլոր քրիստոնյաներին: Ներկայացնելով «Մանգումեի Էֆքեարի» և «Նոր դար» պարբերականների դիրքորոշումները այս հարցում, «Մշակը» ընդգծեց մի կարևոր հանգամանք. «Ուրիշ կողմից շատ լաւ կը լինէր եթէ թիւքահպատակ քրիստոնեաներն էլ իրաւունք ունենային զօրքի մեջ մտնելու, կամ առանձին զօրքեր կազմելու, որուհետև զինուորական պարտաւորութիւնը կրելով ամենահեշտ կերպով կարելի է ամենաանհրաժեշտ իրաւունքները պահանջել և հարկաւոր ժամանակ կարելի է և իրան պաշտպանել ճնշման դէմ»:²⁷ Պարբերականի համոզմամբ զենքի չտիրապետող քրիստոնյաներին միանգամից չէին տանի ռազմաճակատ, այլ նրանք սկզբում կսովորեին զինվորական արվեստի առանձնահատկությունները: «Մշակը» իր էջերում ներկայացրեց նաև Ազգային ժողովի նիստը, որտեղ քննարկվել է համապատասխան իրադէն: Խորեն Նարբեյը և Սսի եպիսկոպոս Մաթեոս Իզմիլյանը կարողացան շահարկել արևմտահայերի ազգային սահմանադրությունը, պատճառաբանելով, որ սահմանադրության մեջ առկա չէ զինվորագրման մասին որևէ խոսք: Ազգային ժողովի մերժումից հետո հարցը քննարկվեց նաև կրոնական հանձնաժողովում: Այս հանձնաժողովում ներկայացվեցին մի շարք փաստարկներ իրադէի մերժման համար, որոնք հիմնականում կրոնական բնույթի էին, սակայն առավել ուշագրավ էր հետևյալը. «Թուրքիան քրիստոնեաների համար հայրենիք չէ, որովհետև մեզ ներկա ժամանակներում եղող օրենքների համաձայն համարում են հող վարձողներ, և մեր ուսների տակ գտնվող հողը մեզ միայն ժամանակաւորապէս է պատկանում և յայտնի հարկի վճարման պայմանով»:²⁸ Ինչպես նշվում է թերթում, սա առաջացրեց հավաքվածների ոգևորությունը և արդյունքում սուլթանի հրամանը վերջնականապես մերժվեց:

Դեռևս ռազմական գործողությունների ծավալման ընթացքում Գ. Արծրունին արդեն խոսում էր Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակ մասին: Նրա համար առավել նախընտրելի էր, որ պատերազմից հետո Արևմտյան Հայաստանը միանա Ռուսաստանին. «Հայաստանի առաջին նպատակը պատերազմից յետոյ պետք է լինի խնդրել, ամեն միջոցներով աշ-

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, 1878, N 3:

²⁸ Նույն տեղում:

խատել Ռուսաստանին, Անդրկովկասին միանալու,-իսկ եթե իրագործելի չէ Հայաստանը յուր հույսը դարձյալ ու միայն Ռուսաստանի վրա է՝ որ նա իր հզոր ձեռքով կօգնէ հայերին իրենց անհրաժեշտ մարդկային իրաւունքները յետ ստանալու, կազատէ հայերին թուրքաց տիրապետութիւնից....», քայց եթե դա հնարավոր չլինի, ապա «որքան անպատրաստ, անընդունակ լինէր Հայաստանը ինքնորոյն կեանքին, ինքնանաւարտութեանը,-այնուամենայնիւ լաւ է թող ինքնավարութիւն ստանայ, քան թէ նորից վերադարձաց լինի թիւքաց բարբարոս, ճնշող ոչնչացնող տիրապետութեանը»²⁹:

Ինչպէս նկատում ենք, «Մշակը» ուներ հաստատուն ռուսական կողմնորոշում, այն աստիճան, որ Ռուսաստանին միանալը ավելի ընդունելի էր համարում, քան ինքնավարությունը: Թերթը ամեննին հույսեր չունէր եվրոպական երկրներից. «Վերջապէս ի՞նչ է մեզ տվել Եվրոպան, ի՞նչ օգուտ է բերել մեզ, ե՞րբ է հոգ տարել ասիական քրիստոնէաների վրա, որ այժմ իրաւունք ունենար խորհրդակցական ձայն ունենալ հայերի քաղաքական վիճակը վճռելու մեջ»³⁰: Ավելի վաղ քան Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի ստորագրումը, նախանշվում էր, որ Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանման և ասիական նահանգների հարցում իրար բախվելու էին երկու հզոր և հակադիր ուժեր՝ Ռուսաստանը և Անգլիան: Իրապէս, Անգլիան ամենամտաւեղավածն էր Թուրքիայի ասիական նահանգներում ռուսական ազդեցության աճով: Դա փաստվում է Կ. Պոլսում անգլիական դեսպան Հենրի Լեյարդի Լորդ Դերբիին ուղղված զեկուցագրում, որտեղ նշվում էր, որ ռուսական կողմի գերակայության աճը «վտանգ կսպառնա Արևելքում մեր շահերին և ազդեցությանը», որ անհրաժեշտ է առանց ուշացնելու այդ վտանգի դեմն առնել: Հակառակ դեպքում,- շարունակում է Լեյարդը, Ռուսաստանի կողմից Հայաստանի կամ նրա մի մասի անեքսիան խիստ բացասական ազդեցություն կունենա Կենտրոնական Ասիայի մահմեդական բնակչության վրա, կնպաստի Ռուսաստանի հետագա հաղթանակներին՝ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, կսպառնա Հնդկաստանի հետ Անգլիայի կոմունիկացիաներին և կվնասի բրիտանական առևտրին»³¹: Բնականաբար սրանով ամեն ինչ ասվում էր, և ինչպէս վերոհիշյալ մտքից է պարզ դառնում, սա հիմք էր հանդիսանում Անգլիայի հակահայկական գործելակերպի համար: Ուստի «Մշակը» հենց սկզբից տարված չէր եվրոպական դիվանագիտության հանդեպ հավատով, այլ՝ հայ հասարակության համար բացահայտում էր եվրոպական դիվանագիտության երկերեսանի բնույթը:

²⁹ Նույն տեղում, 1877, N 33:

³⁰ Նույն տեղում, 1877, N 30:

³¹ Գ. Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովին նախորդող շրջանում, Լրաբեր հասարարարակ գիտությունների, 1996, էջ 6:

Ահա այսպիսին էին «Մշակ» թերթի դիրքորոշումները արևմտահայության ազատագրության հարցի շուրջ Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի նախաշեմին:

Резюме- Носитель либеральных идей газета «Мшак» еще в 1876 году освещал сложное состояние западных армян под турецком владичеством, поднимал многочисленные вопросы, решение которых имело роковое значение для западных армян. Освещая Константинопольская конференция, «Мшак» подчеркнул свою русскую ориентацию, а анализируя конституцию, представил свои намерения об османской конституции. Во время русско-турецкой войны 1877-1878гг. газета призывал армян подготовиться к вооруженной борьбе, следуя балканским народам. Освобождение Западной Армении связал только с Россией.

Summary- The newspaper “Mshak”, which wore liberational ideas, in 1876 rebounded too many difficulties of Western Armenians under the domination of the Ottoman Empire. The solution of the problems had big importance for Western Armenians. The newspaper showed its position about Midhat's Constitution. During the Russian-Turkish War of 1877-1878, “Mshak” exhorted Armenians to start fighting, as Balkan nations. The freedom of Western Armenia it connected with Russia.

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ *Երևանի Պետական Համալսարան*

ԺԲ դարի առաջին քառորդի հայ-վրացական հարաբերությունները քննարկելիս հատուկ ուշադրության են արժանի Վրացական թագավորության սահմանների մեջ հայկական մի շարք տարածքների ընդգրկումը, մասնավորապես հայ Բագրատունիների երբեմնի մայրաքաղաք Անիի նվաճումը, հայ-վրացական համագործակցությունը, հայոց և վրաց եկեղեցիների միջև առաջացած դավանաբանական խնդիրները, ինչպես նաև վրացական բանակում հայերի ունեցած դերն ու նշանակությունը: Այս համատեքստում Տաշիր-Ձորագետի թագավորության անցումը Վրաստանին առանձին վերլուծության կարիք ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1918թ. Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև պատերազմի պատճառ դարձած տարածքային վեճերը, առաջին հերթին, կապված էին Լոռու հետ:

Հայ-վրացական հարաբերությունների սերտացումը ԺԲ դարում մեծապես պայմանավորված էր Վրացական թագավորության հզորացմամբ¹: Նման պայմաններում հայկական ուժերը միավորվեցին վրացական զորքերի հետ և աստիճանաբար սկսեցին ազատագրել սեփական տարածքները թյուրքական լծից²: Վրաց արքա Դավիթ Դ Շինարարը (1089-1125), ավարտին հասցնելով երկրի հյուսիսային ու արևմտյան հատվածների միավորումը, պայքար սկսեց հարավային հատվածի՝ Քվեմո (Ստորին) Քարթլիի համար, որի կազմում վրաց իրականության մեջ հասկացվում էին նաև Հյուսիսային Հայաստանի մի շարք տարածքներ՝ այդ թվում Լոռե բերդաքաղաքը, որոնք Կյուրիկյանների օրոք մտնում էին Տաշիր-Ձորագետի թագավորության կազմի մեջ: Անիի թագավորության անկումից և սելջուկ-թյուրքերի 1064 թ. արշավանքից հետո Կյուրիկյանների կենտրոն էր դարձել Սամշվիլեն, որն էլ գրավվել էր նախ Վրացական թագավորության, ապա սելջուկ-թյուրքերի կողմից: Փաստորեն այս հանգամանքը թույլ տվեց Վրացական թագավորությանը հավակնություններ հանդես բերել հայկական տարածքների նկատմամբ: Ընդ որում պետք է նշել, որ հայ ժողովուրդը ընդհանրապես դրական վերաբերմունք էր ցուցաբերում դեպի Վրաստանը, քանի որ այդ կերպ, վրաց օգնությամբ, հնարավոր էր ազատագրվել թյուրքական դաժան լծից: Փաստորեն վրաց արքան օգտվեց նաև այս հանգամանքից և հաջողություններ արձանագրեց վերոնշյալ տարածքներում:

¹ Տե՛ս Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 29:

² Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, «Երկեր», հատ.Գ, Երևան, 1977, էջ 90:

Դավիթ Շինարարի օրոք, հատկապես նրա կառավարման վերջին շրջանում, վրաց պատմությունը շաղկապվում է հայոց պատմության հետ, քանի որ Հյուսիսային Հայաստանը ընդգրկվել էր Վրացական թագավորության սահմանների մեջ, բազմակողմանի էին դարձել հայ-վրացական հարաբերությունները: Վերոնշյալ իրադարձությունների ընթացքում, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, հայերը մշտապես աջակցել են վրաց արքային իր նախաձեռնություններում³: Դավիթ Դ-ի կողմից արդեն վրաց տարածքներից դուրս հավակնություններ հանդես բերելու ընթացքում՝ հայերը էական դերակատարություն ունեցան վրացական բանակի տարած հաղթանակներում: Սակայն, ինչպես երևում է, այս ամենի հետևանքներից մեկը դարձավ այն, որ հայկական մի շարք տարածքներ զոհ գնացին Դավիթ Շինարարի նվաճողական քաղաքականությանը:

Այս առումով առաջին լուրջ հաջողությունը տեղի ունեցավ 1110 թ., երբ վրացական զորքերը գրավեցին Սամշվիլդեն⁴: Իսկ ահա 1118 թ. վրացական զորքերը ջախջախեցին Արաքս գետի ափին ձմեռող թյուրքական հորդաներին, և նույն թվականին էլ վերցրեցին Լոռե և Ագարակ բերդերը⁵: «Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւխթիս և զսահմանս իւր, և զԳագ, և զՏերունական, և զՏայուշ, և զԿայեան և զԿայծոն, և զԼոռէ և զՏաշիր, և զՄահկանաբերդ, և զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Աբասայ...»⁶: Ասպիսով՝ Դավիթ Դ-ը մեծ հաջողությունների է հասնում նաև Հյուսիսային Հայաստանում, որտեղ, Լոռեից և Ագարակից բացի, 1124 թ.⁷, տիրեց Անիին, ինչպես նաև Գագ, Տերունական, Նոր Բերդ, Մանասագոմ, Տավուշ, Մահկանաբերդ և այլ ամրոցներին: Սակայն Հայաստանի համար պայքարը այսքանով չսահմանափակվեց. Դավիթ Դ-ի հաջողությունները ընդհանուր թշնամու դեմ Վրաստանի սահմանակից հայաբնակ շրջաններում առաջ էին բերում ոգևորություն և հույս էին ներշնչում հայերին, որ Վրաստանի օգնությամբ իրենք ևս կկարողանան ոտքի կանգնել ու ազատվել օտար տիրապետությունից⁸: Համաձայն Քարթլիս-ցխովրեբայի տեղեկությունների⁹, օգոստոսի 20-ին (1124թ.) Դավթի մետ եկան Անեցի ավագների դպիրները և հայտնեցին քաղաքը նրան հանձնելու ցանկության մասին: Այս փաստը պայմանավորված էր նրանով, որ Անիի ամիրան Մանուչեի որդի Աբուլ-Ասվարը, ցանկա-

³ Տե՛ս Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 28:

⁴ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 216:

⁵ Տե՛ս Մ. Դ., *Лорджипанидзе*, История Грузии XI-начала XIII века, Тбилиси, 1974, с. 99:

⁶ Վարդան վարդապետ, Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 119:

⁷ Մասնագիտական գրականության մեջ Անիի և Հյուսիսային Հայաստանի մի շարք շրջանների գրավման հարցը որոշակի տարակարծությունների առիթ է հանդիսացել, սակայն, ըստ Հ. Մարգարյանի ուշագրավ վերլուծության այդ դեպքերը տեղի են ունեցել 1124թ., տե՛ս Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան 1980, էջ 90-92:

⁸ Տե՛ս Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 31:

⁹ Տե՛ս *Картлис цховреба*. История Грузии, Тбилиси, 2008, с. 193:

նում էր քաղաքը 60.000 դինարիով վաճառել Կարսի ամիրային: Բացի այդ, հայերը խիստ դժգոհ էին քաղաքի տիրակալ Շադադյաններից, որովհետև նրանք Անիի Կաթողիկե եկեղեցին վերածել էին մզկիթի: Դավիթ Դ-ը հավաքեց 60 հազարանոց զորք և գրավեց Անին՝ իր շրջակա տարածքներով¹⁰, իսկ Աբուլ-Ասվարը իր որդիների հետ գերի ընկավ, ընդ որում՝ այս հաջողության մեջ շատ մեծ նշանակություն ունեցավ հայերի ակտիվ աջակցությունը: Անին գրավելուց հետո Դավիթ Դ-ը այնտեղ զորք տեղակայեց, իսկ քաղաքը պաշտպանելու համար զորահրամանատարներ կարգեց Աբուլեթ իշխանին և նրա որդուն՝ Իվանեին¹¹: Իր թագավորության մեջ ընդգրկելով նաև հայկական հողերը՝ Դավիթ Շինարարը դարձավ Այսրկովկասի մեծագույն մասի տիրակալը:

Պատերազմական փայլուն հաջողություններին զուգընթաց՝ Դավիթն աշխատում էր բարեկարգել իր երկիրը և մեծ չափով աջակցում էր ավերված շրջանների վերաշինությանը: Դավիթ Դ-ը ձգտում էր երկրի տնտեսական առաջընթացն ապահովել նաև հայ բնակչության ուժերն օգտագործելու միջոցով: Վրացական պետության բարեհաճ քաղաքականության շնորհիվ լայնորեն թափ ստացավ հայերի տեղաշարժը դեպի Վրաստան, որին էապես նպաստում էր անձամբ Դավիթ Շինարարը: Նա հայերին հատկացրեց Գորի քաղաքը և պայմաններ ստեղծեց, որպիսի նրանք զբաղվեն առևտրով և արհեստներով¹²:

Դավիթ Շինարարը հարգանքով էր վերաբերում մեծաքանակ հայ բնակչությանը, իսկ հայոց և վրաց եկեղեցիների կրոնադավանաբանական տարբերությունները էական նշանակություն չունեցան այս հարցում: Դավիթը ոչ միայն հովանավորում էր հայերին, այլև աջակցում էր ավերված հայ եկեղեցիների ու վանքերի վերաշինությանը և նվիրաբերություններ էր անում ի նպաստ այդ հաստատությունների: Նմանատիպ օրինակ է Ժամանակի ակնառու հայ հոգևորական Հովհաննես Սարկավագի պատվին Դավիթ Շինարարի կողմից Հաղբատին տրված գյուղը և այգին, որի մասին խոսվում է վանքի Ս. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի արձանագրության տեքստում¹³: Հայաստանի ավատատիրական տների շատ ներկայացուցիչներ, որոնք այս

¹⁰ Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ Դավիթը ջախջախեց մուսուլմանական բանակին, որը տվեց մոտ 20.000 զոհ (**Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Երևան, 1991, էջ 276), իսկ Լ. Բաբայանը գրում է, որ քաղաքը հանձնվեց առանց մարտական գործողությունների (**Լ. Բաբայան**, նշվ. աշխ., էջ 31): Այն, որ Մատթեոս Ուռհայեցու հայտնած տեղեկությունները շատ հաճախ չափազանցված են, փաստ է, սակայն դժվար է պատկերացնել Անիի գրավումը առանց որևէ լուրջ դիմադրության, և դրանում կարելի է համոզվել ուսումնասիրելով Անիի ԺԲ դարի պատմությունը:

¹¹ Տե՛ս **Карлис иховреба**, էջ 194:

¹² Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 390:

¹³ Տե՛ս **Պ. Մուրադյան**, ԺԲ-ԺԳ դարերի հայ-վրացական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիան» թուղթը. Աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Ս. Էջմիածին, 2011, էջ 33:

կամ այն չափով պահպանել էին իրենց գոյությունը, հատկապես երկրի հյուսիսային շրջաններում, Դավիթ Շինարարի կողմից լայն հովանավորություն են ստանում¹⁴։ Նրանց մի մասը քաղաքական-տնտեսական դիրքը պահպանելու, մյուս մասը՝ կորցրածը վերականգնելու, երրորդ մասը՝ նոր դիրք ձեռք բերելու նպատակով ծառայության էին մտնում վրացական բանակում։ Այդ ճանապարհով վրաց բանակում սկսեցին կազմակերպվել հայկական զինվորական միավորումներ, որոնց թիվը անընդհատ աճում էր ի հաշիվ հայկական ավատատիրական ուժերի։

Մելջուկներից ազատագրելով Հայաստանի այս կամ այն շրջանը՝ վրաց թագավորներն այդտեղ կառավարիչ էին նշանակում հայ իշխանի, և դրանով նրանք ապահովում էին այդ շրջանների կախումը իրենցից, իսկ մյուս կողմից՝ ավելի շահագրգռում հայ ավատատիրական վերնախավին, խթանում նրա ակտիվ մասնակցությունը ռազմական գործողություններին։ Հետագայում այս ճանապարհով Մահկանաբերդցիների Արծրունիները և հատկապես Ջաքարյան ավատատիրական տան ներկայացուցիչները, շնորհիվ ռազմական հմտության, շատ շուտով աչքի ընկան վրացական արքունիքում, աստիճանաբար ձեռք բերեցին բարձր պաշտոններ և երկրի քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացին¹⁵։

Այս շրջանում Վրաստանի կազմում ընդգրկված հայկական շատ գավառներ վարչականորեն վրաց Բագրատունիների կամ նրանց ստորականների (վասալների) տիրույթ էին համարվում։ Միասնական պետականության սահմաններում, բնականաբար, միասնական էր և բանակը, իսկ դավանական տարաձայնությունները նկատելիորեն դժվարացնում էին համատեղ հաղթական գործողությունները։ Ուստի պատահական չէ, որ Դավիթ Շինարարի իշխանության տարիներին հայ-վրացական եկեղեցական քննարկումներ էին կազմակերպվում՝ փորձելով համադավանության հասնել։ Վրաց քաղկեդոնականությանը հարած հայոց վանական որոշ կենտրոններ պակաս ակտիվություն չէին դրսևորում այս հարցում։ Ինչպես Պ. Մուրադյանն է նշում, վրացերենով ու հայերենով համապատասխան գրականություն ունենալն ու առձեռն գործածումը օրախնդիր իրողություն էր¹⁶։ Դավանաբանական հարցում հայոց եկեղեցու հետ միավորման միտումները վրացական միջավայրում առավել ակնհայտորեն ի հայտ են գալիս ԺԲ դարի սկզբին։

Դեռևս 1103թ. հրավիրված Ռուիս-Ուրբնիսի եկեղեցական ժողովում ընդունված կանոններից երկուսը՝ հոդված 12-ը և 13-ը, վերաբերում էին հայերին, ուր վերջիններս կոչվում են «խաչեցարք»։ Մասնավորապես՝ 12-րդ հոդվածում սահմանվում էր. «հերձվածողներից խաչեցարները հայերն են...

¹⁴ Տե՛ս **Լ. Բաբայան**, նշվ. աշխ., էջ 32։

¹⁵ Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 24։

¹⁶ Տե՛ս **Պ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 57։

Սրանց մասին սահմանում ենք, որ (ուղղափառություն ընդունելու դեպքում) սրանց լիովին մկրտեն ինչպես հեթանոսներին, որովհետև գտանք, որ այլ մեծ եկեղեցիներն այսպես են անում, ինչպես օրինակ Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող ամբողջ արևելքի եկեղեցիները»¹⁷: Հաջորդ հոդվածով արգելվում էր միաբնակների հետ ամուսնությունն ու խնամությունը:

Դավիթը իր կառավարման վերջին շրջանում ուղղակիորեն դնում է հայ-վրացական դավանանքների միասնության հարցը, որի նպատակով հրավիրվում է հատուկ եկեղեցական ժողով: Այն պետք է տեղի ունեցած լինի Տփղիսի գրավումից հետո՝ 1123-1125թթ. ընթացքում: Ի դեպ՝ այս ժողովին հրավիրվածների թվում առաջիններից մեկը պետք է եղած լինի Հովհաննես Սարկավազը: Երկարատև բանավեճերն ապարդյուն են անցնում: Ի վերջո՝ հայ-վրացական դավանաբանական միավորումը տեղի չի ունենում:

Դավիթ Շինարարի վարած այս քաղաքականությունը հետապնդում էր մեկ նպատակ՝ Կովկասի սահմաններում ստեղծել ունիտար պետություն, որի կազմում ներառված պետք է լինեին նաև հայեր: Այս համատեքստում հետաքրքրություն են առաջացնում Դավիթ Դ-ի կրած տիտղոսները, որոնց շարքում հիշատակվում են նաև «հայերի թագավոր» (მეფე ჰაიერის) և «շահն-շահ» (შაჰნაშაჰ) պատվանունները:

Այսպիսով՝ ԺԲ դարի առաջին քառորդին հայկական տարածքներից Վրացական թագավորությանն անցան Լոռին, Տաշիրը, Շիրակի մի մասը, Անի մայրաքաղաքը, ինչպես նաև մի շարք ամրոցներ: Փաստորեն, այս նախաձեռնություններում էական դերակատարություն ունեցան իրենք՝ հայերը, որոնք ամեն կերպ աջակցեցին վրաց արքային: Իսկ ահա Դավիթ Շինարարը, իր հերթին, օգտվեց այդ հանգամանքից և ազատագրական պայքարի քողի տակ գրավեց վերոնշյալ հայկական տարածքները, ինչն էլ հիմք հանդիսացավ հետագայում այդ շրջանների նկատմամբ Վրաստանի հավակնությունների համար: Դավանաբանական տեսանկյունից, չնայած բազում փորձերին, միասնություն չհաստատվեց: Ամեն դեպքում, հայ-վրացական հարաբերություններն ավելի անմիջական դարձան, իսկ հայկական մի շարք իշխանական տներ ազդեցիկ դիրքեր սկսեցին զբաղեցնել վրաց արքունիքում:

Резюме—В истории Армении и Грузии первой четверти двенадцатого века, некоторые важные проблемы в советском анамнезе объективно не представлены в связи с идеологическим довлением. Наличие такого пробела препятствует развитию отношений двух стран, поэтому в статье сделана попытка заполнить этот пробел.

В обсуждении армяно-грузинских отношений данного периода, особое внимание следует уделять включению ряда армянских областей в состав Гру-

¹⁷ Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 124:

зии, в частности завоевание бывшей столицы армянских Багратидов Ани, армяно-грузинское сотрудничество, религиозные проблемы между армянскими и грузинскими церквями, а также роль армян в грузинской армии. В статье всесторонне представлены все эти вопросы.

Summary-Some significant problems in the Armenian-Georgian relations of the first quarter of the 12th century were not represented objectively in the Soviet historiography under the circumstances of ideological coercion. The existence of such a gap considerably prevents the development of the relations between the two countries; hence the article is an attempt to fill this gap.

c'est cale-c'est cool-c'est poche-c'est dar et ce n'est pas le japonais..

Quelques mots et expressions argotiques nécessaires à savoir

Bosser - travailler,

Bae-petite amie

Barre-fou rire

Balek-attention

Braquage -cambriolage

Bobo- douleur ou blessure légère,

Bosseuse :- travailleuse

Bouffe-salaire

Bac- le magasin

Boulot- le travail

Carton -succès

Connerie n.f.: *bêtise*,

Canard-garçon totalement soumis à sa femme

Chiller (to chill)-prendre du bon temps

Cimer-verlan de merci

Dragueuse),- séductrice

Dingue -Fou

Détaler -courir
 Se défoncer 1. **Se briser, être éventré.** 2. **Se droguer,** 3. **Se donner à fond dans une activité**
 Gonzesse - fille
 Gueule-la tête
 Gosse -garçon
 Gâcher -causer les problèmes
 Trouille -la peur
 Tronche -visage
 Ricaner -rire
 Être flippé- avoir peur
 Fric -l'argent
 Fringues - *vêtement*
 Rencard- (rendez-vous) *rendez-vous ; rendez-vous, sortie ; rendez-vous, se donner rendez-vous ; lieu de rendez-vous*
 Pot: -copain
 Ultra classe -superbe, extraordinaire
 Nana -une fille
 Seum-rage, avoir le seum
 Zouz-une fille ou une femme
 Zoulette-une fille qui s'habille a la mode
 Avoir le bon ici-avoir un bon look

Ամփոփում-Հոդվածը վերաբերվում է երիտասարդների խոսակցական լեզվին և դրան առնչվող խնդիրներին :

Այնտեղ հանգում ենք այն եզրակացությանը, որ մաքուր ու անաղարտ պահելով լեզուն, պետք է նաև հիշել բարբառը՝ վերջինս չնույնացնելով ժարգոնի կամ գոեհկաբանության հետ :

Summary-To sum up the above mentioned notes we may say that we touched upon the topic of the colloquial language of the youth and the questions concerning it. We understood that every native speaker has the opportunity of choosing any register of language adapting it to the sphere of communication. Unlike to the literary language, colloquial language is distinguished for its fast pronunciation, has free and sometimes among adults incomprehensible vocabulary.

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԵՏԱ ՕՐԴԻՆՑԱՆ

Երևանի Պետական Համալսարանի Իջևանի մասնաճյուղ

Հայաստանում երիտասարդների համար գործազրկության հաղթահարումը առաջնային խնդիր է: Որպես երկրորդ խնդիր՝ շատ երիտասարդներ չեն կարողանում կրթություն ստանալ ֆինանսական միջոցներ չունենալու, ինչպես նաև մասնագիտություն ընտրելու վերաբերյալ բավարար տեղեկատվություն չունենալու պատճառով: Իսկ երիտասարդների համար 3-րդ խնդիրը հասարակական ակտիվություն ցուցաբերելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունն է, որն ավելի ցայտուն դրսևորված է հատկապես ՀՀ-ի մարզերում: «Պետության կողմից աջակցություն կա երիտասարդների հիմնախնդիրների լուծման համար, սակայն այդ օգնությունը բավարար չէ: Պետք է «օրինակ վերցնել» անեյլան Եվրոպայի երկրներից, որտեղ ավելի շատ ֆինանսական միջոցներ են հատկացվում կրթությանը, գիտությանը և երիտասարդների հիմնախնդիրների լուծմանը»:

Երիտասարդությունը հասարակության սոցիալ-տնտեսական կարևորագույն ներուժն է, քանզի յուրաքանչյուր հասարակության ապագա զարգացումներն էապես կախված են երիտասարդության սոցիալական կողմնորոշվածություններից և հասարակական գործառնության տարբեր ոլորտներում նրանց ընդգրկվածությունից: Ըստ «ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի»՝ երիտասարդ են համարվում բնակչության 16-30 տարեկան ներկայացուցիչները:

Հայաստանում երիտասարդների թիվը 804 205 է՝ բնակչության մոտ 27,9%-ը: Պաշտոնապես գրանցված տվյալներով՝ Հայաստանում երիտասարդների միայն 29%-ն է զբաղված: Այսպիսով զբաղվածության և կրթություն ստանալու հիմնախնդիրները կարևորվում են երիտասարդների շրջանում¹:

Այսօրվա գյուղաբնակ երիտասարդը, բացի զբաղվածության խնդրից, նաև չգիտի ինչպես անցկացնել իր առօրյան: Երիտասարդների գլխավոր հավաքատեղին վթարային վիճակում գտնվող ակումբն է, իսկ հաճախ նա նախընտրում է պարզապես դրսում հավաքվել ու քննարկել իր առօրյա խնդիրները: Շատ գյուղերում անտառը գյուղի երիտասարդների զբաղվածության հիմնական աղբյուրն է, նույնիսկ այն երիտասարդ տղաների, ովքեր ավարտել են բուհը, բայց չունեն աշխատանք իրենց մասնագիտությամբ: Բարձրագույն կրթության առկայությունն աշխատելու երաշխիք չէ, և գործազրկության խնդրին հավասարապես բախվում են ինչպես բարձ-

¹ <http://www.armstat.am>

բազույն կրթություն ստացած, այնպես էլ չստացած երիտասարդները, ուղղակի բարձրագույն կրթություն ստացածներն այդ խնդրին բախվում են 4 տարի ուշացումով: Հաճախ երիտասարդներն ավելի հայտնի մասնագիտություններ են ընտրում, սակայն չեն կարող շուկայում իրացվել իրենց մասնագիտություններով: Ընդհանուր առմամբ զբաղված երիտասարդների մոտ 30%-ն աշխատում է ոչ իր մասնագիտությամբ և մասնագիտական աշխատանք չգտնելով՝ ներգրավվում է առևտրի, շինարարության և ուժային ոլորտներում: Բարձրագույն ուսումնական հաստատությունները տալիս են լավ գիտելիքներ, սակայն ոչ պրակտիկ հմտություններ, որպեսզի երիտասարդները կարողանան որպես մասնագետներ շուկայում հեշտությամբ իրացվել: Մինչդեռ պետք է լինի հակառակը՝ ուսումնական հաստատությունները պետք է ուղղված լինեն դեպի գործատուն ու շուկայի պահանջները:

Տավուշի մարզում առկա դժվարություններն ու մարտահրավերները, Հայաստանի մյուս գյուղատնտեսական մարզերի հետ համեմատած, գրեթե նույնն են: Հիմնական տարբերությունը ռիսկայնությունն է՝ պայմանավորված Ադրբեյջանի հետ սահմանակից լինելու իրողությամբ: Տավուշի մարզի երիտասարդների մոտ 30 տոկոսը գործազուրկ է, մարզի երիտասարդության շրջանում մասնագիտական կողմնորոշման ու զբավածության խնդիրը բավականին սուր է, երիտասարդներին պետք է կրթության միջոցով կողմնորոշել մարզում ավելի լավ հեռանկար ունեցող ոլորտներ²:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր հանրապետության գործազուրկ երիտասարդների 75%-ը միտված է Հայաստանից դուրս աշխատելուն: Եվ սա հատկապես վերաբերվում է Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին, ինչպես կարող է առաջին հայացքից թվալ համայնքներից արտագաղթի հիմնական պատճառը հակառակորդի կրակոցները չեն: Հիմնական պատճառը գործազրկությունն է և որպես հետևանք՝ սոցիալական դժվար վիճակը: Արտագաղթի տխուր հետևանքներից մեկը սահմանամերձ համայնքների ծերացումն է: Համայնքապետերը խոստովանում են, որ գյուղերում բնակչության 50, երբեմն ավելի տոկոսը թոշակառուներ են: Եվ դա պատահական չէ, քանի որ արտագաղթում է հիմնականում երիտասարդ և միջինից ցածր տարիքի բնակչությունը:

Համայնքների ընդհանուր ծերացումը բերել է աշխատուժի ծերացման: Սա, անկասկած, լուրջ խնդիր է, քանի որ գյուղատնտեսությունը ծանր աշխատանք է, կարիք ունի երիտասարդ ուժի: Սահմանամերձ գյուղերի երիտասարդության շրջանում արմատավորվել է այն կարծիքը, որ հող մշակելով, անասուն պահելով, հնարավոր չէ բարեկեցիկ կյանք վարել, ապահովել ընտանիքի ու երեխաների արժանապատիվ ապրուստը և ապրելակերպը: Արդյունքում երիտասարդները փնտրում են իրենց բախտը մեկ այլ երկրում,

² <http://www.tert.am/am/news/2016/07/01/tavush/2067277>

կորցնելով կապը հայրենի հողի ու երկրի հետ, փորձելով իրենց կյանքը դարձնել բարեկեցիկ: Մակայն այս կարծրատիպը անհրաժեշտ է ջարդել: Ողջ Հայաստանում, բայց առաջին հերթին սահմանամերձ համայնքներում, գյուղատնտեսության զարգացման խոչընտոտներից են սուբսիդավորման ցածր մակարդակն ու ապահովագրության բացակայությունը: Երիտասարդների համար արտագնա աշխատանքի ամենաբացասական կողմն ընտանիքից հեռու գտնվելն է: Երիտասարդների թվի նվազման այսպիսի տեմպերը նվազեցնում են աշխատանքային ռեսուրս հանդիսացող անձանց թիվը, ինչն անմիջական վտանգ է ՀՀ տնտեսության համար: Գյուղաբնակ երիտասարդների մեջ հուսալքվածներ էլ կան, իսկ ոմանք էլ «խելքը գլխին» զրուցակիցների կարիք ունեն, ում հետ կարող են խոսել գիտությունից, կրթությունից, մարդկային արժեքներից, այսինքն կա տեղեկատվության բացակայություն: Ուստի այսօր գյուղերի երիտասարդությունը կանգնած է մի կարևոր հարցի առաջ. «մնալ, թե՞ չմնալ իրենց բնակավայրում»:

Երիտասարդների հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է ունենալ և՛ պետության, և՛ համայնքների կողմից մշակված հստակ ռազմավարություն: Երիտասարդների համար չեն նախատեսվել կամ անցկացվել ժամանցի ու մշակութային բավարար քանակի միջոցառումներ: Անհամաչափ մոտեցում է դրսևորվել գյուղերում և Երևան քաղաքում բնակվող երիտասարդներին:

Երիտասարդների զբաղվածության հիմնախնդրով զբաղվում են բազմաթիվ կառույցներ՝ անմիջականորեն կամ միջնորդավորված, սակայն նրանց աշխատանքները համակարգող մարմին, որպես այդպիսին, չկա: Մի շարք միջոցառումների, այն է՝ աշխատանքի տոնավաճառների, աշխատանքային փոխանակումների ընթացքում մշտադիտարկման և գնահատման համակարգի թույլ լինելը թույլ չի տալիս, որ այդ միջոցառումները համապատասխանեցվեն երիտասարդների սպասումներին:

Աշխատանք փնտրող երիտասարդների համար ծանոթները և ընկերներն աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացման առաջնային և ամենակիրառելի աղբյուրներն են: Զբաղված երիտասարդների 60%-ը չի վստահում աշխատանքի ընդունման արդարությամբ: Զբաղված երիտասարդների 20%-ն է վստահում աշխատանքի ընդունման համակարգի արդարությամբ: Զբաղված երիտասարդների 63%-ի համար ներկայիս աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ծանոթները և բարեկամները: Գործատուների համար ծանոթների միջոցով աշխատող գտնելը վստահության երաշխիք է: Ներկայիս տնտեսական պայմաններում գործատուները վստահ չեն իրենց գործունեության կայունության վրա, ուստի նախընտրում են վստահելի և պատրաստի մասնագետներ³:

³ <http://ystudies.am/reports/1065>

Զբաղված երիտասարդների համար ծանոթությունը և անհատական կարողություններն առավել ազդեցիկ գործոններ են, քան մասնագիտական կրթությունը և մասնագիտական ունակությունները: Երիտասարդների մեծ մասը կարծում է, որ մասնագիտական կրթության ոլորտը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, և քիչ հավանական է ուսումնական ավարտելուց հետո մասնագիտական աշխատանքի անցնելը:

Հայ երիտասարդների մոտ 30%-ը ներկայումս տնտեսապես ակտիվ չէ. չի աշխատում, չի ստանում կրթություն և չի ցանկանում աշխատել: Այս խմբում գերազանցապես կանայք են: Տնտեսական ակտիվությունը ցույց է տալիս զբաղվածության ոլորտում երիտասարդի՝ ներգրավվածությանն ուղղված գործունեության ինտենսիվությունը: Տնտեսական ակտիվությունը ենթադրում է երիտասարդի՝ տնտեսական հարաբերություններում ներգրավվելու համար ներդրած ջանքերը: Տնտեսական ակտիվությունը, նշանակալիորեն կապված է ամուսնական կարգավիճակի հետ:

Աշխատաշուկայում ներգրավվելու գլխավոր նախապայմաններից է աշխատող երիտասարդի՝ տվյալ աշխատանքը կատարելու պատրաստվածությունը, այն է՝ նրա կրթվածությունը և տեղեկացվածությունը տվյալ աշխատանքային ոլորտից: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների մոտ 28%-ը դեռևս գտնվում է ուսումնական գործընթացում, այդ պատճառով գործազուրկ համարվել չի կարող: Երիտասարդների շրջանում առավել զբաղված են համարվում տնտեսագետները, պատմաբանները, մանկավարժները: Իհարկե, դա չի նշանակում, որ երիտասարդները զբաղված են իրենց մասնագիտական ոլորտներում, բայց այնուամենայնիվ, այդ մասնագիտությունների տեր երիտասարդները զբաղված են: Զբաղված երիտասարդների բանակը գլխավորում են տնտեսագետները և բանասերները: Ուրվագծվում է մի այնպիսի պատկեր, որ տնտեսագետները միաժամանակ և՛ զբաղվածների, և՛ չզբաղվածների ցուցակներում առաջատար են: Ստացվում է, որ Հայաստանում իրոք արդի է այս մասնագիտությունը, և կա այդպիսի մասնագետների կարիք, սակայն՝ ոչ այն թվով, որը թողարկում են այսօրվա ուսումնական հաստատությունները: Այս դեպքում տվյալ մասնագիտությունների սահմաններում առաջարկը բավարարում է պահանջարկը՝ միաժամանակ գերազանցելով այն, և երիտասարդները՝ տեսնելով, որ տվյալ մասնագիտության տեր մարդիկ կարողանում են զբաղվածություն ապահովել, ընտրում են այդ մասնագիտությունը, սակայն ավարտելուց հետո պարզ է դառնում, որ տվյալ մասնագիտությամբ կան ևս հազարավոր ավարտած երիտասարդներ:

Պետական ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել երիտասարդների շրջանում զբաղվածության պետական ծառայության և պետական այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածությունը: Հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երիտասարդների համար պետք է ստեղծել տեղեկատվության համապատասխան

միասնական աղբյուր, որտեղ յուրաքանչյուր երիտասարդ իր կարիքներին համապատասխան կկարողանա գտնել աշխատանք: Ավելացնել է պետք կես դրույքով աշխատատեղերի քանակը, ինչը երիտասարդներին թույլ կտա համատեղել աշխատանքը և ուսումը՝ ուսուցման տարիներին ձեռք բերելով մասնագիտական կամ ուղղակի աշխատանքային փորձ: Անհրաժեշտ է, որպեսզի բուհերի և գործարար աշխարհի միջև սերտ կապ ստեղծվի: Սակայն մինչև այսօր էլ երկուստեք դժգոհություններ կան: Գործատուները դժգոհում են, որ բուհերը իրենց պահանջները չեն կարողանում հարմարեցնել գործատուների պահանջներին, բուհերն էլ իրենց հերթին դժգոհում են, որ գործարար աշխարհը քիչ է ուշադրություն դարձնում կրթական ծրագրերի ստեղծման և իրականացման գործընթացին:

Բուհերն ու գործատուները պետք է իրար հետ համագործակցեն՝ երիտասարդների արտագաղթը կանխելու համար: Յուրաքանչյուր հասարակության ներսում երիտասարդությունն ամենաընկալունակ, ամենաակտիվ հատվածն է: Իսկ ինչ-որ բան փոխելու համար պետք է երկար ժամանակ և անդուլ աշխատանք: Ես չեմ կարծում, որ մեկ օրում մենք կարող ենք ստանալ ցանկալի արդյունք, իսկ դրան պետք է հասնել սերունդների համերաշխության միջոցով:

Եվ ես ինքս լինելով սահմանամերձ գյուղի բնակիչ, իմ ընկերների և ինձ համար այս բոլոր նշված խնդիրները երկրորդային են, մեզ համար ամենաառաջնային խնդիրը համարվում է խաղաղությունը: Եվ չմոռանաք նաև սահմանին կանգնած երիտասարդ զինվորներին, քանի որ հենց նրանք են ապահովում մեր խաղաղությունը և նրանք են մեր երկրի ապագան: Նրանք զգացել են պատերազմի ահ ու սարսափը: Ապրիլյան այն դաժան ու դժնի օրերին, ցավոք կյանքից հեռացան լավ տղաները՝ իրենց հետ տանելով հպարտ, իմաստավոր ապրելու պարզ ու հրաշալի գաղտնիքը: Իսկ մենք շարունակում ենք վայելել կյանք արժեցող խաղաղությունը: Չէ որ նրանք են կանգնած հենց կյանքի ու մահվան սահմանագծում, ու ամեն մի կրակոց վտանգում է ապագա տնտեսագետի կամ գիտնականի կյանքը: Եվ միայն խաղաղ պայմաններում է երիտասարդության առջև լայնորեն բացվում ազատ գործունեության բոլոր բնագավառները:

Резюме–В нашей стране проблема занятости молодежи является одной из ососбо ярко выраженных задач. Особенно для молодежи пограничных сельских местностей.

В этой связи, анализ статистических данных показал, что в нашей стране 75% безработной молодежи стережится к поиску работы за пределами страны, что особо характерно для Тавушского региона. И, как может показаться с первого взгляда, основной причиной является не столь агрессивные действия врага, того низкий уровень жизнедеятельности. По этому уже сегодня перед

сельской молодежи встал ярко выраженный вопрос: “остаться или интигрировать”.

Конечно же не требует доказательств то, что молодежь должна жить и работать в своем регионе. Одновременно бесспорно и то, что в этой цели не обходимо обеспечение соответственных условий. Например в Таушском регионе, в пограничных сельских местностях, первостепенную значимость имеют отрасли сельского хозяйства и туризма, и присоответственном инвестировании в них можно достичь серьезных успехов.

Таким образом, две взаимообусловленные проблемы: получения образования и занятости приобретают особую значимость для молодежи.

Для решения этих жизненно важных проблем молодежи следует иметь и на государственном, и на муниципальном уровне грамотную разработанную стратегию.

Summary-The employment problem of the youth in Armenia is a universal priority especially in border rural communities. The study of statistical data shows that 75% of unemployed youth of the republic tend to get outgoing job which especially refers to the border communities of Tavoush Marz. At first it seems that the main cause of outgoing is the enemy's shooting but in reality its main problem is the limited jobs and thereupon social low level.

Thus today there is an important problem before the youth of the villages “stay or not to stay in their settlement”. It is deniable that the youth must live and work in their own community. But the authorities must create favourable conditions. For example, in border villages of Tavoush Marz, agriculture and tourism are considered the superior fields where serious successes can be expected making corresponding investments.

So the main problem of employment and getting education become important among the youth. For solving the youth's main problems it is necessary to have both state and clear strategy planned by the communities.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՃԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱԼՄԻՐԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան Պետական Համալսարան

Ներկայումս տարբերում են կրթության 3 տարատեսակ՝ ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ:

Ֆորմալ կրթությունն իրենից ներկայացնում է հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից՝ հանգեցնելով տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման:

Ոչ ֆորմալ կրթությունը (ուսուցում) կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն է, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:

Ինֆորմալ կրթությունն անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներն են, որոնք, որպես կանոն, նախատեսված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի [1]:

20-րդ դարի 60-ական թվականներին կյանքի բոլոր ոլորտների զարգացման ընթացքի արագացմանը և հասարակական հարաբերությունների էական փոխակերպումներին զուգընթաց կրթական ոլորտ ներթափանցեց «ոչ ֆորմալ կրթություն» հասկացությունը:

Հայաստանում ոչ ֆորմալ կրթության տարածումը սկսվել է 20-րդ դարի 90-ական թվականներից և այսօր՝ երկու տասնամյակից ավելի փորձառությունից հետո, Հայաստանում ոչ ֆորմալ կրթություն իրականացնում են հասարակական կազմակերպություններն ու միջազգային կառույցները, որոնք հիմնականում զբաղվում են երիտասարդների մասնագիտական կոմպետենցիաների բարձրացման և ինքնազարգացման հարցերով:

Ոչ ֆորմալ կրթությունը կրթատեսակ է, որը ստեղծվել է ժամանակի մարտահրավերները լուծելու համար: Եթե ֆորմալ կրթությունը հիմնականում ուղղված է մարդկանց մտավոր ունակությունների զարգացմանը, էրուդիցիայի խորացմանը, վերլուծական մտածողության զարգացմանը՝ բավականաչափ գիտելիքներ ու դրանց հետ աշխատելու գործիքներ տրամադրելով, ապա ոչ ֆորմալ կրթությունն ուղղված է հիմնականում արժեքների, մոտեցումների, վարվելակերպի ձևավորմանը: Ոչ ֆորմալ կրթությունն ավելի շատ ստեղծված է քաղաքացիական խնդիրների, սոցիալական ակտիվությանն աջակցելու համար [2]:

Շատ հաճախ թյուրըմբռնում է տեղի ունենում, և ինտերակտիվությունը շփոթում են ոչ ֆորմալ կրթության հետ, ինչը սխալ է: Ամեն ինտերակտիվ, խաղային, հետաքրքիր բան չէ, որ ոչ ֆորմալ է: Սա շատ կարևոր է հասկանալ, որովհետև դրանից հետո փորձում ենք հասկանալ՝ եթե դա չէ, ապա ի՞նչ է: Ոչ ֆորմալ ուսուցումը առանձնահատուկ կրթատեսակ է առանձնահատուկ խնդիրներ լուծելու համար: Այն երբեք չի կարող փոխարինել ֆորմալ կրթությանը, սակայն առավել լավ լուծում է մարդու անհատական ու սոցիալական խնդիրները [3]:

Ոչ ֆորմալ կրթությունը ներառում է կրթական համակարգի բոլոր ձևերը, որոնք ապահովում են մասնագիտական կարգավիճակի փոփոխում: Ոչ ֆորմալ կրթությունն իրականացվում է անկախ նախնական կրթության մակարդակից: Այս ձևը սովորաբար կապված է մարդու սիրողական նախասիրության հետ և կոչված է իր մեջ զարգացնելու մշակութային արժեքների իրականացումը:

Ինֆորմալ կրթություն ասելով պետք է հասկանալ կյանքի ընթացքում ձեռք բերված ուսուցումը, որն իրականացվում է շփման, զանգվածային լրատվության միջոցով՝ ելնելով սեփական և ուրիշների կյանքի փորձի վրա: Այսպիսով՝ «համալսարան են դառնում ոչ միայն ուսուցման լսարաններն ու գրադարանները, այլև կոլեգաները, ընկերները, երեխաները, զանգվածային լրատվության միջոցները»:

Թվարկված երկու տիպերը կրթության ժամանակակից պայմաններում սկսում են փոխադարձաբար հատվել՝ ապահովելով ուսուցման իրական անընդհատ աճը, որի իրականացումը հիմնվում է կրթատեսակների «հորիզոնական ինտեգրացիայի» վրա, այսինքն՝ կրթության հարաբերակցությունը:

Ոչ ֆորմալ կրթության պայմաններում դասափորձերն անցկացվում են հետևյալ ձևերով՝ **ուղղորդում, վարժանք /թրեյնինգ/, խորհրդատվություն և մոդերացիա:**

Ուղղորդում: Այս ձևով շեշտը դրվում է նոր գիտելիքների փոխանցման և յուրացման վրա: Ուսուցման այս ձևը ներառում է ոչ միայն դասախոսությունների ծրագրումը և կառուցումը, այլ իրական և կոնկրետ իրադրությունների օրինակի վրա ցույց է տրվում ներկայացված տեսության ու գործնականի կապը:

Վարժանք: Այստեղ ուշադրության կենտրոնում պրակտիկ գործողություններն են: Ուսանողները կատարում են որոշակի առաջադրանքներ, որոնք այնուհետև քննարկվում են:

Խորհրդատվություն: Վերջինիս համար տիպական է այն, որ դասախոսի գիտելիքները հարաբերակցվում են ուսանողների հարցերի և խնդիրների հետ: Ի տարբերություն ուղղորդման՝ այստեղ գլխավորը ոչ թե առարկայի կառուցվածքն է, այլ ուսանողների առջև դրված հարցերը և իրադրությունները: Փնտրելով որոշակի հարցերի պատասխանները՝ դասախոսը սկսում է հաղորդել այնպիսի գիտելիքներ, որոնք կարող են կիրառվել: Այսպիսով՝ խորհրդատվության պարագայում դասախոսի գլխավոր խնդիրն ուսանողների հարցերին պատասխանելն է:

Մոդերացիա: Մա նույնպես ընդգրկում է ուսանողների կոնկրետ խնդիրները: Այստեղ այնպիսի պայմաններ են ստեղծվում, որպեսզի սովորողները կարողանան կողմնորոշվել իրադրություններում, մտածել հնարավոր այլընտրական գործողությունների մասին: Տվյալ դեպքում դասախոսը հանդես չի գալիս որպես գիտելիքների փոխանցող, այլ իր վրա է վերցնում իրազեկ գրուցակցի դերը:

Ոչ ֆորմալ կրթության պարագայում դասընթացի մասնակիցները, ի տարբերություն ֆորմալ կրթության (մանկավարժ, դասախոս), գործ ունեն դասընթացավարի կամ թրեյների հետ, որը հիմնականում կազմակերպում և համակարգում է ուսումնական գործընթացը՝ ելնելով մասնակիցների կարիքներից ու հետաքրքրություններից: Չնայած այս հանգամանքին՝ միջանձնային հարաբերությունների մակարդակում դասընթացավարն իրեն դրսևորում է որպես ընկեր, խորհրդատու և ոչ թե պարզապես գիտելիքների փոխանցող: Ինչպես ֆորմալ կրթության մեջ, այստեղ ևս դասընթացավարի անձնավորությունը մեծ նշանակություն ունի սովորողների նոր գիտելիքների ու կարողությունների յուրացման գործում:

Հետաքրքրական ու ուշագրավ է հատկապես ոչ ֆորմալ կրթության և անձնային զարգացման կապը, որն առավել պարզորոշ ընթերնելու համար հարկավոր է պատկերացում կազմել ոչ ֆորմալ կրթության սկզբունքների մասին.

1. Ուսուցողական գործընթացի ծրագրումը, որը կազմվում է ուսուցանողների կողմից՝ ելնելով դասընթացի նպատակներից և խնդիրներից: Սակայն այն դիտարկվում է որպես նախնական առաջարկ և ենթակա է փոփոխության՝ հաշվի առնելով մասնակիցների ցանկությունները, հետաքրքրությունները և ակնկալիքները:

2. Մասնակցության բնույթը, որը կամավոր է: Մասնակիցներն իրենք են որոշում, թե գործընթացի որ մասին են ցանկանում մասնակցել:

3. Ուսուցանվող գիտելիքների և հմտությունների բնույթը: Ուսուցանման գործընթացում հավասար ուշադրություն է դարձվում մասնակիցների մտավոր, զգայական, ֆիզիկական ոլորտներին (այսպես կոչված՝

«համակողմանի» մոտեցում): Ուսուցանման գործընթացն իրականացվում է հատկապես մասնակիցների մոտեցումների, վարվելակերպի մոդելների, արժեքային համակարգի, կարծրատիպերի հետ:

4. **Գիտելիքի ստացման /փոխանցման/ ձևը**, որը ձեռք է բերվում ուսուցման գործընթացին ուղղակի մասնակցելու արդյունքում: Գործընթացն իրականացվում է համապատասխան գիտելիքին և հմտությանը լիարժեք տիրապետող անհատի՝ ուսուցանողի կողմից: Ի տարբերություն հիերարխիկ «վերևից ներքև» մոդելի՝ այս դեպքում գիտելիքը հիմնականում ստացվում է «հորիզոնական» եղանակով (հավասարը՝ հավասարին մեթոդով):

5. **Ուսուցանման արդյունավետության գնահատում**, որն իրենից ներկայացնում է մասնակիցների կողմից անցկացվող ինքնագնահատումը (մասնակիցն ի՞նչ ստացավ տվյալ կրթական գործընթացին մասնակցելու արդյունքում) և գործընթացի արդյունավետության գնահատումը (ուսուցանման կազմակերպման որակը և համապատասխանությունը մասնակցի սպասումներին): Քննություն, թեստ գաղափարները չեն կիրառվում: Չեն կիրառվում մրցակցային խրախուսման մեթոդները, խրախուսվում են փոխօգնությունը և թիմային ոգին: Դասընթացի վերջում բոլոր մասնակիցներին տրվում են միանման «մասնակցության հավաստագրեր» [4]:

Ոչ ֆորմալ կրթության պայմաններում երիտասարդների անձնային աճի ապահովման համար ցանկալի է որոշ կոնկրետ քայլեր ձեռնարկել.

1. Հասկանալ անձնային աճի գերակա կարևորությունը երիտասարդների կյանքում:

2. Զարգացնել երիտասարդների մտավոր և տեսահորիզոնները, որպեսզի տեսանելի լինեն աճի հնարավորություններ տրամադրող բազմազան ուղիները: Էական է հասկանալ, որ դեպի լեռան գագաթը շատ կաժաններ են տանում, բայց դրանցից պետք է ընտրել ամենաճիշտն ու հոգեհարազատը:

3. Վերլուծել ներկայիս վիճակը՝ իր լավ ու վատ կողմերով, հասկանալ, թե որոնք են զարգացման առաջնային ուղղությունները:

4. Գտնել ռեսուրսներ, դպրոցներ, մարդկանց, ուսանողական մեթոդներ, որոնք անհրաժեշտ են զարգացման որոշված ճանապարհով գնալու համար և փորձել աջակցություն ստանալ:

5. Կազմակերպել նախապես որոշված զարգացման նպատակների իրագործումը չմոռանալով հընթացս կատարել ուղու ճշգրտումներ, քանի որ անձնային աճը որպես կենդանի գործընթաց, երբեմն դուրս է գալիս մեր պատկերացրած շրջանակներից [5]:

Այսպիսով՝ ոչ ֆորմալ կրթությունը յուրահատուկ հարթակ է, որտեղ երիտասարդները անցկացնում են ոչ միայն հետաքրքիր ու արդյունավետ ժամանակ, այլև կատարելագործում են իրենց անձնային որակները, բարձրացնում են ինքնագնահատականը, ձևավորում են բարձր կամային որակներ, դրսևորում են նախաձեռնողականություն և սոցիալական քաջություն տարբեր

իրավիճակներում, կարողանում են արագ կողմնորոշվել մշտապես փոփոխվող պայմաններում, դառնում են առավել տոլերանտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված՝ 1, 1.3, 1.4, 1.5 կետեր:
2. Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգ. ՀՀ Կառավարության 2006թ-ի դեկտեմբերի 14-ի N 50 որոշման հավելված:
3. Ա. Թադևոսյան, Զ. Լավյան, Ա. Մինասյան, Ոչ ֆորմալ կրթության ներածություն. Ձեռնարկ ուսուցանողների համար, Երևան, 2014 թ.:
4. Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ. ՀՀ Կառավարության որոշում, 14 դեկտեմբերի 1998 թ-ի N 798:
5. Երիտասարդները հանուն հասարակության. Ձեռնարկ երիտասարդական աշխատողների համար, Երևան, 2016թ.:

Резюме-Неформальное образование является уникальной платформой, где молодые люди проводят не только захватывающее и продуктивное время, но и улучшают их индивидуальные качества, повышают самооценку, у них образуются высокие моральные качества, проявляют инициативу и социальную смелость в различных ситуациях. Неформальное образование является не заменой, а дополнением к формальному образованию.

Summary-Non-formal education is a unique platform where young people spend not only an interesting and productive time, but also improve their personal qualities, increase self-esteem, form high moral qualities, take initiatives and display social courage in different situations, they're able to be quickly oriented in permanently changing conditions. Non-formal education can't replace formal education but they supplement each other.

ՄԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Խ. Արմյանի անվան Հայկական պետական Մանկավարժական համալսարան

Ե.Շվարցի հակաֆաշիստական հեքիաթը

«Երբ Լանսելոտ ասպետը հասավ այն քաղաքը, որը հայտնի էր իր դաժան վիշապով, ի զարմանս իրեն, լսեց վիշապի բարության մասին: Նախ վիշապը համաճարակի ժամանակ քաղաքի մոտակայքի լիճը տաքացրել էր և եռացրած ջուր ապահովել բնակչության համար՝ փրկելով նրանց համաճարակից, իսկ երկրորդ՝ նա ազատել էր քաղաքը գնչուներից, որոնք խանգարում էին քաղաքաբնակների խաղաղ կյանքին:

-Բայց գնչուները բարի մարդիկ են,- զարմացավ Լանսելոտը:

-Ի՞նչ ես խոսում, ի՞նչ հիմարություն,- պատասխանեց քաղաքագլուխ Շարլեմանը: Ես, իհարկե, կյանքում ոչ մի գնչուի չեմ հանդիպել, բայց դեռ դպրոցում եմ անցել, որ նրանք ահավոր վատ մարդիկ են: Նրանք բնության ճամփորդներ են, թշնամի յուրաքանչյուր հանրապետական կառուցվածքի համար: Նրանց երգերը զուրկ են տղամարդկայնությունից, իսկ գաղափարները ավերիչ են: Նրանք գողանում են երեխաների, նրանք թափանցում են ամենուրեք, նրանք մեզ պետք չեն, և բացի այդ, վիշապն էլ է այդ կարծիքին»¹:

Կարծրատիպերի ու նախապաշարմունքների մասին լսելիս շատերը դրանք պատկերացնում են որպես «մարդու մեջ հստակորեն ամրապնդված որևէ բան»: Իհարկե, մենք կարող ենք ինչ-որ կերպ մեկնաբանել վերջիններս, սակայն ամբողջական պատկերացում դրանց մասին չենք կարող տալ: Ըստ էության, դրանց առկայությունը բավականին տեսանելի է անգամ ոչ մասնագետին. վառ օրինակ է վերոնշյալ առասպելը: Մի շարք հասկացությունների նման ևս կարծրատիպերն ու նախապաշարմունքները տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ են մեկնաբանվել, սակայն այնուամենայնիվ այսօր հայալեզու գրականության մեջ հազվադեպ կարելի է գտնել անհրաժեշտ ակադեմիական տեղեկատվություն կարծրատիպերի և նախապաշարմունքների մասին: Չնայած այն հանգամանքին, որ հայ հեղինակների, մասնագետների կողմից կարծրատիպ տերմինը բավականին շատ է օգտագործվում (տերմինի հայերեն թարգմանությունն է) ստերոտիպ տերմինը առավել ճիշտ է համապատասխանում դրա բովանդակությանը: Այն առաջին անգամ կիրառվել է 1922թ-ին Ուոլտեր Լիպմանի կողմից, որն օգտագործեց այն, որպեսզի նկարագրի այս կամ այն երևույթի մասին մարդկանց միևնույն կերպ մտածելու գործընթացը: Հետաքրքիր է, որ այս տերմինը սկզբնական շրջանում բնութագրվում էր որպես որևէ օբյեկտի պատճենահանված տարբերակ՝ բազմատպաքանակ հրատա-

¹ **И. С. Кон**-Психология предрассудка (О социально-психологических корнях этнических преубеждений), М, 1966, стр. 1-2.

րակությունների տպագրման համար: Լիպմանը նշում էր, որ «կարծրատիպերը մշակույթի հստակեցված, սխեմատիկ, դետերմինացված դիրքորոշումներ են, որոնք տնտեսում են մարդու կամ խմբի ջանքերը բարդ սոցիալական օբյեկտներն ընկալելիս և պաշտպանում այդ անձի կամ խմբի արժեքները, դիրքորոշումներն ու իրավունքները», իսկ Լվինսոնը և Մանֆորդը 1951թ-ին կարծրատիպը ներկայացնում էին որպես «մարդու բարոյական դեֆեկտ», Էշմորը և Դել Բոկան դա բնութագրում էին որպես «մարդկանց խմբի անձնային հատկանիշների մասին պատկերացումների կոմպլեքս»: Իր «Նախապաշարմունքների բնությունը» գրքում Օլպորտը 1954թ-ին, ժամանակից առաջ ընկնելով, նշում էր, որ կարծրատիպը համոզմունքների չափանգացում է, որը կապված է կոնկրետ կատեգորիայի հետ²: Իհարկե այս բնութագրականներից յուրաքանչյուրը արտահայտում է հեղինակի յուրատիպ մոտեցումը, իսկ հայ հեղինակներից այն բնութագրվել է Ա. Նալչաջյանի կողմից «**Կարծրատիպը** սոցիալական դիրքորոշումների այն տեսակն է, երբ մարդը հաշվի չի առնում անհատական տարբերությունները և պնդում է, թե իբր այս կամ այն խմբի բոլոր անդամները նույն կերպ են գործում կամ մտածում»: Գրականության մեջ տարբեր հեղինակներ առանձնացնում են կարծրատիպերի մի խումբ տեսակներ՝ մշակութային և ինդիվիդուալ կարծրատիպեր, դրական ու բացասական, խորքային և մակերեսային, հավերժ կարծրատիպեր և այլն: **Մշակութային կարծրատիպը** հստակեցված պատկերացումների ու հավատալիքների ամբողջությունն է, որն ընդունված է տվյալ մշակույթի բոլոր ներկայացուցիչների կողմից, իսկ **ինդիվիդուալ կարծրատիպը** առանձին անհատի պատկերացումն է կոնկրետ խմբի մարդկանց այս կամ այն որակների մասին: Այս տարբերությունը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ մեթոդոլոգիական տեսանկյունից: Էշմորը և Դել Բոկան գտնում էին, որ, օրինակ, գնահատման սանդղակները չափվում են հիմնականում մշակութային կարծրատիպերով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ անհատական կարծրատիպը կարող է հաճախ չհամընկնել մշակութային կարծրատիպի հետ: Այդ դեպքում դրա ուսումնասիրությունը թույլ կտա հասկանալ, թե անհատը իր մշակույթի խմբի հետ արդյոք կիսում է նույն տեսակետը թե ոչ, կամ արդյոք ունի այլ կարծրատիպեր, որոնք կախված չեն տվյալ խմբի հետ նրա վերաբերմունքի հետ: Հաճախ այս երկու կարծրատիպերի բախումը կարող է դառնալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կոնֆլիկտի առաջացման պատճառ: Հետևաբար դրանց լուրջ ուսումնասիրությունը կարող է բավականին մեծ նշանակություն ունենալ միջանձնային, միջխմբային կոնֆլիկտների լուծման հարցում: Հաճախ նկատելի է, որ կարծրատիպերի մասին խոսելիս մենք շատ ենք շեշտում դրանց աֆֆեկտիվ՝ դրական ու բացասական բնությունը մասին: Դրանց հիմնա-

² **Тодд Нельсон**-Психология предубеждений: Секреты шаблонов мышления, восприятия и поведения : Москва , 2003 , стр. 18-19.

կանում վերագրվում են «վատ» հատկանիշներ՝ ագրեսիա, ալարկոտություն և այլն: Ըստ երևույթին այն արդեն իսկ մարդկանց կողմից ընկալվում է որպես բացասական բովանդակություն ունեցող երևույթ: Այն դրական կամ բացասական ներկայացնելու փոխարեն կարելի է դիտարկել որպես անհատին, խմբին բնորոշ առանձնահատկությունների ամբողջություն: Իհարկե, դրանք կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական՝ օրինակ ԱՄՆ-ում հստակ դրական վերաբերմունք կա ասիացիների նկատմամբ, նրանք համարվում են չափազանց խելացի³: Կցովան առանձնացնում է նաև խորքային և մակերեսային կարծրատիպեր⁴:

Մակերեսային կարծրատիպերը այս կամ այն ժողովրդի մասին պատկերացումներն են, որոնց հիմնված են պատմության, միջժողովրդական, միջքաղաքական հայացքների վրա, և որոնք փոփոխվում են՝ կախված հասարակության և աշխարհաքաղաքական փոփոխություններից: Դրանց շարունակական լինելը պայմանավորված է հասարակության ստաբիլությամբ: Ի տարբերություն դրանց, **խորքային կարծրատիպերը** անփոփոխ են: Դրանք չեն փոխվում ժամանակի ընթացքում և առանձնանում են իրենց զարմանալի հստակությամբ և իրենցից շատ մեծ արժեք են ներկայացնում: Դրանք ուսումնասիրելով կարելի է մի շարք եզրահանգումներ անել տվյալ ժողովրդի մասին: Իհարկե, կարծրատիպեր բազմաթիվ այլ տեսակներ ևս կան, օրինակ Վ. Վ. Կրասնիխը առանձնացնում է ևս 2 տեսակ՝ **կարծրատիպ-կեպար, կարծրատիպ-իրավիճակ**⁵՝ մեղու-աշխատասեր, արագիլ-կաղամբ և այլն, որոնք սակայն քիչ ուսումնասիրված են: Գոյություն ունի նաև «**հավերժ կարծրատիպ**», հասկացությունը, որը հանդիսանում է մշակութային և ազգապահպանման հենասյուն: Այսպիսիք են, օրինակ՝ կին-տղամարդ, դրախտ-դժոխք, խումբ-անձ, ցանկություն-հնարավորություն, որոնք իրականում հավերժ չլուծվող խնդիրներ են: Հաճախ երևույթների մեկնաբանման համար առավել արդյունավետ է տալ դրանց բնորոշող առանձնահատկություններ: Կարծրատիպերն առանձնանում են մի շարք հատկանիշներով: Ըստ **Վիկենտինի** կարծրատիպերը հստակեցված են, բացարձակապես ձևավորված, հասունացած դիրքորոշումներ են սեփական ես-ի ներսում, որոնք ազդում են մարդու կայացրած որոշման վրա, վերաբերվում են հատկապես մտքերի ու զգացմունքների աշխարհին, և մեծ ազդեցություն ունեն իրականության վրա: **Օ.Ուեշը** նշում էր, որ դրանք կայուն են (շատ դժվարությամբ են ենթարկվում փոփոխությունների), կրում են էմոցիոնալ բնույթ, վերաբերում են կոնկրետ անհատի և հանդիսանում են «ամբողջական նկարներ մարդու

³ **Тодд Нельсон**–Психология предубеждений: Секреты шаблонов мышления, восприятия и поведения : Москва, 2003 , стр . 21-22

⁴ **Кцоева Г.У.** Опыт эмпирического исследования этнических стереотипов // Психологический журнал. № 2, 1986 , стр. 29-30

⁵ **Арутюнян Ю.В., Дробижева Л.М., Сусоколов А.А.** Этносоциология. М., 1999, стр. 56-58.

գլխում»: Դրանք պատրաստի կերպով ներկայացվում են ինդիվիդի սոցիալիզացիայի գործընթացում և ոչ բավարար անձնական փորձի դեպքում դժվարությամբ են ընկալվում և խեղաթյուրում են իրականության ընկալումը⁶: **Նախապաշարմունքներ** հասկացությունը բացատրվում է տարբեր կերպ՝ կախված, թե ինչպես ենք վերլուծում տերմինը: Գարդները 1994թ-ին պնդում էր, որ նախապաշարմունք բառը կարելի է հասկանալ որպես ինչ-որ բանի մասին հստակ ամրապնդված վճիռ, պատկերացում անհատի, խմբի, մարդկանց ամբողջության մասին: Այս պարագայում արդեն խոսում ենք այս կամ այն երևույթի մասին գնահատողական՝ դրական կամ բացասական բնութագրման մասին: Ըստ Ա. Նալչաջյանի նախապաշարմունքները այն սոցիալական դիրքորշումներն են, որոնք այնպիսի վճռականությամբ ու համառությամբ են պաշտպանվում անհատի կողմից, որ այլևս չեն փոխվում նոր տեղեկությունների և փորձի ազդեցության տակ⁷: Դրանց ի հայտ գալու հիմնական պատճառը տեղեկատվության պակասն է: Հենց սա էլ պատճառ է հանդիսանում, որ նախապաշարմունքները հաճախ ասոցացվում են գնահատողական մոտեցման հետ⁸: Նախապաշարմունքները, հանդես գալով որպես անհատական և հասարակական հոգեբանության տարր, աստիճանաբար դառնում են անհատական և հասարակական գիտակցության անհրաժեշտ բաղադրամաս: Դրանք ունեն հարմարողական-կարգավորիչ դեր՝ ապահովում են սուբյեկտի գործունեությունը ըստ հասարակական նորմերի, ինչպես նաև կատարում են պաշտպանողական ֆունկցիա՝ դուրս վանել, «ուրիշին» փոխանցել բացասականը և իր մտածելակերպն ու գործելակերպը դարձնել փակ համակարգ, պաշտպանել այն ոտնձգություններից: Նախապաշարմունքների վերացման համար ստեղծվել ու ստեղծվում են բազմաթիվ պայմաններ՝ սոցիալական անհավասարության վերացումը, հասարակական հոգեբանության և գիտակցության գիտական վերլուծությունը և դաստիարակչական աշխատանքը և այլն: Պապկովը իր աշխատությունում առանձնացնում է Ռ. Բրիսլինի (Brislin R. Increasing the Range of Concepts in Intercultural Research: The Example of Prejudice//Intercultural Theory and Practice/Ed. by W. Davey. Washington, D.C., 1979.) տեսակետը, որի մեջ նշվում է նախապաշարմունքների հետևյալ դասակարգումը.

✓ «Անհիմն» նախապաշարմունքներ համաձայն որոնց՝ այլ խմբի ներկայացուցիչները, խումբն ամբողջությամբ «ցածր» են և հետևաբար՝ ավելի վատ:

⁶ В. Д. Попков- Стереотипы и предрассудки: Их влияние на процесс межкультурнохой коммуникации: Москва, 2002 , стр. 185.

⁷ Ա. Նալչաջյան-Սոցիալական հոգեբանություն, Երևան 2004, էջ 251:

⁸ Тодд Нельсон- Психология предубеждений: Секреты шаблонов мышления, восприятия и поведения : Москва , 2003 , стр 23-24.

✓ «Միմլոյիկ» նախապաշարմունքներ-այլ օտար խմբի նկատմամբ նեգատիվ զգացմունքներ, քանի որ դրանք ընկալվում են որպես վտանգ սեփական մշակույթի արժեքների պահպանման համար

✓ «Տոկենիզմ»-Սա այն նախապաշարմունքների դրսևորումն է, երբ որևէ խմբին ցուցադրական հարգանք են շնորհում, որպեսզի ստեղծվի արհեստական հավասարություն: Սա ենթադրում է իրական բացասական վերաբերմունք օտար խմբի նկատմամբ, բայց այս դեպքում խմբի անդամները չեն ուզում ընդունել դա և գիտակցաբար մերժում են

✓ «Երկար ձեռք» նախապաշարմունքներ- այլ անհատի, խմբի նկատմամբ դրական վերաբերմունքի դրսևորումն է՝ ելնելով իրավիճակից. օրինակ պատահական ծանոթություն կամ պաշտոնական հանդիպում

✓ «Փաստացի հակակրանք»- իրական, արտաքինապես տեսանելի բացասական վերաբերմունքն է օտար խմբի անդամի նկատմամբ այն դեպքում, եթե իրոք այդ օտար խումբը կամ օտար խմբի մասնակցի վարքը չի ընկալվում խմբի կամ խմբի մասնակցի հետ

✓ «Ծանոթ և անծանոթ» նախապաշարմունքներ - նախապաշարմունքների այս ձևը խոսում է այն մասին, որ օտար խմբի անդամի հետ շփվելիս այս կամ այն աստիճանի անհարմարություն է ի հայտ գալիս, և, հետևաբար, ավելի շատ նախընտրություն են տալիս փոխհարաբերություններ ստեղծել սեփական խմբի անդամների հետ: Սա նախապաշարմունքների ամենացածր դրսևորումն է⁹:

Իհարկե, ինչպես կարծրատիպերի պարագայում, այս դեպքում ևս նախապաշարմունքների բազմաթիվ տեսակներից ներկայացվեց միայն Բրիսլինի տեսակետը, քանզի նրա մեկնաբանությունը առավել հետաքրքրական է: Շեֆերը նշում էր, որ նախապաշարմունքները հանդիսանում են համընդհանուր պատկերացումներ, որոնք ինչ-որ կերպ բնորոշ են մարդկանց այս կամ այն տիպի խմբերին: Դրանք սպեցիֆիկ են, քանի որ ուղղորդված են մարդկանց սահմանափակ խմբին, որը կարող է լինել սահմանափակ՝ կապված էմպիրիկ նշանների հետ՝ սեռ, ռասսա, մաշկի գույն, և որ առավել տարածված է և կախված ընդհանուր ընդունված ինչ-որ բացասական պատկերացումից¹⁰: Կարծրատիպեր և նախապաշարմունքներ հասկացությունները մեկն են այն բազմաթիվ հետաքրքիր երևույթներից, որոնք թերևս շատ քիչ են ուսումնասիրվում և հազվադեպ հայտնվում ուշադրության կենտրոնում: Սակայն այսօր ավելի շատ են սկսել ուսումնասիրել կարծրատիպերի ու նախապաշարմունքների էությունը, քանի որ պարզ է

⁹ В. Д. Попков-Стереотипы и предрассудки: Их влияние на процесс межкультурной коммуникации: Москва, 2002, стр. 189-189.

¹⁰ Schafer B. Entwicklungseinheiten der Stereotypen- und Vorurteilstvorschung // Vorurteile und Einstellungen: Sozialpsychologische Beiträge zum Problem sozialer Orientierung / Hrsg. von B. Schafer, F. Petermann. Köln, 1988.

դարձել, որ միջմշակութային մի շարք խնդիրների լուծման համար դրանց անհարժեշտությունը շատ մեծ է: Բազմաթիվ տեսակետները, տեսությունները, դրանց մեկնաբանման տարբեր ձևերը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում, ևս մեկ անգամ շեշտում են դրա արդիականությունն ու կարևորությունը:

Резюме–В статье рассматривается содержание стереотипов и предрассудков как социально-психологических позиций. Подробно представлены определения этих понятий, а также отделена классификация стереотипов и предрассудков от разных авторов.

Summary–The article discusses the content of stereotypes and prejudice as a socio-psychological positions. Details the definitions of these concepts, and also separated the classification of stereotypes and prejudices from different authors.

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՆՁԻ ՄԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱՌՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՂ ԳՈՐԾՈՆ

ՄԱՐԻԱ ԲԱԲԱՅԱՆ *Վանաձորի պետական համալսարան*

Նշանակալի անձի մահը՝ որպես անհատի կյանքում բեկումնային իրադարձություն, առաջացնում է վշտի խոր ապրում, ինչպես նաև հանգեցնում է սեփական մահվան հետ բախմանը (կոնֆրոնտացիային): Տվյալ բախումն իր հերթին էականորեն ազդում է վշտի և կորստի ապրումների վրա, ինչպես նաև հիմնովին փոխում է անձի աշխարհայացքը, արժեքներն ու կյանքի ոճը: Թեմայի արդիականությունը դրսևորվում է նրանում, որ յուրաքանչյուր անհատի կյանքի վերջնական արդյունքը մահն է: Կյանքը մարդու մեծագույն և անկրկնելի պարգևն է, բայց մենք բոլորս մահկանացուներ ենք, և կգա մի օր, որ մենք այլևս չենք լինի այս աշխարհում:

Ամենաբարդ իրավիճակներից մեկը, որում կարող է հայտնվել մեզանից յուրաքանչյուրը, մտերիմ մարդու կորուստն է: Վիշտը, որը տարածվում է մարդու վրա՝ անհամեմատելի է: Ամենից հաճախ այն տեղի է ունենում հանկարծակի, այն պահին, երբ դրան բոլորովին չեն սպասում: Երբ մարդը կորցնում է մտերիմ մարդու, կյանքը կորցնում է իր իմաստը: Եվ այդ պահից կյանքը բաժանվում է երկու մասի՝ կորստից առաջ և հետո: Մահը դա կենսաբանական երևույթ է, որով ավարտվում է մարդու կյանքը: Մտերիմի մահը հուզական խորը ազդեցություն է թողնում մարդու վրա, որի հետևանքով նրա մոտ առաջանում են ուժեղ հուզական ապրումներ, որոնք բնութագրվում են որպես վիշտ: Նշանակալի, մտերիմ մարդու մահը խախտում է մարդու հավասարակշռությունը, կենսուրախությունը: Շատ կարևոր փաստ է անհատի կողմից հետևյալ գործողությունների իրականացումը. մտերիմ մարդու կորստի ընդունումը, կորստի ցավի հաղթահարումը, կամ, օրինակ, այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ զգացվում է մահացածի բացակայությունը, կորուստը: Նաև կարևոր է նոր, դրական վերաբերմունք դրսևորել մահացածի նկատմամբ և շարունակել ապրել [5]¹:

Գոյության սահմանափակության և մահվան գաղափարների հետ մարդը ծանոթանում է փոքր տարիքից, սակայն այդ տեղեկությունը մարդու մոտ չի կապվում սեփական անձի հետ, այլ հեռու է թվում՝ որպես մի բան , որը կարող է տեղի ունենալ, այլ ոչ թե անպայման տեղի կունենա:

Աշխատանքում, որպես մահվան հետ բախմանը հանգեցնող գործոն, կփորձենք դիտարկել նշանակալի անձի մահը: Նշանակալի անձի մահը մարդու համար տեսանելի է դարձնում իր մահվան ռեալությունը, հանգեցնում է սեփական մահվան անխուսափելիության գիտակցմանը և բարձրացնում է մահվան հանդեպ վախը [4, էջ 53]²: Մարդը ստիպված է լինում ընդունել, որ

¹ www.samopoznanie.ru

² Ялом И. Д. Экзистенциальная психотерапия, Класс, 1999 год, 576 с.,

մահը սպառնում է ոչ միայն ուրիշներին, այլ՝ նաև իրեն: Արդյունքում՝ նշանակալի անձի մահը հանգեցնում է ճգնաժամի, որն արտահայտվում է խորը հոգեբանական դիսկոմֆորտի, տագնապի, դատարկության ու անիմաստության զգացողություններով, գոյության հիմնահարցերի՝ մահվան, կյանքի իմաստի, մենակության մասին մտորումներով, մարդու տառապանքների, աշխարհի անարդարությունների պատճառների փնտրտուքներով:

Այժմ փորձենք ներկայացնել, թե ի՞նչ է մահը, վիշտը, ինչպե՞ս է մարդը բախվում սեփական մահվան հետ, ինչպե՞ս է անդրադառնում անհատի վրա նշանակալի անձի մահը, նաև կներկայացնենք նշանակալի անձի մահը՝ որպես մահվան հետ բախմանը հանգեցնող գործոն [5]³:

Մարդկային կորուստը անգնահատելի վիշտ է, սակայն դրա հետ մեկտեղ այն շատ հաճախ անկանխատեսելի է: Մտերիմ մարդկանց ծանր հիվանդությունները, կյանքի տարբեր իրավիճակները մարդուն հասցնում են այն վիճակին, որ նա սկսում է մտածել, որ սեփական կյանքին վտանգ է սպառնում, մասնավորապես մահվան տեսքով: Մահվան անխուսափելիության գիտակցումը վախ ու սարսափ է առաջացնում մարդու մոտ: Մահը չի կարելի ընդունել որպես կյանքի հակապատկեր, քանի որ մահը ոչ թե կյանքի բացակայությունն է, այլ նրա ավարտը: Նշանակալի անձի մահվան հետևանքով մարդու մոտ կարող է ի հայտ գալ «հոգեբանական նույնացում մահացածի հետ» երևույթը: Դա այն է, երբ անձը գիտակցորեն ցանկանում է կամ ենթագիտակցական հակում է հանդես բերում՝ լինելու այնպիսին, ինչպիսին ուրիշն է՝ իր համար նշանակալից, հարգանքի և հիացմունքի արժանի որևէ անհատ: Գիտակցորեն թե ենթագիտակցորեն նա ձգտում է ունենալ նույնանման մտքեր, հույզեր, արժեքային կողմնորոշումներ և դիրքորոշումներ, վարքի ձևեր և այլն: Հարազատին կամ այլ նշանակալից ու սիրված մարդուն կորցնելուց հետո առաջ եկած ծանր, տառապալի, ֆրոստրացնող վիճակը հաղթահարելու տարբեր միջոցներ կան, որոնք ինքնաբերաբար գործի են դրվում, հենց որ մարդը հայտնվում է նման հոգեկան վիճակում[7]⁴: Նշանակալի անձի կորստի երևույթի հետևանքները դրսևորվում են հետևյալ փուլերի մեջ: Առաջին փուլում մարդը դեռևս չի գիտակցում կորուստը, և տեղի ունեցածը ընկալում է որպես երազ: Երկրորդ փուլում արտահայտվում է ագրեսիա հարազատների, բժիշկների և նույնիսկ մահացածի նկատմամբ: Երրորդ փուլը դեպրեսիան է, որի դեպքում մարդը սկսում է ծայրահեղ ագրեսիվություն դրսևորել իր իսկ նկատմամբ: Անձը սկսում է մտածել, որ իր ներկայությունը կարող էր ինչ-որ բան փոխել, այնինչ, մենք բոլորս անգոր ենք մահի առաջ: Այս փուլում անհատի մոտ դիտվում է տրամադրության անկում, մեղավորության զգացում, նույնիսկ հնարավոր է ինքնասպանության մտքեր ի հայտ գան: Իսկ չորրորդ փուլը, այպես կոչված, ապաքինումն է:

³ www.samopoznanie.ru

⁴ www.wikipedia.org

Այստեղ ավելի մեծ տեղ է հատկացվում ժամանակին. «Ժամանակը լավագույն դեղամիջոցն է»: Եվ, եթե անձի մոտ ինչ-որ բան այնպես չի ընթանում, մարդը կարող է խճճվել այդ ստադիաներից մեկում [8]:

Նշանակալի անձի կորստից հետո կարևոր խնդիր է հանդիսանում անհատի աղապտացիան նոր կյանքին. կյանք, որը պետք է ապրել առանց մտերիմ մարդու: Մեզանից յուրաքանչյուրը դրսևորում է սուբյեկտիվ վերաբերմունք կորստի նկատմամբ: Նշանակալի անձի կորստի ապրման ընթացքը, տևողությունն ու ինտենսիվությունը կախված են մի շարք գործոններից. մահացածի կարևորություն, մտերիմի մահվան հանգամանքներ, մահացածի տարիք, վիշտ ապրողի նախկին կորուստների փորձ, անձնային առանձնահատկություններ և այլն [3, էջ 48]⁵:

Մտերիմի մահվան փաստը կարող է շատ լուրջ հոգեբանական խնդիրներ առաջացնել մարդու մոտ, օրինակ դեպրեսիա: Կորուստ ունեցած մարդկանց 15-20%-ի մոտ դեպրեսիան պահպանվում է ամբողջ տարվա ընթացքում: Նշանակալի, մտերիմ մարդ կորցրած անձի համար առանձնացվում են օգնության հետևյալ ասպեկտները.

1. Ուղղորդում և հոգեբանական աջակցություն, որը ցուցաբերվում է հարազատների, մտերիմ մարդկանց կողմից,

2. Հոգեբանական խորհրդատվություն,

3. Հոգեթերապիա և դեղամիջոցներով բուժում, որն անց է կացվում հոգեբույժների, հոգեթերապևտների հսկողությամբ: Եթե վիշտը ապրած մարդը շատ է խոսում մահացածի մասին՝ որակելով նրան այնպիսի հատկանիշներ ու որակներ, որոնք իրականում չեն եղել, պետք չէ հակառակն ապացուցել: Պարզապես պետք է լսել նրան և փորձել չիսանգարել: Միայն այն փաստը, որ քեզ ուշադիր լսում են, կթթևացնի վիշտ ապրող մարդու ապրումները [6]⁶:

Երեխային կորցնելու դեպքում ծնողների վրա տարածվող վիշտը ապակառուցողական հետևանքների պատճառ կարող է հանդիսանալ: Երեխայի կորստի դեպքում վիշտը տևում է գրեթե ամբողջ կյանքի ընթացքում: Երեխայի մահն ամբողջությամբ տակնուվրա է անում մարդու պատկերացումներն ապագայի ու կյանքի էության մասին [1, էջ 11]⁷:

Նշանակալի անձի մահը վերացնում է մարդու և մահվան միջև եղած արգելքը՝ դրդելով նրան հասկանալ, որ ցանկացած պահի նույնը կարող է պատահել նաև իր հետ: Օրինակ, ծնողների մահի դեպքում մարդը դադարում է ինչ-որ մեկի երեխան լինելուց, նաև զրկվում է պաշտպանությունից: Քույր-եղբայրների մահը մարդուն զրկում է իրենց մանկության ուղեկիցներից, իրենց զարգացման վկաներից: Ամուսնու, մտերիմ ընկերների մահը

⁵ Ялом И. Д., Вглядываясь в солнце. Жизнь без страха смерти, Эксмо, 2008 год, 352с.,

⁶ www.psyfactor.org

⁷ Волкан В., Зинтл Э. Жизнь после утраты: психология горя, Когито Центр, 2014 год, 160с.,

ուժգնացնում է այն փաստի գիտակցումը, որ ինչքան էլ մարդը ձգտի կյանքն ապրել ինչ-որ մեկի հետ, միևնույնն է, մենակությունն անխուսափելի է: Նշանակալի անձի մահվանից հետո մարդը ունենում է տագնապային մտքեր, սկսում է գիտակցել սեփական մահի անխուսափելիությունը: Մտերիմի մահը մակերես է բարձրացնում մահվան վախը [2]⁸: Հարազատների, մտերիմ մարդու մահը վեր է բարձրացնում նաև մենակության խնդիրը, ինչի հետևանքով մարդը դառնում է էլ ավելի տագնապային: Երեխայի մահի դեպքում ծնողների մոտ ձևավորվում է անմահության անհիմն ձգտումը, քանի որ նրանք իրենց շարունակությունը այլևս չեն կարող տեսնել երեխաների մեջ: Նշանակալի անձի մահվան դեպքում մարդուն սկսում է տանջել ուժեղ մեղքի զգացումը, և նա սկսում է մտածել. որ կարող էր ինչ-որ բան փոխել, եթե, օրինակ, ժամանակին տեղ հասներ: Այնինչ, նշենք նաև, որ մարդու համար ավելի հեշտ է ընդունել իր մեղքի բաժինը, որը շատ հաճախ բացակայում է, քան ընդունել այն փաստը, որ մենք բոլորս մահկանացուներ ենք և անգոր ենք մահվան դեմ: Նշանակալի անձ կորցնելով՝ մարդը կորցնում է իր համար կարևոր մեկին, հուսահատվում է, նրա նպատակները քայքայվում են, իսկ նախկին իմաստները կորցնում են իրենց արժեքը [6]:

Վերջում կցանկանայի ներկայացնել փոքրիկ հարցման արդյունքները, որը անց եմ կացրել Բագրատաշեն գյուղում: Հարցումը անց եմ կացրել 18 տարեկանից մինչև 50 տարեկանի միջակայքում գտնվող 80 հոգու հետ: Հարցման նպատակն էր պարզել, թե որ նշանակալի անձի կորուստն է վշտաբեր մարդու համար: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հարցվողների 65 %-ը վախենում են ծնողների կորստից:

Резюме–Самое тяжелое, что может пережить каждый из нас – это потеря близкого человека. Горе, постигшее человека, которое несравнимо ни с чем. Чаще всего оно приходит внезапно, когда его не ждут. Когда человек теряет самого близкого человека, земля словно уходит из-под ног. Жизнь теряет смысл. И с этого момента жизнь делится на до и после. Сильные эмоции, переживаемые человеком, когда он лишается близкого, любимого человека в результате его смерти, называются горем. Смерть является неотъемлемой частью той общей семьи, в которой живет человек. Смерть – это биологическое событие, завершающее жизнь. Это жизненное событие оказывает сильное эмоциональное действие на мышление человека и вызывает наибольшую реактивность в поведении окружающих людей. Не стоит забыть любимого человека, он где-то рядом, совсем близко-в вашем сердце. Не стоит замыкаться в себе, делитесь своим горем со всеми-с друзьями, родными и близкими, не оставайтесь один на один со своими проблемами. Найдите людей с похожими

⁸ **Могучая Н.** Страх смерти в работе психотерапевта/ статья.

судьбами, и Вы узнаете, как и другим тяжело было терять родных, как они находили выход из этой трудной и безвыходной ситуации. Не стоит даже и думать о том, чтобы уйти из жизни, оставив ворох проблем тем, кто продолжает жить. Это самый легкий способ уйти от всего этого, а между тем, вряд ли любимый человек по достоинству оценил бы Ваш поступок. Поверьте: все те, кто умер, смотрят на нас свысока, улыбаясь вместе с нами, и горюют, когда нам плохо.

Summary-One of the most complicated situations each of us may appear in is the loss of a soulmate. The grief is incomparable. It happens more often suddenly when you don't expect them to happen at all. When one loses the person of much importance the world turns upside down. The life becomes meaningless. And since then life falls apart to «before» and «after». The death of the soulmate has a deep emotive effect on the person and causes strong emotional sufferings which are characterized as a grief. The death is an inseparable part of the family in which a person lives. The death is a biological phenomenon that puts an end to life. That phenomenon causes great emotive effect on the person and his thinking. One should not forget his beloved, he is with us and in our hearts. One should not be melancholic. Share your grief with your friends, relatives and don't be in your problems alone. Find those with the similar fate and you will realize how hard it was for them when they lost someone special, how they found ways to handle the desperate situation. Don't ever think of passing away from this world leaving big problems behind for those who are still alive. That's the easiest way of evading everything, moreover, hardly ever would your beloved, closest person accept your deed. Believe me, those who have joined the majority watch us out from the sky smiling when we are happy and getting upset when we are down.

ԱՐԴԻԿՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ – ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ

ՀՈՒՄԻԿ ԽԱՆՈՒՄՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ադդիկցիան կամ կախվածությունը հանդիսացել և հանդիսանում է մերօրյա արդի հիմնախնդիրներից մեկը հոգեբանության համար, որը դրսևորվել է մարդկային պատմության զարգացման գրեթե ողջ ընթացքում: Դարեր շարունակ կախվածությունը դրսևորվել է նարկոմանիա հասկացության համատեքստում: Սակայն ներկայումս այն ձեռք է բերել դրսևորման այլ տեսակներ: Համընդհանուր գլոբալիզացիայի հետ մեկտեղ մշակույթների, հասարակարգերի, արժեքների, պատմության, տնտեսական և սոցիալական զարգացմանը համընթաց տարածում են գտնում ադիկտիվ վարքի նոր տեսակներ: Եթե նախկինում այս եզրույթը սովոր էին դիտարկել որպես թմրամոլության, ալկոհոլամոլության, խաղամոլության տեսանկյունից, ապա այսօր այդ դիտաչկումներն ընդլայնվել են: Ադդիկտիվ վարքն ամենուրեք է և այնքան է խորացել հասարակության մեջ, որ նույնիսկ դրա բնութագրումն է դարձել բարդ, քանի որ վեր է ածվել նախասիրության կամ հոբբի:

Այն արտահայտվում է որոշակի առարկաների կամ գործունեության (գործողության) ձևերի վրա՝ կենտրոնանալով իրականությունից հեռանալու ձգտման մեջ, որն ուղեկցվում է բուռն զգացումներով: Եզրույթը ճիշտ հասկանալու համար ամենակարևոր խնդիրը, որը պետք է առանձնացնել, հասկանալ, դա ադիկտիվ վարքի տեսակային դրսևորումների հստակ տարանջատումն է ախտաբանության համատեքստում և դրանց դիտարկումը որպես հիվանդություն: Ադդիկցան որն ըստ տեսակի լինում է քիմիական և ոչ քիմիական, ունի իր դասակարգումը: Ոչ քիմիական ադիկտիվ վարքի զգալի մասն ավելի ուշ դասվեց հիվանդությունների շարքին, քան քիմիականը: Դրանք են.

1. Անձի սովորությունների և նախասիրությունների խանգարում
2. ալկոհոլի և հոգեմետ նյութերի չափից ավելի օգտագործում
3. սեռական վարքի խանգարումներ
4. ազարտային խաղերի խանգարումներ
5. այրելու պաթոլոգիկ խանգարում՝ պիրոմանիա
6. կլեպտոմանիա
7. տրիխտոլոմանիա:

DSM 5-ի համացանցը նույնպես գրանցված է որպես հիվանդություն և բնութագրվում է հետևյալ ձևաչափով՝ չափից դուրս հրապուրվածություն համացանցով, խաղերով, պորնոգրաֆիայով, էլեկտրոնային փոստը ստուգելով:

Սակայն, պետք է նշել, որ աղդիկցիաների մեծ մասը թաքնված են նախասիրությունների քողի տակ (երաժշտական կամ սպորտային ֆանատիզմ, որս, ձկնորսություն, սելֆի, խաջբառերի լուծում և այլն):

Կախվածությունների դրսևորումները ներկայումս դժվար է առանձնացնել որպես աղդիկցիա, քանի դեռ այն դիտվում է որպես լոկ մարդկային էության մի մասը և ոչ այն, ինչ մարդկային հասարակ և բավականին բնական ցանկություններն են, որոնք ոչ մի կերպ նորմայի շրջանակներից դուրս չեն գալիս: Այստեղ առաջ է գալիս մեկ այլ խնդիր՝ իսկ ինչ՞ է նորման ընդհանրապես և ինչպես՞ է այն դրսևորվում ու որոշվում: Մեր կարծիքով նորման հասկանալու համար մենք պետք է հաշվի առնենք կարևոր մի սկզբունք՝ սեփական անձը և հասարակությանը չվնասելը: Մի կողմից կարելի է եզրակացնել, որ որոշակի կախվածություններ կամ աղդիկցիաներ այս պարագայում դուրս են մնում շեղում ասվածից և մտնում նորմա, և դժվար է բնորոշել, թե ինչ է մասայական աղիկցիան՝ նորմայի նոր ձև, կամ միգրացե սահմանային վիճակ: Վերջինս կարելի է համարել հոգեբանության ուսումնասիրության ժամանակակից խնդիրների շարքին:

Այնուամենայնիվ, որպեսզի նման երևույթները զարգացում չունենան հասարակության մեջ և դուրս չգան նորմայի սահմաններից, անհրաժեշտություն է առաջ գալիս առաջադրել հստակ գործողությունների համակարգ, որը կնվազեցնի աղիկտիվ վարքի զարգացման միտումները, քանի որ տեսակային բազայով աղդիկցիան բավականին լայն հասկացություն է, ապա նախ և առաջ կարիք է զգացվում ուսումնասիրել և լուծումներ առաջ քաշել այն աղիկցիաների շուրջ, որոնք մեծ տարածում ունեն հասարակության շրջանում: Օրինակ՝ եթե փորձենք համապատասխան լուծում առաջադրել ազարտային խաղերի պարագայում, ապա այս դեպքում կարելի է կիրառել ամերիկյան անանուն ալկոհոլիզմով հիվանդների խմբային հոգեբանական աջակցությունը՝ օգտագործելով այլ աղիկցիաների բուժման ժամանակ: Ուսումնական հաստատություններում դեռահասների շրջանում տարածում գտնող տոկսիկ և ոչ տոկսիկ նյութերի օգտագործման կանխարգելիչ աշխատանքներում պետք է հաշվի առնել աղիցիայի տեսակի և դրա վտանգավորության աստիճանը: Աշխատանքը ծնողների և դեռահասների հետ կարող է արձանագրել տվյալ նյութերի օգտագործման մակարդակի նվազեցմանը:

Այսօր մեր հասարակությունում դեռևս բաց է սեռական դաստիարակության հարցը, որը նույնպես կարիք ունի վերանայման և այնպիսի մեթոդների մշակման, որոնք ծնողներին թույլ կտան ճիշտ կերպով դաստիարակելու իրենց երեխաներին: Այսօր հանրակրթական ոչ մի հաստատությունում պարբերական ձևով չեն ընթանում կախվածությունների մասին տեղեկատվական, լուսավորչական կանխարգելիչ դասընթացներ, որոնց իրականացումն ուղղված հասարակական գիտակցության բարձրացմանը՝ կնպաստի այս բնագավառում անվտագության, էթիկայի, առողջ ապրելակերպի և կանխագելման մակարդակի բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ворошилин С.И. Расстройства привычек и влечений: феноменология проявлений и границы диагностики /Журнал практического психолога. – М.: 2, (март-апрель)-2008.
2. Международной статистической классификации болезней и проблем, связанных со здоровьем, 10-го пересмотра, 3-ей Всемирной Ассамблеей Здравоохранения.
3. Менделевич В.Д. Психология зависимой личности-Казань. 2004.-240 с.

Резюме–В статье рассматриваются важнейшие вопросы о феномене человеческой зависимости различных типов аддиктивного поведения. Что заставляет человека перейти к потере автономии и появлению клешни зависимого поведения. В конце концов нормальные человеческие желания, интересы или аддикция. Напоминающий риторический вопрос это неявная идея еще будет сохранять свою актуальность до тех пор, пока не появились общепринятый подход и разграничение границ между естественного потребностями и зависимостями человека.

Summary–The article dwells on the major issues related to the phenomenon of dependence upon the variety of addictive behaviour. The paper attempts at uncovering the reasons of the loss of autonomy and traps of dependency behaviour. The paradigm of actual priorities is described within the natural or instinctive desires, interests, and addiction. The questions raised will definitely maintain their relevance till the final discretion in separating and universal acknowledgement of the difference between the natural human needs and addictions is finally determined.

ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԱՆՆԱ ԲԱՂԱՍՅԱՆ

Վանաձորի պետական Համալսարան

Տարբեր դարաշրջաններում սեռականության մասին ունեցած պատկերացումները եղել են խիստ սահմանափակ: Այն հարցերը, որոնք կապված են եղել սեռական ոլորտի հետ, ուղղակի չեն քննարկվել: Այսօր էլ հայ հասարակության մեջ գերադասվում է չանդրադառնալ տվյալ հիմնախնդրին: Ոչ տանը, ոչ դպրոցներում, ոչ բարձրագույն ուսումնական հաստատություններում չի իրականացվում սեռական դաստիարակություն, սեռականության, սեռական հասունացման, սեռական կողմնորոշման և այլ թեմաների շուրջ խոսակցությունները, քանի որ դա համարվում է անբարո:

XXI դարում տեղի ունեցած հսկայական փոփոխությունները կյանքի տարբեր ոլորտներում՝ գիտություն, տեխնիկա, բժշկություն և այլն, անհրաժեշտություն առաջացրեցին մարդկանց իրազեկելու և հիմնարար գիտելիքներ հաղորդելու սեռականության մասին: Հոգեբանության և բժշկության շրջանակներում կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ սեռականության վերաբերյալ գիտելիքների պակասը հանգեցնում են մի շարք բացասական հետևանքների, որոնք սպառնում են մարդու ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Կարևոր է հասկանալ, որ սեռականությունը մարդու անհատականության կարևոր մասն է, որը հնարավորություն է տալիս նրան իրան զգալու լիարժեք և ներառաշնակ:

Գոյություն ունեն սեռականություն եզրույթի մասին տարբեր սահմանումներ, սակայն առավել ընդունված և տարածված է հետևյալ սահմանումը. Սեռականությունը յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունն է, որը ապահովում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատի և հասարակության անդամի¹:

Սեռականությունը, որպես հոգեբանական երևույթ, ունի իր բաղադրիչները, որոնք են՝ կենսաբանական սեռը, սեռական կողմնորոշումը, սեռական նույնականացումը և սեռի սոցիալական դերերը (կնոջ կամ տղամարդու վարքագծով բնորոշվող մշակութային նախադրյալներին պատկանելը)²:

Տարբերում են կենսաբանական սեռի երկու տեսակ՝ արական և իգական թեպետ այսօր առաձնացնում են նաև միջին սեռ:

Անհատի սեռը միջին է համարվում, երբ անհատի ներքին և արտաքին սեռական օրգանները ոչ հստակ արական են, ոչ էլ հստակ իգական: Միջին սեռ ունեցող անհատի մոտ կան արական և իգական ներքին ու արտաքին սեռական օրգաններ:

¹ **Акимов Л.** Психология сексуальности. Учебное пособие.-Одесса: СМЛ, 2005, стр. 11.

² The International Encyclopedia of Sexuality, p. 27.

Խոսելով մարդու կենսաբանական սեռի մասին՝ անհրաժեշտ է նշել, թե սեռական տարբերական n° ր մակարդակն է դիտարկվում: Ըստ այդմ, դիտարկում են՝

1. գենետիկական սեռ, որը բնորոշվում է մարդու քրոմոսոմային հավաքակազմով և լինում է XX (իգական), XY (արական), ինչպես նաև հնարավոր են միջանկյալ տարբերակներ՝ XXY (ինտերադիկ) և XYY (ինտերտոլա),

2. գոնադային սեռ, որը բնորոշվում է սեռական գեղձերի առկայությամբ և որոշիչ է հանդիսանում սերմնարանի կամ ձվարանի առկայությամբ, սակայն հնարավոր է նաև երկու գեղձերի միաժամանակյա առկայություն (հերմոֆրոդիտիզմ) կամ սեռական գեղձերի միջանկյալ տարբերակները (օրինակ՝ օվոտեստիս),

3. անատոմիական սեռ, որը բնորոշվում է մարդու արտաքին կամ ներքին սեռական օրգանների առկայությամբ,

4. մանկաբարձական սեռ, որը պտղի սեռն է և բնորոշվում է մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից՝ համաձայն հղի կնոջ կլինիկական գնումների

5. ծննդյան սեռ, որը նորածնի սեռն է, բնորոշվում է ծնունդն ընդունող մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից,

6. հորմոնային սեռ, որը բնորոշվում է անձի սեռական գեղձերի կողմից արտադրվող սեռական հորմոնների քանակական առավելությամբ և երկրորդային սեռական հատկանիշների առկայությամբ (հաճախ հորմոնային խանգարումները պատճառ են հանդիսանում անձի հորմոնային սեռի և անատոմիական սեռի տարբերության)

7. անձնագրային սեռ կամ անձի փաստաթղթերում նշված սեռ, որը կարող է չհամընկնել ծննդյան սեռի հետ (օրինակ՝ հերմոֆրոդիտիզմի կամ փոխսեռականության դեպքում)³:

2. Սեռական կողմնորոշումը անհատի հուզական, ռոմանտիկ կամ սեքսուալ գրավչությունն է նույն կամ այլ սեռի անձանց նկատմամբ:

Առանձնացնում են սեռական կողմնորոշման հետևյալ տեսակները.

1. տարասեռական կամ հետերոսեքսուալ,

2. նույնասեռական կամ հոմոսեքսուալ,

3. երկսեռական կամ բիսեքսուալ,

4. անսեռական կամ ասեքսուալ⁴:

Սեռական կողմնորոշումը մարդու սեռականության թերևս ամենավիճահարույց բաղադրիչն է: Մինչև 20-րդ դարի 70-ական թվականները նույնասեռականությունը համարվել է հոգեկան և վարքային շեղում, որը ենթակա է բուժման: Սակայն երկար բանավեճերի, հանրային ճնշումների, հետազոտությունների հետևանքով 1973թ. Ամերիկյան հոգեբույժական ասոցիացիայի հոգեբարձուների խորհուրդը նույնասեռականությունը հանել է Հոգեկան խան-

³ www.msarmenia.org

⁴ <http://www.psychiatry.org>

գարումների ախտորոշման և վիճակագրության ձեռնարկից (DSM-II), որով ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում առաջնորդվում են հոգեկան և վարքային խանգարումներն ախտորոշելիս: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 1990թ. մայիսի 17-ին հեռացրել է նույնասեռականությունն ախտորոշումը Հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD-10) հոգեկան խանգարումների շարքից, որով առաջնորդվում են նաև մեր երկրի հոգեկան առողջության մասնագետները:

Անհաժեշտ է գիտակցել, որ նույնասեռականությունը ոչ հիվանդություն է, ոչ հոգեկան խանգարում, ինչը մասին փաստում են հոգեկան առողջության առաջատար կազմակերպությունները, այդ թվում առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

3.Սեռական նույնակացումը անհատի կողմից սեփական սեռի հոգեբանական զգացումն ու ընկալումն է՝ արական, իգական, միջին, չեզոք և այլն: Եթե կենսաբանական սեռն այն է, ինչը որոշվում է արտաքին և ներքին սեռական օրգանների և արտադրվող միավորների հիման վրա, ապա սեռական նույնակացումն այն է, ինչը մեր գլխում է,⁵ նչ սեռի եմ ես հարցի պատասխանն է անհատի կողմից⁶:

Սովորաբար կենսաբանական սեռը և սեռային ինքնությունը համապատասխանում են մեկը մյուսին. իգական կենսաբանական սեռի անհատներն իրենց սովորաբար համարում են իգական սեռին պատկանող: Նույնն էլ արական սեռի անհատների դեպքում. երբ կենսաբանական սեռն արական է լինում, անհատն իրեն սովորաբար արական սեռի է համարում: Այնուամենայնիվ, կան մարդիկ, որոնք զգում են տարբերություն և անհամապատասխանություն իրենց կենսաբանական սեռի ու սեռային ինքնության միջև: Նման անհամապատասխանության զգացումը բնորոշ է տրանսսեքսուալ մարդկանց:

4.Սեռի/գենդերի սոցիալական դերերը: Շատ մշակույթներում հասարակության սպասումները հետևյալն են՝ իգական սեռի անհատները պետք է իրենց գենդերով աղջիկ, հետագայում էլ կին լինեն, իսկ արական սեռի անհատները՝ տղա, հետո էլ՝ տղամարդ:

Գենդերային ինքնությունն անհատի կողմից իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին⁶:

Գենդերային դերն այն հասարակական սեռն է, գործողություններն ու վարքագիծը, որոնցով դու հանդես ես գալիս հասարակության մեջ: Գենդերային դերը դրսևորվում է այն գործողություններով ու վարքով, որոնցով հասարակության մեջ հանդես ես գալիս անհատը՝ ելնելով իր գենդերային ինքնու-

⁵ www.pinkarmenia.org

⁶ www.apa.org

թյունից: Այն սեփական գենդերի արտահայտումն է տվյալ մշակույթում⁷: Գենդերային դերը մշակույթի կողմից սահմանված դիրքորոշումների, վարքագծի օրինաչափությունների և անձնային հատկանիշների ամբողջությունն է, որոնցով անհատն ապրում է որպես կարծրատիպորեն սահմանված առնական կամ կանացի սոցիալական դերերով⁸:

Հիմնականում գենդերային ինքնության հիման վրա է կառուցվում գենդերային դերը: Այսպես, արական սեռի անհատի գենդերային ինքնությունը սովորաբար տղամարդ է լինում: Նրան նաև կարող է դուր գալ այն ամենը, ինչը տվյալ տարածաշրջանում և մշակույթի մեջ զուգորդվում է տղամարդ հասկացության հետ, և նա կարող է հանդես գալ որպես տղամարդ (այսինքն, լինել տղամարդ և գենդերային ինքնությամբ, և գենդերային դերով), նույնն էլ՝ կնոջ դեպքում:

Այն անհատները, որոնք իրենց գենդերային ինքնությամբ ու գենդերային դերով համապատասխանում են սոցիումի սպասումներին ու տվյալ մշակույթում իշխող գենդերային կարծրատիպերին կոչվում են սիսգենդերներ: Իսկ նրանք, ովքեր անհամապատասխանություն ունեն իրենց կենսաբանական սեռի, սեռային և գենդերային ինքնության և գենդերային դերի ու հասարակական ակնկալիքների հետ և հանդես չեն գալիս այն գենդերային դերով, որն իրենցից ակնկալվում է կոչվում են տրանսգենդերներ:

Տրանսգենդերն այն անհատն է, որը ժամանակավորապես կամ մշտապես նույնականացնում է իրեն ծննդյան ժամանակ հաստատված գենդերից տարբերվող գենդերի հետ⁹:

Այսպիսով, սեռականությունը լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է կենսաբանական, հոգեկան, սոցիալական և մշակութային գործոններ: Այն համարվում է բնական պահանջմունք և հանդես է գալիս որպես կյանքի շարժիչ ուժը: Այն անձին դարձնում է գրավիչ, ինքնավստահ, ինքնաբավ, ապահովում է նրա ակտիվությունը սոցիալական միջավայրում, պահպանում է ֆիզիկական և հոգեկան առողջությունը, հնարավորություն է տալիս միջանձնային հարաբերություններ հաստատելու, ընտանիք կազմելու, սերունդը շարունակելու:

Սակայն երբ մարդը գաղափար չունի սեռականության մասին կամ ունենք գիտելիքի պակաս այդ ոլորտում, դա հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների՝ մենք սկսում ենք կողմնակալ վերաբերմունք ցուցաբերել և՛ ինքերս մեր, և՛ ուրիշների նկատմամբ, ունենք անինքնավստահություն և սեփական անձի մերժում, անհանդուրժող և չընդունող վերաբերմունք մարդ-

⁷ **Ильин Е. П.** Пол и гендер.-СПб.: Питер, 2010, стр. 72.

⁸ **Бёрн Шон.** Гендерная психология-The Social Psychology of Gender.-СПб: Прайм-Еврознак, 2002, стр.202.

⁹ Всемирная профессиональная ассоциация по трансгендерному здоровью. Стандарты помощи транссексуальным, трансгендерным и гендерно неконформным людям. 7-я версия.

կանց նկատմամբ, ազդեցիկ ու բռնի վարքի դրսևորում, խտրականություն, աստելություն և այլն: Հետևաբար, մեր և ուրիշների սեռականության մասին գիտելիքների ու տեղեկատվության շարունակական համալրումը կարևոր է ոչ միայն մեր սեռական և հոգեկան առողջության ու ներդաշնակության, այլև մեր ու այլոց բարօրության և համերաշխության համար:

Резюме–В данной статье представлена сексуальность человека, структура сексуальности, так же гендерные и половые роли и стереотипы. В статье также представлены типы сексуальной ориентации, гендерной идентификации. В статье отдельно представлены трансгендеры.

Summary–This article presents the structure of human sexuality, as well as gender identification, gender roles and stereotypes. The article also presents types of sexual orientation, gender identification. The transgressors are presented separately in the article.

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱԶԱՏԻ ԿՈՐՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

ՄԱՆՈՒԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ընտանիքը, որպես հասարակության բջիջ, մանրակերտ, հիմնային արժեք՝ շփման, ինքնադրսևորման, սիրո, հարգանքի և այլ պահանջմունքների բավարարման հարթակ, կարող է կրել ինչպես հուզականորեն ջերմ, հագեցած, այնպես էլ սառը և պաշտոնական բնույթ¹: Այս տեսանկյունից ինչպես նկատում է խորհրդային հոգեբան Վ.Ի. Զաքեյինը, հաճախ է պատահում, երբ առանձին վերցրած երկու «լավ» մարդկանց ամուսնական միությունը, կյանքը ստացվում է ոչ այդքան հաջող և արդյունավետ²: Բիարկե, այստեղ կարող են լինել բազմաբնույթ պատճառներ, որոնցից մեկին՝ կորուստներին ու դրանց ապրմանն ընտանիքի անդամների կողմից կփորձենք անդրադառնալ ստորև:

Ամուսնական զույգերի միջև հարաբերական ջերմ փոխհարաբերությունների փոփոխությունները, հոգեւեռական, կենցաղավարության և այլ խնդիրները, ամուսիններից կամ ընտանիքի անդամներից մեկի անբուժելի, կյանքին և դրա շարունակականությանը վտանգ սպառնացող, անձի կյանքի որակն էականորեն գցող հիվանդության ձեռքբերումն ու այդ իրողությանը հաջորդող ընտանիքի անդամների կողմից որդեգրվող նոր դերերի և պարտականությունների ստանձնումը, ինչպես նաև այլ դերերից ու գործառույթներից հրաժարումը, օտարումը, և ի վերջո անբուժելի հիվանդությամբ տառապողի մահը՝ որպես սովյալ իրավիճակի ենթադրելի, տրամաբանական, իրավիճակից բխող սպասելի կամ անսպասելի հետևանք, ընտանիքի՝ միմյանց հետ հուզականորեն կապված անդամներին կանգնեցնում է նոր, անելանելի թվացող իրադրության՝ դիլեմայի առջև:

Ինչ անել, ինչպես ապրել նման իրողությունից հետո...: Խնդիրը, ենթադրելի է, որ բոլոր ժամանակներում էլ հանդիսացել է ինչպես հասարակության լայն զանգվածների, այնպես էլ գիտության՝ մասնավորապես բժշկության, փիլիսոփայության, մահագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի, արվեստաբանության ուսումնասիրման առարկա:

Մասնավորապես կոլումբացի մեծ գրող՝ *մոզական ռեալիզմ* գրական ոճի հիմնադիր Գ.Գ. Մարկեսն իր՝ «Մի հայտարարված սպանության քրոնիկան», «100 տարվա մենություն», «Նահապետի աշունը», «Մերը խուլերայի ժամանակ» վեպերում և «Մեծ մայրիկի հուղարկավորությունը» պատմվածքների ժողովածուի որոշ գործերում մահվան թեման և դրան հաջորդող մարդկային ապրումները շոշափում է յուրահատուկ ձևով: 1950-ական թթ. հումանիստա-

¹ Առուսմանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: «Զանգակ-97» հրատ., Եր.: 2004.

² Զաքեյին Վ. Ամուսնական կյանքի մասին: «Հայաստան» հրատ.: Երևան, 1991.

կան հոգեբանության, իսկ 1967 թ.-ին Մեյլի Սոնդերսի կողմից առաջին հոսպիսի՝ որպես արժանապատիվ մահվան հնարավորություն ընձեռող ծառայության հիմնումը վերոնշյալ խնդրին հաղորդեց նոր հնչողություն³:

Մտերիմ և սիրելի մարդու անբուժելի որևէ հիվանդության ձեռքբերումը կամ կյանքի այլ պայմաններում կորուստը և դրա ապրումն ընտանիքի անդամների համար նախնառաջ ուժեղ սթրեսոր է հանդիսանում և հատկապես այն պարագայում, երբ հարազատի մահը վրա է գալիս անսպասելի, իսկ անսպասելիությունն ինքը սթրեսի՝ այս պարագայում դիսթրեսի առաջացման գլխավոր պայմանն է: Ընդհանրապես կորուստի և դրա անդառնալիության մասին պատկերացումների ձևավորումն ու վշտի ապրումն ունի նաև տարիքային առանձնահատկություններ: Ի՞նչպես են արձագանքում կորուստներին մասնավորապես երեխաները: Հոգեբան Մարիա Նագին նշում է, որ մահվան՝ որպես անդառնալի երևույթի մասին պատկերացումները երեխաների մոտ ձևավորվում են միայն 9 տարեկանից հետո, իսկ մինչ 5 տարեկանը երեխաները հակված են մահը դիտել որպես երկարատև քուն կամ ճանապարհորդություն: Այա 5-9 տարեկանում սկսում են հասկանալ մահվան իրողությունը՝ մտածելով, որ այն կարող է սպառնալ յուրաքանչյուրին, բայց ոչ իրենց մտերիմին⁴:

Երեխաներին, իհարկե, կարիք կա տալու մահվան, կորստի անդառնալիության մասին տվյալ տարիքային փուլի առանձնահատկություններին համապատասխան գիտելիքներ, հակառակ դեպքում կորուստը չապրելու, չըմբռնելու պարագայում երեխան կյանքի հետագա տարիների ընթացքում ևս կարող է ունենալ դժվարություններ՝ հնարավոր և սպասելի կորուստներին, էքզիստենցիալ տարաբնույթ խնդիրներին, վախերին աղեկվատ գնահատականներ տալու անկարողության առումով:

Կարծում ենք, սխալված չենք լինի, եթե նշենք, որ վերոնշյալ հարցերը՝ սեփական և իրենց մտերիմների որոշ հարցերում անձեռնմխելիության, յուրահատկության և նրանց՝ համընդհանուր կարգին չենթարկվելու մասին խեղաթյուրված, շղարշային ընկալումները երբեմն ուղեկցում են նաև չափափաս անձանց: Անգամ այս տարիքում մարդիկ փորձում են ժխտել սիմետրիայի՝ հավասարության սկզբունքը բոլոր մահկանացուների միջև, կարծելով, որ յուրահատուկ են այն աստիճան, որ հնարավոր է խուսափեն մահից, շրջանցեն այն: Կարծում ենք՝ սա փախուստ է իրականությունից, իրականության սկզբունքի մերժում, տագնապ հարազատի կորստի հանդեպ: Իսկ հայտնի

³ Белая книга: Стандарты и нормы хосписной и палиативной помощи в Европе: часть 1: Перевод статьи, впервые опубликованной в «Европейском журнале паллиативной помощи» (EJPC) в 2009., Том 16, #6, стр. 278-289 и в 2010., Том 17, #1, стр. 22-33.

⁴ Գասպարյան Խ., Կարապետյան Հ., Տեր-Մինասյան Վ. Պալիատիվ խնամք: Բժշկահոգեբանական մեթոդական ուղեցույց: «Պոլիգրաֆիգնես», Եր.: 2011.

արտահայտությունը, թե մարդ մի տեսակ կարևոր է դառնում, երբ մահանում է, գալիս է հիմնավորելու նշվածի իսկությունը:

Կարելի է ենթադրել, որ ընտանիքում հոր անժամանակ կորուստը, իսկ երբեմն նաև դրան նախորդող երկարատև, անդառնալի և հյուծիչ հիվանդությամբ տառապելն ընտանիքի՝ հատկապես արու զավակին ստիպում է ընտրել առավել «առնական» մասնագիտություններ՝ հետագայում ուժային և իրավապահ կառույցներում աշխատելու համար: Կանայք էլ իրենց հերթին նման իրավիճակում փորձում են ստանձնել ընտանիքի ղեկավարի դերը, ապահովել ընտանիքի ֆինանսական բարվոքությունն ու հատկապես նյութական առումով անապահով ընտանիքների դեպքում հաճախ կատարել ծանր ֆիզիկական, հյուծիչ և ավանդական մայրական դերին ու գործառնություններին չհամապատասխանող աշխատանքներ: Իհարկե, նման դերի ու գործառնությունների որդեգրումը բերում է իր հետ նաև անձնային հոգեբանական որոշակի փոփոխություններ, որն այս պարագայում, կարծում ենք, կարելի է անվանել «հարկադիր մայրիշխանություն»: Նշենք նաև, որ ըստ էության, հարկադիր անձնային փոփոխություններ ու որոշակի դերային տրանսֆորմացիաներ են տեղի ունենում նաև ընտանիքում մոր կորստի դեպքում: Կարծում ենք, որ անտեղի և անընդունելի պնդում է այն տեսակետը, որ ընտանիքում հոր բացակայությունն ավելի տանելի և առավել հեշտ հաղթահարելի է, քան մոր բացակայությունը: Յուրաքանչյուր դեպքում էլ կառնչվենք երեխայի սոցիալականացմանը, հարմարմանն ու սեռադերային նույնականացմանը վերաբերող տարաբնույթ խնդիրների հետ: Այստեղ ավելի քան ան պատեհ է «չարյաց փոքրագույնի ընտրությանը» նմանվող տարբերակի առաջադրումը:

Ինչպես նշում է Ա. Նալչաջյանը, կորստի հետևանք հանդիսացող տհաճ ապրումների (վախ, տագնապ, ափսոսանք և այլն) բեռից ազատող հոգեբանական նույնացումը՝ իդենտիֆիկացիան, ամրապնդվելով անձի կառուցվածքում, անձին դրդում է հաճախ հետևել մահացածի դավանած կյանքի ոճին, գաղափարներին ու արժեքներին: Հեղինակի պնդմամբ այս մեխանիզմի աշխատանքով է պայմանավորվում նաև այն երևույթը, երբ հայտնի գրողի, գիտնականի, պետական-քաղաքական գործչի, մարզիկի զավակները, իսկ երբեմն էլ ամուսինները, կանայք կամ եղբայրները ընտրում են իրենց ամուսինների, կանանց, եղբոր կամ ծնողների մասնագիտական ուղին⁵: Այս դրսևորումներին կարող են հանդիպել նաև մեր իրականության մեջ:

Անդրադառնանք նաև այն հիվանդություններին, որոնք ընտանիքի անդամներից պահանջում են առանձնահատուկ խնամք, հոգածություն և հոգեբանական պատրաստվածություն վատառողջ կամ ընտանիքի մահամերձ անդամի հանդեպ: Դրանց թվին կարելի է դասել մասնավորապես՝ քաղցկեղը, ալցհեյմերը և այլ դեմենցիաները, սիրտ-անոթային հիվանդությունները, լյարդի ցիրոզը, թոքերի խրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները, շաքա-

⁵ Նալչաջյան Ա.Ա. Մահվան հոգեբանություն: Փյունիկ հրատ., Եր.: 1992.:

րային դիաբետը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, երիկամային անբավարարվածությունը, ցրված սկլերոզը, պարկիստնի հիվանդությունը, դեղակայուն տուբերկուլյոզը, ռևմատոիդ արտրիտը:

Հաճախ մարդկանց հուսահատեցնում և անզամ գայրացնում է այն միտքը, որ ընտանիքի որևէ անդամի հիվանդության պատճառով իրենք ստիպված պետք է արմատական փոփոխություններ մտցնեն իրենց կյանքում, հրաժարվեն այն ամենից, ինչն իրենց մինչ այս իրողությունը հաճույք և բավականություն էր պատճառում: Մակայն, նման իրավիճակը հնարավորություն է տալիս նաև խորհրդածելու նոր ստեղծված իրավիճակի շուրջ, ապացուցելու հարազատի հանդեպ իրենց զգացմունքների անկեղծությունը, սերն ու հարգանքը մահացողի նկատմամբ: Բիարկե, ամեն մի հիվանդություն առանձնահատուկ խնամք, բուժում և հոգածություն է պահանջում, և ճիշտ չի լինի միայն խոսել կոնկրետ բուժամիջոցի, ֆորմուլայի կամ տնային խնամքի մասին: Նշենք նաև, որ մեր իրականության մեջ օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով տառապող հիվանդի առկայությունը խարան է դնում այդ ընտանիքի վրա, ստիպում ապրել ինչպես ամոթի ու մեղքի զգացումով, այնպես էլ բավական տևական ժամանակ հասարակությունից մեկուսացված: Այստեղ գործ ունենք նաև հասարակությունում այս և նման հիվանդությունների մասին իրազեկվածության ցածր մակարդակի հետ: Նման դեպքերում հարազատի կորստի ժամանակ, ընտանիքում կարող է արտահայտվել հասարակությունից մեկուսացում, ընտանիքի որևէ անդամի մոտ ինքնամեղադրանքներ, ինչն անհաղորդ չի կարող թողնել մյուս անդամներին ու չխոռովել ընտանեկան անդորրը, խաղաղ համակեցությունը:

Բավական բարդ ու ծանր իրավիճակում է հայտնվում ընտանիքը, երբ տեղի է ունենում երեխայի կորուստ: Մասնավորապես ծնողների մոտ առաջանում է մեղադրանք, ցավ, վշտի, տառապանքի զգացում, սեփական ծնողավարության վերաբերյալ կասկածներ: Այս և նախորդ իրավիճակներին խորթ չեն նաև մեղավորության, ընկճվածության զգացումները, ինքնամեղադրանքները, սգի ապրումը և հատկապես վերջինիս պարագայում սգացողի գիտակցության ողորումը մահացածի կերպարով⁶: Հոգեհանգստի կամ թաղման ծեսերին մասնակցությունը բարդ է նաև տարեցների համար, երբ հրաժեշտ են տալիս իրենց տարեկից մեկին, հասկանալով, որ մոտ է նաև իրենց կյանքի մայրամուտը:

Քանիցս առնչվել ենք այնպիսի դեպքերի, երբ մահացածի ընտանիքի մտերիմ անդամը՝ զավակը կամ ամուսինը հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակից է դառնում անմիջապես արտերկրից վերադարձից հետո: Այստեղ կարծես միախառնվում են ամոթի, մեղքի, հանգուցյալին չտրված պարտքի, ավստոսանքի զգացումները:

⁶ **Андрющенко А.В.** Посттравматическое стрессовое расстройство при ситуациях утраты объекта экстраординарной значимости //Психиатрия и психофармакотерапия>>.-2000.- № 4. стр. 104-109.

Ընտանեկան անխախտ կապերը, փոխադարձ օգնության հնարավորությունները, միմյանց հանդեպ փոխադարձ պատասխանատվությունը, հարգանքը կարող է խաթարվել մեկ վարկյանում, երբ ընտանիքում տեղի է ունենում ընտանիքի անդամի՝ տարեցի, ամուսիններից մեկի կամ երեխայի կորուստը: Կարծում ենք, գործնական հոգեբանության խնդիրներից մեկը պետք է լինի նմանատիպ անխուսափելի երևույթների նկատմամբ հասարակության լայն շերտերին հոգեբանական պատրաստումն ընդհանրապես:

Резюме-Трудно недооценивать важность вопросов, рассматриваемых в данной статье. Изменения, происходящие в внутриличностной структуре человека после потери родственника, оставляют свой неизгладимый след в его будущей жизни и деятельности, вызывая необратимые изменения личности. Мы склонны думать, что одна из проблем современной прикладной психологии должна быть работа с членами семьи скончавшихся как с целью **достижения /сохранения/** их психологической безопасности и полноценности, так и их подготовки к восприятию неизбежности этого явления.

Summary-It is difficult to underestimate the importance of the issues deals in this article. Changes in the interpersonal structure after losing (death) a relative, leave an indelible mark on future life and activity of a person, causing irreversible changes in personality. We tend to think that one of the problems of modern applied psychology must be the work with members of family, for both to achieve their psychological safety and usefulness, as well as their preparation for the perception of the inevitability of this phenomenon.

ՄՕՏՇ-Ն ՈՐՈՒԵՍ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԱՐԴԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎԵՐՈՆԻԿԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական համալսարան

Ձևավորված լինելով որպես տարածաշրջանային տնտեսական համագործակցություն՝ ՄՕՏՇ-ն, այնուամենայնիվ, կարող է հանդիսանալ նաև կարևոր հարթակ քաղաքական միջպետական տարաձայնությունների քննարկման համար: Հայաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ևս ՄՕՏՇ անդամ պետություններ են, որոնք, չնայած զբաղեցրած աշխարհագրական դիրքին, ավելի քան երկու տասնամյակ գտնվում են քաղաքական խորը կոնֆլիկտի մեջ, չունեն բաց սահման և հաստատած դիվանագիտական հարաբերություններ: Նման իրավիճակը, բնականաբար խանգարում է պետությունների հետագա տնտեսական և քաղաքական զարգացմանը: Ուստի ՄՕՏՇ-ը և նմանատիպ այլ կազմակերպություններ կարող են կարևոր դեր խաղալ երկկողմ բանակցությունների ճանապարհով նախնական համաձայնության գալու համար:

1991 թվականի մայիսի 1-ին ավարտվել է ՄՕՏՇ-ի որպես տարածաշրջանային կազմակերպություն ձևավորման գործընթացը,¹ բայց, որպես տնտեսական համագործակցային կառույց, այն հռչակվել է 1992 թվականի հունիսի 25-ին Ստամբուլում (Թուրքիա) հրավիրված զագաթնաժողովի ժամանակ՝ սևծովյան տարածաշրջանի տասնմեկ երկրների կողմից (Ադրբեջան, Ալբանիա, Բուլղարիա, Թուրքիա, Հայաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա) ստորագրված հռչակագրի միջոցով: 2004 թվականին կազմակերպությանը որպես անդամ միացել է Սերբիան: Իսկ արդեն 2012 թ. հունիսի 26-ին ընդունվել է ՄՕՏՇ կազմակերպության հիմնադրման 20-ամյակին նվիրված հոբելյանական Հռչակագիրը²:

Միության անվանումից կարելի է ենթադրել, որ անդամ երկրները, որպես պարտադիր պայման, պետք է Սև ծովի հետ ընդհանուր սահման ունենան, սակայն որոշ անդամների օրինակով տեսնում ենք, որ այս կազմակերպության գլխավոր նախապայմանը բոլոր հետաքրքրվող երկրների անդամակցության համար բաց լինելն է: Միակ չափանիշը, որին, անդամակցելու համար, պետությունը պետք է համապատասխանի՝ անդամ երկրների համաձայնությանն արժանանալն է³:

¹ O'Rourke B., East: New Black Sea Organization Sets Sail, RFE/RL, 11 June 1998, <http://www.b-info.com/places/Bulgaria/news/98-06/jun11a.rfe>; www.mfa.gov.tr/grupa/af/bsec.10.htm.

² Նույն տեղում:

³ Hartwig I., lecturer, EIPA, The Black Sea Economic Cooperation Process, p. 3.

ՄՕՏՀ անդամ երկրների կողմից ստորագրված մի շարք պայմանագրեր, հուշագրեր և համաձայնագրեր⁴ ենթադրում են ստեղծել տնտեսական միասնական դաշտ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական կողմերի համար, հետևաբար՝ նպատակաուղիվ են քաղաքական լարվածության վերացմանը և խաղաղ համագործակցային հարթակի ստեղծմանը անդամ երկրների միջև, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև բացակայում են դիվանագիտական հարաբերությունները՝ երկրները չունեն բաց սահման, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող տարածքային հակասությունները դեռ գտնվում են խաղաղ կարգավորման բանակցային փուլում:

ՄՕՏՀ-ը զբաղեցնում է շուրջ 20 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ ընդգրկելով Սևծովյան տարածաշրջանի, Բալկանների և Կովկասի երկրները՝ շուրջ 350 միլիոն բնակչություն: Անդամ երկրների միջև առևտուրը տարեկան գերազանցում է 300 միլիարդ դոլարը⁵: 1998թ. հունիսի 5-ին Յալթայի գագաթնաժողովում անդամ երկրների ղեկավարների կողմից ընդունվել է ՄՕՏՀ Կանոնադրությունը⁶:

ՄՕՏՀ-ը նպատակ ունի նպաստել անդամ երկրների միջև փոխգործակցության ամրապնդմանն ու խորացմանը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժին, բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև Սևծովյան տարածաշրջանում հաստատել խաղաղություն, կայունություն, բարգավաճում և նպաստել անդամ երկրներին՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու գործում⁷: Կազմակերպությունը անկյունաքարային նշանակություն է ունեցել տարածաշրջանում նորանկախ հանրապետությունների տնտեսական կապերի ձևավորման և համաշխարհային տնտեսական կյանքին ինտեգրվելու հար-

⁴ 1. Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման ու ՄՕՏՀ տարածաշրջանում ծովային մայրուղիների զարգացման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր, 2. ՄՕՏՀ չորս անդամ-երկրների՝ Ալբանիայի, Հայաստանի, Մոլդովայի և Թուրքիայի կողմից ստորագրված Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ-երկրների քաղաքացի հանդիսացող բեռնատար մեքենաների վարորդների համար անդամ-երկրներում արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի դյուրացման մասին, 3. Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ-երկրների քաղաքացի հանդիսացող գործարարների համար անդամ-երկրներում արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի դյուրացման մասին համաձայնագրերը: ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ՝ Արտաքին քաղաքականություն-Միջազգային կազմակերպություններ, <http://www.mfa.am/>

⁵ Şenol Ö., Cooperative security in the Black Sea region, The Department of International Relations, Bilkent University, Ankara, September 2003, p. 51.

⁶ Organization of the Black Sea Economic Cooperation, <http://www.bsec-organization.org/>

⁷ Teleke S., Black Sea Economic Cooperation (BSEC) towards Political and Economic Integration, Journal of Global Development and Peace, a publication of the international collage of the University of Bridgeport, spring 2012, p. 26.

ցում: Մինչև ԽՍՀՄ փլուզումը այս տարածաշրջանի երկրների զգալի մասը վերահսկվում էր Խորհրդային Միության կողմից: ԽՍՀՄ կազմալուծումից հետո պարզ դարձավ, որ նախկինում ձևավորված վերահսկողության գոտիները ենթարկվելու են վերաձևումների⁸: Նորանկախ պետություններից շատերում արձանագրվեց տնտեսական բավական ցածր մակարդակ, ինչը պայմանավորված էր մի շարք ներքին խնդիրներով: Ուստի վերոնշյալ տնտեսական միությունը և նմանատիպ այլ կառույցներ կարևոր դեր խաղացին նման պետություններում տնտեսական ամուր հիմք ձևավորելու գործում:

Հայաստանի Հանրապետության տեսակետից բավական շահեկան է ՄՕՏՀ անդամ լինելը, քանզի լինելով ՄՕՏՀ հիմնադիր անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը օգտագործում է այն՝ չեզոքացնելու իր աշխարհագրական մեկուսացումը տարածաշրջանում: ՀՀ-ն, չունենալով ելք դեպի ծով և լարված հարաբերություններ ունենալով Թուրքիայի և Ադրբեյջանի հետ, կազմակերպության շրջանակներում փորձում է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային համագործակցության գործունեությանը՝ պահանջելով բացել տրանսպորտային ուղիները և տարածաշրջանում ստեղծել ազատ ապրանքաշրջանառության հնարավորությունները⁹:

ՄՕՏՀ-ը շրջանակներում տեղի ունեցած հետևյալ իրադարձությունները կարևոր նշանակություն են ունեցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում:

Հարկ է նշել, որ 1993 թվականի ապրիլից Թուրքիան փակել է ՀՀ-ի հետ իր սահմանները, բայց նույնիսկ փակ սահմանների և ուղղակի շփումների բացակայության պայմաններում Թուրքիայի և Հայաստանի միջև առևտուրը գոյություն ունի: Առևտրի հիմնական մասը կազմում է Թուրքիայից ներմուծումը¹⁰: Սա փաստում է այն, որ հայ-թուրքական հարաբերություններում առկա լարվածության առկայության պայմաններում երկու կողմերն էլ, այնուամենայնիվ, հետաքրքրված են եղել առևտրատնտեսական հարաբերությունների բարելավմամբ:

Փակ սահմանների առկայությունը այսօր էլ շարունակում է արդիական մնալ կողմերի համար: Համագործակցային նման կառույցում փակ սահմաններով միջպետական տնտեսական հարաբերությունների զարգացում ապահովելը եթե ոչ անհնար, ապա քիչ հավանական է: Այսօր ևս ՄՕՏՀ գումարած նիստերի ժամանակ բարձրացվում է փակ սահմանների ապաշրջափակման հարցը: Վերոնշյալի վաղ ապացույցներից է ՀՀ ԱԺ փոխնախագահ Է. Շարմազանովի ելույթը Երևանում գումարված ՄՕՏՀ խորհրդարանական վեհաժողո-

⁸ Aybak T., Politics of the Black Sea; Dynamics of Cooperation and Conflict, 2001, p.1-57.

⁹ Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը ՀՀ-ում 1991-2001թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2009, էջ 166:

¹⁰ Гюльтекин Б., Турция-Южный Кавказ: региональная безопасность.-Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, сс-62-63.

վի մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովի 43-րդ նիստի ժամանակ: Նա իր խոսքում մասնավորապես նշել է. «Մենք շահագրգռված ենք Սևծովյան տնտեսական համագործակցության ձևաչափի հետագա զարգացմամբ: Այն պետք է շարունակի ծառայել իր հիմնական նպատակին՝ կայուն ու բարեկեցիկ տարածաշրջանի կայացմանը: Կարևոր է, որ կազմակերպությունն արձագանքի բոլոր մասնակից պետությունների կենսական շահերին: Հայաստանի համար դա առաջին հերթին Թուրքիայի հետ փակ սահմանի ապաշրջափակումն է»¹¹: Հայ-թուրքական հարաբերություններում լարվածություն հարուցող կարևոր կետերից մեկն էլ Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության ընդունման հարցն է: Հարցին լուծում գտնելը նարավաժոր չէ կարճ ժամանակամիջոցում, սակայն երկու կողմերն էլ կարող են այս հարթակում օգտագործել իրենց դիվանագիտական լծակները ընդհանուր հայտարարի հանգելու համար¹²:

Հարաբերություններում առկա լարվածության վերացմանն ուղղված քայլերից է դեռևս 1992թ. հունիսի 23-26-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության այցը Թուրքիա, որի նպատակն էր՝ մասնակցել Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության համաժողովին: Այցի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ նախագահի և Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հանդիպումը: Հանդիպման ընթացքում, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններին, մասնավորապես Լևոն Տեր-Պետրոսյանն ընդգծեց, որ դրանք չպետք է պայմանավորված լինեն հայ-ադրբեջանական հարաբերություններով: Ի պատասխան՝ Ս. Դեմիրելն ընդգծեց, որ սկզբունքորեն իրենք համաձայն են, սակայն Արցախում արյուն է հեղվում, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող ռազմական ընդհարումներն են: Բայց և այնպես, ՀՀ նախագահի այցելությունը Թուրքիա որոշակի դրական ազդեցություն ունեցավ երկկողմ հարաբերությունների վրա¹³:

Սա Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մեջ առաջին նախագահական այցն էր Թուրքիայի Հանրապետություն: Տնտեսական այս կառույցը առիթ էր դարձել երկու երկրների միջև նախագահական հանդիպում կազմակերպելու համար՝ արտաքին քաղաքական ոլորտում հարաբերությունների բացարձակ բացակայության պայմաններում: Ինչպես պարզ է դառնում վերը նշվածից, տնտեսական համագործակցության հարցերից զատ ՀՀ նախագահը և Թուրքիայի վարչապետը քննարկել են նաև քաղաքական

¹¹ <http://www.tert.am/am/news/2014/09/16/>

¹² **Teleke S.**, Black Sea Economic Cooperation (BSEC) towards Political and Economic Integration, Journal of Global Development and Peace, a publication of the international collage of the University of Bridgeport, spring 2012, p. 28.

¹³ **Milliyet**, www.milliyet.com.tr, 27.06.1992.

հիմնախնդիրներ, ինչը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ երկու պետությունների միջև տնտեսական և քաղաքական հարաբերությունների ձևավորումը սերտորեն աղերսվում են միմյանց: Հարկ է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը թուրքական կողմն անմիջականորեն կապում էր Արցախյան հիմնախնդրի լուծման հետ: Թուրքական կողմի վարած այս քաղաքականությունը շարունակվել է հետագայում՝ վճռորոշ ազդեցություն ունենալով նաև Ցյուրիխյան արձանագրությունների տապալման հարցում:

ՄՕՏՀ անդամ-երկրների արտգործնախարարների խորհրդի՝ 1994թ. Մարտի 10-ին ընդունված որոշմամբ՝ Ստամբուլում հիմնադրվել է ՄՕՏՀ Մշտական միջազգային քարտուղարություն: Չնայած երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների բացարձակ բացակայությանը, 2001 թ. օգոստոսից Ստամբուլում սկսել է գործել ՄՕՏՀ-ում Հայաստանի Հանրապետության Մշտական ներկայացուցչությունը¹⁴:

Ուշագրավ է թուրքական լրատվամիջոցների անդրադարձը այս իրադարձությանը: Թուրքական «Ռադիկալ» թերթում տպագրված Արիս Նալչըլիի հեղինակային հոդվածում ասվում է, որ Ստամբուլում՝ ՄՕՏՀ շրջանակներում, Հայաստանի ներկայացուցիչների մեծամասնությունը աշխատում են ՀՀ ԱԳՆ-ում և կարիերային դիվանագետներ են: Այսպես Հայաստանը Թուրքիային մոտիկից ծանոթանալու հնարավորություն է ունենում¹⁵:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում ՄՕՏՀ շրջանակներում Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը միակ պաշտոնական գրասենյակն է Թուրքիայում, այդ պատճառով էլ՝ կարևոր դերակատարություն ունի: Այն մեծացնում է դիվանագետների երկկողմ հանդիպումների հավանականությունը: Նման մակարդակի շփումները, իրենց հերթին, կարող են հանգեցնել պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական լարվածության թուլացմանը:

Այս տնտեսական համագործակցության միջոցով երկկողմ շարունակական հանդիպումներ են տեղի ունենում նաև արտգործնախարարների միջև: Բնականաբար, քննարկումների անքակտելի մասն են դառնում միջպետական քաղաքական խնդիրները:

Հայ-թուրքական հարաբերությունները զարգացնելու և երկու կողմերի հարաբերություններում առկա խնդիրները քննարկելու համար 1997 թ. Փետրվարի 7-ին Ստամբուլում ՄՕՏՀ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ տեղի ունեցավ նաև երկու երկրների արտգործնախարարների՝ Թանսու Չիլլերի և Ալեքսանդր Արզումանյանի հանդիպումը: Հանդիպման ընթացքում անդրադառնալով երկու կողմերի հարաբերությունների բարելավման հարցին՝ Թանսու Չիլլերը հայ-թուրքական հարաբերու-

¹⁴ Միլիլինեթ, <http://civilnet.am>, 13.11.2014.

¹⁵ HayNews.am, <http://www.haynews.am>, 17.12.2013.

թյունների զարգացումը կրկին անգամ կապել էր աղբյուրային գործոնի հետ՝ նշելով, որ հայ-թուրքական հարաբերություններում գոյություն ունեն մի շարք հանգամանքներ, մասնավորապես, հայ-աղբյուրային հակամարտությունը, Թուրքիայի հասարակական կարծիքի բացասական դիրքորոշումը, որոնք թույլ չէին տալիս Թուրքիայի կառավարությանը դիմել երկկողմ հարաբերությունները զարգացնող քայլերի: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել պարբերական հանդիպումներ անցկացնել երկու երկրների ԱԳ նախարարների միջև¹⁶:

Հայաստանի և Թուրքիայի միջև առկա տարաձայնությունները հաղթահարելու և երկու կողմերի հարաբերությունները բարելավելու նպատակով 1998թ. հունիսի 5-ին Յալթայում անցկացվող ՄՇՏՀ անդամ երկրների նախագահների վեհաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Ս. Դեմիրելի և Ռ. Քոչարյանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ինչպես հայ-թուրքական հարաբերությունները, այնպես էլ ԼՂ հիմնահարցի շուրջ ընթացող գործընթացները: ՀՀ նախագահը առաջարկեց բանակցությունների ընթացքում քննարկել հայ-թուրքական հարաբերություններում առկա դժվարին խնդիրները¹⁷:

Հաջորդ կարևոր իրադարձությունը հայ-թուրքական հարաբերություններում ՄՇՏՀ շրջանակներում՝ Յուրիխյան արձանագրությունների տապալումից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի 2013 թվականին կատարած այցն էր Հայաստան: Նա դեկտեմբերի 12-ի առավոտյան ժամանել էր Երևան՝ մասնակցելու ՄՇՏՀ արտգործնախարարների 29-րդ նիստին¹⁸:

Հարկ է նշել, որ Ա. Դավութօղլուին ուղեկցող պատվիրակության մեջ ընդգրկված էին Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթի խմբագիր Ռոբեր Քոփթաշը և «Յենի շաֆաք» թերթի հոդվածագիր Մարգար Եսայանը: Բայց ամենամեծ անակնկալը Սամսոն Օզարարատի ներկայությունն էր թուրքական պատվիրակության մեջ: Վերջինս մինչ այդ ՄՇՏՀ գործադիր խորհրդում Հայաստանի ներկայացուցիչն էր եղել, ով վերոնշյալ պահին որևէ պաշտոն չէր զբաղեցնում¹⁹: Ա. Դավութօղլուի այս քայլը միտված էր միջազգային հասարակությանը ցույց տալ, որ երևանյան կարճատև այցի ընթացքում թուրքական կողմը այս կերպ ցանկանում է ձեռք մեկնել հայկական կողմին:

¹⁶ Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսություն և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 110-111:

¹⁷ Հայաստան-Թուրքիա Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսություն և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 111:

¹⁸ Ermeni Haber Ajansi, <http://www.ermenihaber.am/tr>, 12.12.2013.

¹⁹ Hurriet Daily News, <http://www.hurriyetdailynews.com>, 12.12.2013.

Ուշագրավ է, որ թուրքական մամուլում Դավութօղլուի այցը ոչ թե դիտարկվում էր ՄՕՏՀ կազմակերպության համաժողովի շրջանակում, այլ փորձ էր արվում միջազգային հանրությանն այն ներկայացնել որպես Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլ: Դա այն դեպքում, երբ թե՛ Ա. Դավութօղլուն, թե՛ Թուրքիայի արտաքին գերատեսչական մարմինները նշում են, որ հատուկ ուշադրություն չպետք է դարձնել այցին, քանի որ այն ՄՕՏՀ կազմակերպության շրջանակում կայանալիք հերթական հանդիպումն էր:

Անդրադառնալով Դավութօղլուի այցին՝ թուրքական «Հյուրիյեթ» թերթը գրում էր. «Արդեն սկսվել են Հայաստանյան իր պաշտոնակցի հետ տեղի ունենալիք հանդիպման համար նախապատրաստական աշխատանքները: Սպասվում է, որ այդ հանդիպմանը Հայաստանի ու Ադրբեջանի միջև ծագած դարաբաղյան հիմնախնդրի լուծման բանակցային գործընթացի հետ միասին կքննարկվի նաև ցյուրիխյան արձանագրությունների վերակենդանացման հարցը»²⁰:

Մեկ այլ անդրադարձ՝ Ա. Դավութօղլուի երեւանյան այցին, կատարել էր թուրքական ամենահայտնի թերթերից մեկը՝ «Ջաման»-ը: Հոդվածը սկսվում է դիտարկմամբ, թե Ա. Դավութօղլուի այցը 1915թ. իրադարձությունների 100-րդ տարելիցի նախօրեին է: «Ջաման»-ը Ա. Դավութօղլուի այցը համեմատում է Թուրքիայի նախկին արտգործնախարար Ալի Բաքաջանի այցի հետ, ով 2009թ.՝ կրկին ՄՕՏՀ կազմակերպության համաժողովի ընթացքում, հանդիպեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Էդվարդ Նալբանդյանի հետ, ինչից հետո թափ ստացավ հայ-թուրքական հատնի «Ֆուտբոլային դիվանագիտությունը»²¹:

Այս համեմատությունը թույլ է տալիս ենթադրել, որ թուրքական ՋԼՄ-ները իրենց արտգործնախարարի այցին տալիս են քաղաքական կարևոր նշանակություն՝ այն համարելով հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու միջոց: Կարևոր է ընդգծել լրատվամիջոցի կողմից արված նկատառումը, որը անդրադառնում էր 1915թ. իրադարձություններին: Այս կերպ թուրքական կողմը փորձում է ցույց տալ, որ հայերի ցեղասպանության հիմնահարցը շարունակում է մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության կիզակետում:

Այսպիսով, վերոնշյալ օրինակներից պարզ է դառնում, որ ՄՕՏՀ շրջանակներում հայ-թուրքական կողմերը ունեցել են մի շարք տարբեր մասշտաբների հանդիպումներ՝ խորհրդարանական հանդիպումներից մինչև նախագահական: Հարկ է ընդգծել, որ հայ-թուրքական երկկողմ բոլոր հանդիպումներում, անպայմանորեն քննարկվել են նաև երկու երկրների միջև գոյություն ունեցող քաղաքական խնդիրները:

²⁰ Hurriyet Daily News, <http://www.hurriyetdailynews.com>, 11.12.2013.

²¹ Հայկական Ժամանակ, <http://armtimes.com>, 10.12.2013:

Քանի որ Հայաստանի և Ադրբեջանի միջև չկան հաստատված դիվանագիտական հարաբերություններ, ՄՕՏՀ-ն այս դեպքում ևս անուղղակիորեն դառնում է այն բացառիկ հարթակներից մեկը, որտեղ խաչվում են երկու պետությունների շահերը: Ադրբեջանն այն հմտորեն օգտագործում է քաղաքական շահարկումների համար:

Չնայած ՄՕՏՀ խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ՄՕՏՀ ԽՎ) նիստերի ժամանակ բազմիցս նշվել է, որ միությունը կրում է բացառապես տնտեսական բնույթ, ադրբեջանական պատվիրակները, օգտագործելով ցանկացած հարմար առիթ, Հայաստանին ներկայացնում են որպես ագրեսոր երկիր, որը օկուպացրել է իրենց երկրի տարածքի 20 տոկոսը: Հայկական կողմը, իր հերթին, բազմիցս դիմել է հակադարձ քայլերի: Ասել, որ այս հայտարարություններն ազդեցություն չեն ունենում մյուս անդամ երկրների ներկայացուցիչների վրա՝ սխալ կլինի:

Նման հակասությունների օրինակներից է Բուլղարիայում՝ ՄՕՏՀ երկրների խորհրդարանական համագործակցության 41-րդ վեհաժողովի ընթացքում, ադրբեջանական ու հայկական պատվիրակությունների միջև տեղի ունեցած բախումը, որի պատճառը ադրբեջանական պատվիրակության անդամ Ասադ Հաջինի ելույթն էր եղել, ով նկարագրելով իր երկրի խնդիրները, ասել էր, թե Ադրբեջանը կարող էր տուրիզմի բնագավառում ավելի շատ հաջողություններ ունենալ, եթե իր տարածքի «20 տոկոսն օկուպացված չլիներ» Հայաստանի կողմից²²: Հայկական կողմը, իր հերթին, Թուրքիայի Տրապիզոն քաղաքում տեղի ունեցած ՄՕՏՀ ԽՎ 36-րդ լիազումար նիստի ժամանակ՝ ի դեմս հայաստանյան պատվիրակության ղեկավար Գագիկ Մինասյանի, անդրադարձել է Ադրբեջանի կողմից Ջուլայի հայկական խաչքարերի ոչնչացմանը: Նշվել էր, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր հատուկ որոշումով դատապարտել էր 2005 թվականին հազարից ավելի հայկական խաչքարերի ոչնչացումը²³:

Հատկապես կարևոր է նշել, որ ադրբեջանական կողմը ապակառուցողական քաղաքականություն է ցուցաբերում ՄՕՏՀ շրջանակներում համաձայնագրերի կնքման հարցերում, որը բացասաբար է անդրադառնում տարածաշրջանում Հայաստանի տնտեսական աճի վրա: Ադրբեջանի ցուցաբերած անհանդուրժողականությունը՝ ՄՕՏՀ ծրագրերում Հայաստանի մասնակցության հանդեպ, գալիս է ապացուցելու այն փաստը, որ երկու երկրների միջև առկա քաղաքական հակասությունները անվիճելի ազդեցություն են թողնում հավանական տնտեսական համագործակցության վրա:

Նման օրինակ կարող է հանդիսանալ Սևծովյան օդակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին փոխըմբռնման հուշագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության վերապահումը՝ ստորագրված ԱԳ նախարար

²² Trend News Agency, <http://www.trend.az>, 11.09.2013.

²³ HayNews.am, <http://www.haynews.am>, 12.11. 2010.

Էլմար Մամեդյարովի կողմից: Վերապահումում ասվում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Սևծովյան օղակաձև մայրուղու համաձայնեցված զարգացման մասին» Փոխըմբռնման հուշագրում ամրագրված ոչ մի իրավունք, պարտավորություն կամ դրույթ չի կիրառվում Ադրբեջանի Հանրապետության կողմից իր տարածքը հատող ճանապարհների կամ փոխադրամիջոցների նկատմամբ, որոնց համար Հայաստանի Հանրապետությունը մեկնման, տարանցման կամ նպատակակետ տարածք է²⁴:

Հայկական կողմը, առարկելով Ադրբեջանի Հանրապետության այս վերապահման դեմ, հայտարարել է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից կատարված վերապահումը լինելով ընդհանուր բնույթի և անորոշ, չունենալով կիրառման հստակ սահմաններ և պայմաններ՝ անհնարին է դարձնում նշված Փոխըմբռնման հուշագրի՝ ոչ միայն Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև կիրառումը, այլև նման բովանդակությամբ վերապահումն անհնար է դարձնում համագործակցությունը ՄՕՏՀ անդամ պետությունների միջև վերոնշյալ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Հայաստանի Հանրապետությունը գտնում է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Փոխըմբռնման հուշագրի նկատմամբ կատարված վերապահումը հակասում է այդ հուշագրի առարկային և նպատակին, որն անթույլատրելի է միջազգային իրավունքի տեսանկյունից²⁵:

Ուսումնասիրելով հայ-ադրբեջանական փոխհարաբերությունները ՄՕՏՀ շրջանակներում՝ հանգում ենք այն եզրակացության, որ քաղաքական հիմնախնդիրները մեծապես խանգարում են տարածաշրջանում տնտեսապես ավելի զարգանալ թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին: Ղարաբաղյան հարցը կոնֆլիկտի անմիջական մասնակից է դարձնում նաև Թուրքիային: Հարկ է նշել, որ Թուրքիայի կողմից Հայաստանի հետ ընդհանուր ահմանի փակման համար պատճառ էր հանդիսացել հենց Ղարաբաղյան հարցը: Թուրքիան բացահայտորեն պաշտպանում է Ադրբեջանի շահերը այս հարցում, ինչի համար պատճառ են հանդիսանում նաև երկու երկրների միջև գոյություն ունեցող մշակութա-կրոնական սերտ կապերը: Այսպիսով, ևս մեկ առիթ է ստեղծվում՝ հայ-թուրքական հարաբերությունների առավել սրման համար²⁶: Ուստի այդ հիմնախնդիրներին լուծում տալը բխում է միաժամանակ երկու երկրների շահերից: Չնայած ՄՕՏՀ ԽՎ նիստերի ընթացքում երկու պետությունների ներկայացուցիչները հաճախ են բռնվում բանավեճերի և, համապատասխանաբար, պետությունների անունը հաճախ է շահարկվում, փակ սահմանների պայմաններում, սա կարևոր հարթակ է խորհրդարանական

²⁴ Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին փոխըմբռնման հուշագիր, 19.04.2007, Բելգրադ:

²⁵ Նույն տեղում:

²⁶ **Teleke S.**, Black Sea Economic Cooperation (BSEC) towards Political and Economic Integration, Journal of Global Development and Peace, a publication of the international collage of the University of Bridgeport, spring 2012, p. 28.

դիվանագիտության միջոցով երկկողմ բանակցությունների գնալու համար, որն էլ կարող է հանգեցնել քաղաքական լարվածությունը թուլացնելուն միտված որոշումների ընդունմանը:

Резюме–ОЧЭС-созданный странами черноморского региона в 1992г. в Турции как экономическая организация, является важной платформой для формирования и укрепления политических отношений и решением межгосударственных конфликтов. Принимая тот факт, что иностранная политика и экономика стран-членов непосредственно связаны друг с другом, надо уделять большое внимание к этому региональному сотрудничеству с политической точки зрения.

Цель статьи-раскрывать внешне политическо-дипломатическое сторону ОЧЭС. Почти все члены ОЧЭС имеют межгосударственные политические конфликты друг с другом (Армения-Азербайджан, Армения-Турция, Грузия-Россия, Сербия-Албания, Греция-Турция и.т.). По этому это важная платформа для решение региональных конфликтов, а так же для создание и укрепление межгосударственных отношениях. Надо заметит, что ОЧЭС с этой точкой зрения не достаточно изучен.

Sumarry-BSEC-made by countries of Black Sea region as an economic cooperation in Turkey in 1992, is an important platform for forming and developing political collaborations between member-countries and solving political issues. Considering the fact, that foreign policy and economy of member-countries are directly connected to each other, countries have to pay attention to this regional economic cooperation at political point of view.

The aim of article is revealing political-diplomatic side of BSEC. Nearly all member countries of BSEC have intergovernmental political conflicts with each other (Armenia-Azerbaijan, Armenia-Turkey, Georgia-Russia, Serbia-Albania, Greece-Turkey etc.). So this is important platform for solving regional conflicts as well as forming and strengthening intergovernmental relations. It is important to mention, that BSEC isn't studied sufficiently from this point of view.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՏՈՆՈՑԱՆ *Վանաձորի պետական համալսարան*

«Վա՛յ նրան, ով տունը շինում է
ոչ արդարությամբ և
վերնահարկ է
կառուցում ոչ իրավունքով:»
Փ. Բուզանդ

Հասարակական գիտակցության ոլորտներից մեկը, որը հանրային կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու կարևորագույն սոցիալական գործառնություն է կատարում, բարոյականությունն է: Բարոյական դաստիարակությունը որոշակիորեն ներառում է նաև անձի իրավական դաստիարակությունը, աշակերտների ծանոթացումը սոցիալական պետության օրենքներին և նորմերին, ՀՀ քաղաքացիների իրավունքներին և պարտականություններին:

Մեր երկրի կայացման և զարգացման համար անհրաժեշտ է մշակել սովորողների բարոյաիրավական ռազմավարությունը, նրանց իրավական և բարոյական ինքնագիտակցության բարձրացման համար կատարել լուսավորչական մի շարք աշխատանքներ: Չափազանց կարևոր է սովորողների, ապագա քաղաքացիների գիտակցության մեջ ձևավորել դրական վերաբերմունք դեպի իրավունքը, որպեսզի քաղաքացին պահի օրինականությունը հենց գիտակցական մակարդակում, այսինքն՝ գնահատի և արժևորի իրավունքի սոցիալական նշանակությունը: Քաղաքացու գիտակցության մեջ պետք է ձևավորել սկզբունքայնություն դեպի օրենքը, սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ նա իրավական նորմերի պահանջները կատարի ոչ թե այն պատճառով որ այդպես է պետք, այլ ուղղակի այդպես ճիշտ է:

Ե՛վ իրավունքը, և՛ բարոյականությունը պետք է արմատավորել երեխայի մեջ ի սկզբանե: «Երեխայի իրավական և բարոյական դաստիարակությունը էական և արդիական հիմնախնդիր է: Եթե բոլոր երեխաներին օժտենք իրավական մշակությամբ, ապա արդյունքում կունենանք իրավական հասարակություն, հետևաբար նաև իրավական պետություն»¹: Վ. Ն. Խրոպանյուկը նշում է. «Իրավական օրենքներն իրենցում մարմնավորում են մարդա-

¹ Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն», «Մանկավարժ» 2005, էջ 340:

սիրության, արդարության, մարդկանց հավասարության սկզբունքները: Այսինքն՝ իրավական պետության օրենքներն իրենցում մարմնավորում են ժամանակակից հասարակության բարձրագույն բարոյական պահանջները»²:

Ուսումնասիրության **նպատակն է** պարզել, թե ինչ ձևերով ու մեթոդներով կարելի է սերմանել այդ որակները երեխաների մեջ:

Նպատակի իրականացման համար առաջ ենք քաշում հետևյալ **հիմնախնդիրները**.

Հանգամանորեն ուսումնասիրել իրավունքի և բարոյականության բուն էությունը: Կատարել բարոյական և իրավական նորմերի համեմատական վերլուծություն: Պարզել, թե ուսուցման ինչպիսի՞ մեթոդներ կարելի է կիրառել նպատակամետ գործունեությանը հասնելու համար:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք գրական աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն, գրույցի և դիտման մեթոդները:

Քաղաքակրթության զարգացման պատմությունը վկայում է, որ իրավունքը և բարոյականությունը, որպես հասարակության մշակույթի բաղկացուցիչ մաս, օրգանապես կապված են միմյանց: Ամենից առաջ դրանք մարդկության կողմից մշակված հոգևոր արժեքներ են: Իրավունքը և բարոյականությունն այն իրողություններն են, որոնցում ամփոփվում են մարդկանց գիտակցված կեցությունը: Միևնույն հասարակության իրավունքը և բարոյականությունն արտահայտում են նրա շահերը: Իրավունքի բարոյական հիմքը հանդիսանում է իրավունքի ընդհանուր կարգավորիչ ներուժը, ըստ որի իրավունքը պետք է լինի բարոյական, օրենքները պետք է լինեն արդարացի և մարդասիրական:

Էմանուիլ Գանտի ժամանակներից գոյություն ունի համոզմունք, որ բարոյական ոլորտը ընդգրկում է սոսկ մարդու ներաշխարհը, այդ պատճառով արարքը գնահատել որպես բարոյական կամ ոչ բարոյական կարելի է միայն այն անձի նկատմամբ, ով այն գործել է: **Ստենդալը** գրում է. «*Ես մարդու բնավորությունն եմ անվանում նրա բարոյական սովորությունների ամբողջությունը*»³: Արտաքինում բարոյական նորմերը դրսևորվում են՝ պայմանավորված կյանքի այս կամ այն վիճակով, որում հայտնվում է անհատը, այսինքն՝ բարոյական նորմերը մարդուն դրսից տրված պահանջներ են: Բայց և այնպես, այս երկու տեսակները նույնպես օրգանապես միահյուսված են: Բարոյական նորմերը կարգավորում են ոչ թե մարդու «ներքին» աշխարհը, այլ փոխհարաբերությունները մարդկանց միջև:

Ռուս գրող Վադիմ Շերշենևիչը կարծում էր. «*Բարոյականությունը ներկայացնում է մարդու ոչ թե ինքն իր նկատմամբ պահանջներ, այլ մարդու նկատմամբ հասարակության պահանջները*»⁴:

² Վ. Ն. Խրոպալնուկ, «Պետության և իրավունքի տեսություն», Երևան, 1997, էջ 24:

³ Ս. Մանուկյան «Ընդհանուր մանկավարժություն», Երևան 2005, էջ 72:

⁴ Վ. Ն. Խրոպալնուկ, «Պետության և իրավունքի տեսություն», Երևան, 1997, էջ 239:

Բ. Ֆրանկլինը ներկայացնում է բարոյական դաստիարակության իրականացման մի հիմնալի պատկերացում. «*Եթե խաբեբաները իմանային ազնվության բոլոր առավելությունները, ապա հանուն իրենց շահերի կդադարեին խաբեբայությամբ զբաղվել*»⁵: Համանման եզրակացության է հանգել նաև **Ա. Մմիթը**. «*Որպեսզի մարդկանց սովորեցնես սիրել արդարությունը, հարկավոր է նրանց ցույց տալ անարդարության հետևանքները*»⁶:

Ի. Կանտը մարդկանց ուշադրությունը հրավիրում է մարդու բարոյական արժեքների վրա, բողոքելով հասարական անդամ վարքագծի դրսևորումների, հասարակական կյանքում մեքենավարության դեմ: **Արժեքները կարգավորում են մարդկային հարաբերությունները, որոնք հիմնված են պարտքի, իդեալների և նորմերի վրա:** Ի. Կանտն արժեքը դիտարկում է որպես *բարոյականության ոլորտի* հատուկ դիրքորոշում: Արժեքների փիլիսոփայական դասական կոնկրետ իմաստով, այն մարդու և հասարակության դրական և բացասական երևույթների բացահայտման, շրջապատող աշխարհի սոցիալական յուրահատուկ օբյեկտների սահմանն է: Ամենաբարձր բարոյական պատվիրանը, որը ասել է Ի. Կանտը հետևյալն է. «...քո անունից մարդկության հետ վարվիր այնպես, ինչպես նպատակի հետ, և ոչ մի անգամ մի վերաբերվիր ինչպես միջոցի»: Ըստ Ի. Կանտի, սա **բարոյականության բարձրագույն սկզբունքն** է: Միայն այս դեպքում, աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, որը կառուցվում է յուրաքանչյուրիս կողմից, կլինի ներդաշնակ: Հարկ է նշել, որ բարոյականության այս «Ոսկե կանոնը» նշված է Ավետարանի քարոզում. «վարվիր այնպես ինչպես կուզենաս, որ քեզ հետ վարվեն ...» (Մատթ. 7, 12): Իրավունքի և բարոյականության միասնությունը կայանում է նրանում, որ երկուսն էլ կոչված են կատարելու հասարակական կյանքի կարգավորման և բարելավման հետ կապված առաքելությունները:

Իրավունքի և բարոյականության մերձեցման արդյունքում, որպես նորմատիվ երևույթներ, որոշվում են սուբյեկտների պարտադիր և հնարավոր գործողությունների սահմանները: Հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում իրավունքի և բարոյականության պահանջները համընկնում են: Այդ հանգամանքը հաշվի առնելով, **Վ. Ն. Խրոպանյուկը** գրում է. «Իրավական նորմերի ճշգրիտ իրականացումը միաժամանակ նշանակում է հասարակական կյանքում բարոյականության պահանջների մարմնավորում»⁷: Եվ հակառակը՝ բարոյական նորմերը մեծ ազդեցություն են թողնում օրինականության և իրավակարգի ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և իրավական շահերի պաշտպանության վրա:

⁵ **Ա. Մանուկյան** «Ընդհանուր մանկավարժություն», Երևան 2005, էջ 75:

⁶ Նույն տեղում, էջ 75:

⁷ **Ն. Ա. Ապիյան, Ս. Ն. Ապիյան, Գ. Հ. Սաֆարյան** «Իրավունքի տեսության հիմնահարցեր», Երևան, 2003, էջ 89:

Իրավունքի և բարոյականության սերտ փոխգործակցությունը չի նշանակում, որ դրանց միջև չեն ծագում տարաբնույթ բախումներ: «Իրավունքի և բարոյականության միջև հակասությունների պատճառները, գրում է **Ն. Բ. Մատուզովը**, կայանում են արդեն դրանց առանձնահատկություններում, որոնք ունեն կարգավորման տարբեր մեթոդներ, տարբեր մոտեցումներ, չափանիշներ՝ սուբյեկտի վարքագիծը գնահատելիս»⁸: Բարոյական և իրավական նորմերը տարբերվում են ըստ գոյության եղանակի: Իրավական նորմեր են պարունակում օրենսգրքում, ՀՀ նախագահի հրամանագրերում, կանոնադրություններում և պետական մարմինների իրավական այլ ակտերում: Իսկ բարոյական նորմերը փոխանցվում են սերնդեսերունդ՝ որպես բարու և չարի, վեհանձնության, բարոյականության և անբարոյականության մասին ընդունված պատկերացումներ՝ արտահայտված վարքագծային դրսևորումներում կամ գրականության և արվեստի ստեղծագործություններում: Բարոյական նորմերն իրավական նորմերից տարբերվում են նաև ըստ իրենց գործողության ոլորտի: Դրանք ընդգրկում են հարաբերությունների շատ ավելի լայն շրջան, քան իրավական նորմերը: **Լ. Ն. Տոլստոյը** ծերության տարիներին գրած «Նամակ ուսանողին՝ իրավունքի մասին»-ում իրավունքը շատ հակիրճ բնորոշում է որպես «եղկելի կեղծիք», **Լ. Լ. Լոպտովը** «Պատմական նամակներում» գրել է «ազնվության փոխարինումը օրինականությամբ հետադիմական երևույթ է», *Կիստյակովսկին* նշում է, որ իրավունքը արտաքին ազատությունն է, որը պայմանավորված է հասարակական միջավայրով, ուստի հարաբերական է, մինչդեռ ներքին ազատությունը՝ հոգևորը, հաստատուն է ամենուր, և այդ պատճառով իրավունքը պետք է ստորադասել հոգևոր արժեքներին: *Բերդյաևը* իրավակարգը բնորոշում է որպես օրինականացված անվստահություն, որն ունի մարդը մարդու նկատմամբ: Նա հավատն առ սահմանադրությունը բնորոշում է որպես խղճուկ հավատ և հավելում, որ հավատը պետք է ուղղել ավելի արժանի ուղղությամբ, օրինակ՝ հավատը ուղղել դեպի բարոյական արժեքները: Նրանք կոչ են անում գնալ դեպի բարոյական կատարելություն, սակայն չեն նշվում այն կիրառական քայլերի համակարգը, որը կհասցնի նպատակին և այլևս կարիք չի լինի հասարակական հարաբերությունները կարգավորել իրավունքի միջոցով: Իսկ շարքային քաղաքացու գիտակցությունում արմատավորվում է իրավունքի երկրորդականության գաղափարը առանց ըմբռնելու, որ պետք է հասնել այն մակարդակին, որ իրավունքի դերը երկրորդական դառնա, ինչը, սակայն, պարզ խաբկանք է, քանի որ իրավունքի գործողության արդյունավետությունը հենց նրա ներքին բարոյականության մեջ է:

Իրավունքի և բարոյականության միջև տարբերությունն անհրաժեշտ է փնտրել պատասխանատվության ձևերում: Բարոյականության նորմերի

⁸ **Ն. Ա. Ապիյան, Ս. Ն. Ապիյան, Գ. Հ. Մաֆարյան** «Իրավունքի տեսության հիմնահարցեր», Երևան, 2003, էջ 90:

խախտումը առաջ է բերում հասարակական պարսավանք, իսկ իրավունքի նորմերի խախտումը՝ քաղաքացիների իրավունքների և ազատության սահմանափակման հետ կապված պատժամիջոցներ: Պատժամիջոցները կարող են լինել տարբեր՝ տուգանքից մինչև ազատազրկում:

Երեխայի մեջ բարոյական և իրավական դաստիարակություն սերմանելու համար երեխաներին պետք է ցույց տալ դրանց կարևորությունը կյանքում: Այդ որակները երեխաների մեջ սերմանելու համար անհրաժեշտ է ներկայացնել բարոյական թեմայով պատմություններ, իրավական թեմայով օրինակներ, որպեսզի նրանք հասկանան, թե ոլորտի խաթարումը ինչի կհանգեցնի: Հարկավոր է զրույց ծավալել բանավեճի տեսքով, հնարավորություն ստանալով լսելու երեխայի տեսակետը, հարկ եղած դեպքում ուղղել այն և ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնել:

Բանավեճը պետք է իրականացնել նախապես մշակված հարցերի միջոցով կամ որևէ մեկի օրինակով, քանզի օրինակի ուժը մեծ է ու վարակիչ: Կարելի է վերլուծել որևէ կինոնկար, քննարկել կարդացած գիրքը, քննարկել կինոնկարի կամ կարդացած գրքի հերոսների արարքները և՛ իրավական և՛ բարոյական տեսանկյունից: Ե՛վ բարոյական, և՛ իրավական ոլորտը քննարկելու համար կարելի է կիրառել պատմություններ, որտեղ օրենքը թույլ է տալիս մի բան, իսկ բարոյականությունը արգելում է այն: Քննարկման կարող են դրվել ոչ միայն պատմություններ, այլև ցիտատներ, մտքեր:

Իրավական դաստիարակությունն ապահովելու համար անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ՝ առաջ քաշելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան» և «ՀՀ Սահմանադրությունը»: Երեխան պետք է կարողանա ընդհանուր առմամբ բացատրել Կոնվենցիայի և Սահմանադրության բովանդակությունը, մեկնաբանել նպատակները, համեմատել համանման փաստաթղթերի հետ: Եվրոպական կոնվենցիայի ուսումնասիրության նպատակն այն է, որ սովորողների մոտ զարգացնի ճանաչողական ընդունակությունները և հետաքրքրությունները իրավական գիտելիքների, մադու իրավունքների հետ առնչվող միջազգային փաստաթղթերի նկատմամբ: Բարոյական և իրավական նորմերի փոխգործակցությունը ավելի ցայտուն ներկայացնելու համար քննարկենք «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայից» որոշ դրույթներ և համեմատենք ՀՀ Սահմանադրության հոդվածների հետ, որոնց մեջ տեսանելի է դրանց անքակտելի կապը: Օրինակ՝

Եվրոպական Կոնվենցիայի «Իրավունքներ և ազատություններ» բաժնի Հոդված 2՝ -ը սահմանում է կյանքի իրավունքը: «Յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունք պահպանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող մարդուն զրկել կյանքի իրավունքից՝ չհաշված հոդվածում առկա որոշ կետերի: Ոչ ոք բարոյապես իրավասու չէ մարդուն զրկել սեփական կյանքից»: Մույն

հոդվածը կարող ենք համեմատել ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխի 15-րդ հոդվածի հետ:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 3-ը կարող ենք համեմատել ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխի 17-րդ հոդվածի հետ: Ըստ որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի: Այստեղ ուշադրությունը պետք է ուղղել **անմարդկային** բառի վրա: Այն ինչը անմարդկային է, ուրեմն դեմ է խղճին, արդարությանը, ազնվությանը: Օրենքները մեր արտաքին դատավորներն են, իսկ խիղճը մեր ներքին դատավորն է: Իսկ արդարությունը բարձրագույնն է բոլոր առաքինություններից:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 9-ը սահմանում է մտքի, խղճի և կրոնի ազատություն: Կարևորվում է խղճի ազատությանը՝ իբրև բարոյականության խորհրդանիշ: Ինչպես բնութագրել է Ցիցերոնը **«Մարդու ամենագլխավոր գարդարանքը մաքուր խիղճն է»**: Սույն հոդվածը կարող ենք համեմատել ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխի հոդված 26-ի հետ:

Ուսումնասիրություններ ենք կատարել Վանաձորի թիվ 6 և 20 հանրակրթական հիմնական դպրոցների 7-9-րդ դասարաններում: Ուսումնասիրության համար օգտագործել ենք բարոյագիտական և իրավագիտական բովանդակություն պարունակող տեքստերի ընթերցումներ: Կատարելով սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մշակութային վերլուծություն, քննության ենթարկելով տեքստերի ներգործության արդյունքները սովորողների վրա, եկել ենք այն եզրակացության, որ որոշ դեռահասների մոտ նկատվող դաժանության պատճառն այն է, որ մանկական չարաճճիությունները չեն զուգակցվել խելացի կարգապահության և ծագող մարդկայնության հետ: Այդ դեպքում ազատությունը դառնում է կամայականություն, հնարագիտությունը՝ դաժանություն: Դաստիարակության խնդիրն է «խեղդել» այդ որակները, թույլ չտալ, որ հասունանան, որպեսզի «ծաղկի» մարդկայնությունը: Սովորատեսը գրում է. «Մարդիկ չգիտեն, թե որն է լավը, այլապես միշտ դեպի լավը կձգտեին»⁹:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ իրավական պետություն կառուցելու և քաղաքացիական հասարակություն ստեղծելու համար պետք է հաղթահարել այդ չիմացությունը, որին այլ կերպ անվանում ենք նիհիլիզմ, իսկ դա հնարավոր է այն ժամանակ, երբ իրավական դաստիարակությունը երկրում հռչակվի պետության գործունեության գերակա ճյուղ և կմշակվեն համապատասխան համալիր գործողություններ, կսահմանվեն դրանց իրականացման հսկողական և վերահսկողա-

⁹ Л. П. Крившенко «Педагогика», Москва, 2005, ст. 115.

¹⁰ Ս. Մանուկյան «Ընդհանուր մանկավարժություն», Երևան 2005, էջ 76.

կան կառուցակարգեր, ինչը, սակայն, միշտ չէ որ նպատակահարմար է իշխանական ղեկին նստած անձանց համար, քանի որ իրավապես դաստիարակված քաղաքացին պահանջող քաղաքացի է: Իրավական դաստիարակության ընթացքում կարևոր է յուրաքանչյուր քաղաքացու մոտ ձևավորել ճիշտ ըմբռնում՝ ուղղված հասարակության կյանքում իրավունքի անհրաժեշտությանը, նրա արժեքին ու համապարտադիրությանը: Պետք է զարգացնել սեփական արժանապատվության զգացումը, պետք է ամրապնդել քաղաքացիների մեջ նրանց ճշմարտացի խոսքը լսելի դարձնելու և պաշտպանվածության պահանջը, պետք է հասնել այն մակարդակին, որ քաղաքացու մեջ ցանկություն և ձգտում լինի պայքարելու ոչ միայն իր, այլ նաև այլոց խախտված իրավունքների համար: Չպետք է թույլ տալ, որ հասարակության մեջ արմատավորվի այնպիսի գաղափար ինչպիսին է՝ «օրենքը սյան պես է՝ բարձրանալը դժվար է, շրջանցելը՝ հեշտ»: Բարոյաիրավական դաստիարակությունը պատրաստում է հասարակության սոցիալապես ակտիվ անդամի, որը գիտի իր իրավունքներն ու պարտականությունները և կարողանում է պաշտպանել դրանք բոլոր օրինական ճանապարհներով, խոսքը գնում է քաղաքացու մասին, ով սուր է արձագանքում անարդարությանը և անօրինությանը, հարգում է օրենքն ու կարգը, հակադարձում է իրավախախտումներին և իրավական ամենաթողությանը, այսինքն հենց իրեն՝ իրավական նիհիլիզմին:

Բարոյական նորմերն իրենց հերթին իրավունքը լրացնում են բարոյական խորը բովանդակությամբ՝ օժանդակելով իրավական կարգավորման արդյունավետությանը:

Իրավունքի նորմերը պահպանելու պարտավորությունն իրավական պետության բոլոր քաղաքացիների բարոյական պարտքն է: Իրավունքը նախանշան է պահպանելու օրենքները, դրան է ձգտում նաև բարոյականությունը:

Резюме–В социальной жизни сферы морали и права взаимосвязаны. В статье представлены идеи моральной и правовой норм, их сходство. Выясняются особенности моральных и правовых норм в развитии ребенка, возникновение проблем в этой сфере. Предлагаются методы, с помощью которых можно прививать учащимся международные нормы морали и права, предотвращать возникающие проблемы.

Summary–The morality and law are interconnected in the sphere of social life. The article gives the idea of moral and legal norms and their similarities. The author tries to find out what kind of problems do appear in the process of child's moral and legal development process and what methods can be used to establish these norms in them.

**ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ԹՈՒՐԳԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

ՄԻՓԱՆ ԿԵՍՈՑԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի նկատմամբ օսմանյան կայսրության կողմից կատարվել է զարհուրելի հանցագործություն՝ ցեղասպանություն, որի հետևանքով հայ ժողովուրդը տվել է շուրջ 1,5 միլիոն զոհ, կրել հսկայական նյութական և բարոյական վնաս:

Նախորդ մեկդարյա ժամանակաշրջանում ցեղասպանության հիմնախնդիրը քննարկվել է հիմնականում պատմական փաստերի վերլուծության տեսանկյունից և չի քննարկվել ներկայիս Թուրքիային՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հարցը: Մոտավոր հաշվարկները վկայում են, որ 1945-1987թթ, պետությունների կողմից իրականացված զանգվածային կոտորածների թիվը մոտ 1.05-ից մինչև 2.5 անգամ գերազանցում է 1945-1980թթ. տեղի ունեցած բոլոր պատերազմների զոհերի թիվը¹: Եվ սա հետևանք է անպատժելիության: Այժմ առավել քան երբևէ անհրաժեշտություն է առաջանում ոչ վաղ անցյալում հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության հարցը իրավական կարգավորման դաշտ տեղափոխելու համար:

Հայաստանի 3-րդ Հանրապետության ձևավորմամբ սկիզբ դրվեց հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության հիմնախնդիրը իրավական հարթություն տեղափոխելու գործընթացին, մասնավորապես ՀՀ անկախության հռչակագրի 11-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում իրագործված ցեղասպանության միջազգային ճանաչմանը²: Վերոհիշյալ դրույթը իր անուղղակի ամրագրում է գտել ՀՀ սահմանադրության նախաբանում³, համաձայն որի սահմանադրության ընդունման հիմնական նպատակներից է համարվում հայ ժողովրդի համազգային նպատակների իրականացումը:

Ներկայումս ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից է դարձել ցեղասպանության միջազգային իրավական ճանաչման և Թուրքիային իրավական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը առավել ակնհայտ արտահայտվեց 2015 թ. հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժո-

¹ **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան Կայսրություն. 3-րդ ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երևան, 2009, էջ 21:

² **ՀՀ անկախության հռչակագիր**. 1990 օգոստոսի 23 <http://www.gov.am/am/independence/>

³ **ՀՀ սահմանադրություն**. 1995 հուլիսի 5 (փոփոխություններով 2005թ) <http://www.parliament.am/parliament.php?id=constitution>

դովի կողմից ընդունված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր», որն ընթերցել է ՀՀ նախագահ՝ Սերժ Սարգսյանը և ի կատարումն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի որոշման, հռչակագրի մայր օրինակը ի պահ է հանձնել Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտին: Հանրապետության Նախագահը նշել է, որ հռչակագրի մեկ օրինակը կուղարկվի Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, մեկ օրինակը կհանձնվի Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ:

Միջազգային իրավունքի տեսանկյունից հայերի դեմ իրականացված ցեղասպանության հիմնահարցը քննարկելիս անհրաժեշտություն է առաջանում պատասխանել մի քանի հիմնարար հարցերի, մասնավորապես՝

- *Հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության կողմից իրականացված զանգվածային ջարդերը որակվում են որպես միջազգային բնույթի հանցագործություն՝ ցեղասպանություն:*

- *Ներկայիս Թուրքիան համարվում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը և պատասխանատվություն է կրում նրա կողմից իրականացրած ցեղասպանության համար:*

- *Կա արդյոք արարքի հանցավորությունը բացառող հանգամանք:*

- *Հանցագործության համար պատասխանատվություն պետք է կրի պետությունը թե՛ անհատ կազմակերպիչները, այսինքն, Օսմանյան կայսրությունն ի դեմս իրավահաջորդ Թուրքիայի, թե՛ երիտթուրք առաջնորդները:*

- *Ցեղասպանություն հանցագործության դեպքում գործում է հայցային վաղեմության ժամկետը:*

Հայոց ցեղասպանության ճանաչման, Թուրքիայի իրավական պատասխանատվության, ինչպես նաև ցեղասպանությունների կանխարգելման հարցում անասելի նշանակություն ունի 1948 թ.-ին ընդունված «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցան»⁴, որի 3-րդ հոդվածը սահմանում է ցեղասպանության հասկացությունը: Վերոհիշյալ հոդվածի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է հայերի դեմ իրականացրած ցեղասպանության էությանը: Այդ ամենը քաջ գիտակցելով և իրատեսությունից չշեղվելով անհրաժեշտություն է առաջանում հարց տալ, թե որքանով է կիրառելի 1948 թ.-ին ընդունված ցեղասպանության մասին կոնվենցիան 1915 թ.-ին տեղի ունեցած իրադարձությունների մասով: Այս հարցադրումը հաճախ օգտագործվում է թուրքերի կողմից, մասնավորապես նրանք հղում են անում միջազգային հանրաճանաչ սկզբունքին, որ օրենքը հետադարձ ուժ չունի, պետք է նշենք, որ իրավական հարթության վրա այդպիսի խնդիր իսկապես գոյություն ունի,

⁴ «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցա» 1948թ.
<http://www.parliament.am/library/MAKkonvencianer/2.pdf>

սակայն դա չի նշանակում, թե մենք կանգնած ենք փակուղու առաջ: Որոշ տեսաբաններ ցեղասպանության մասին կոնվենցիան հայոց ցեղասպանության վերաբերյալ կիրառելի են համարում այն հիմքով, որ մինչև օրս հազարավոր հայեր հնարավորություն չունեն վերադառնալ իրենց հայրենի օջախներ, որոնք լքել են ցեղասպանության հետևանքով, ինչպես նաև մինչ օրս շարունակվում է հայ ժողովրդի դարերով ստեղծած պատմամշակութային արժեքների անխնա ոչնչացումը, եթե հիմք ընդունենք այս տեսակետը, ապա պետք է նշենք, որ հանցավոր արարքը դեռ շարունակվում է և օրենքի հետադարձ ուժի արգելքը այս դեպքում կիրառելի չէ:

Հաջորդ հիմնախնդիրն այն է թե 20-րդ դարասկզբին տեղի ունեցած զանգվածային ջարդերը որակվում են ցեղասպանություն թե ոչ: Թուրքական կողմը այս հարցում միանշանակ պատասխան ունի նշելով, որ ցեղասպանություն տերմինը առաջին անգամ օգտագործվել է լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի կողմից 1946 թ.⁵, և մինչ այդ այդպիսի հանցատեսակ գոյություն չի ունեցել, հետևաբար Օսմանյան կայսրությունը այդպիսի հանցագործություն չէր կարող կատարել, սակայն նշենք, որ Ռ. Լեմկինի մատնանշած ցեղասպանություն տերմինն ըստ էության տվեց մարդկության դեմ ուղղված հանցագործության իրավական դիպուկ բնութագիրը⁶: Այսպես, 1948թ. կոնվենցիան ոչ թե առաջին անգամ ցեղասպանությունն որակեց որպես հանցագործություն, այլ միայն համակարգեց միջազգային սովորութային իրավունքում ցեղասպանությունը կանխարգելող ու պատժող իրավական նորմերը, այսինքն մինչև կոնվենցիայի ընդունելը ցեղասպանությունը կանխարգելող և պատժող նորմերն արտահայտվել են սովորութային նորմերի տեսքով, որոնք էլ հանդիսացել են միջազգային իրավունքի հիմնական աղբյուրը: Այս առումով հիմնարար նշանակություն ունի 1915 թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից ընդունված հռչակագիրը, որտեղ նշվում է. «Ողջ անցած տարվա ընթացքում Հայաստանում տեղի են ունեցել կոտորածներ քրդերի և թուրքերի կողմից, Օսմանյան կառավարության ակնհայտ թողտվությամբ իսկ երբեմն էլ մասնակցությամբ:...Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից գործարվող այս նոր հանցագործությունները աչքի առաջ ունենալով, դաշնակից կառավարությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան սրանով հրապարակավ հայտարարում են Բ. Դռանը, որ այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև

⁵ **Raphael Lemkin** Axis rule in Occupied Europe Laws of Occupation-Analysis of Government-Proposals for Redress, Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944, p. 79 - 95.

⁶ **Raphael lemkin**, A crime without a name, America,school-ar volume 15,no2, april.

նրա տեղական այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակից կլինեն նման ջարդերին»⁷:

Հռչակագիրը ընդունած կողմերը դիմում են բարձր դռանը, որ դադարեցնի հայերի նկատմամբ իրականացվող զանգվածային ջարդերը, որով միջազգային հանրությունն հաստատեց, որ հայերի նկատմամբ զանգվածային ջարդեր և կոտորածներ են տեղի ունեցել և փաստեց դրանց դադարեցման անհրաժեշտությունը:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերվում է Թուրքիայի Հանրապետության Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելուն:

Հայերի նկատմամբ ցեղասպանությունն իրականացվել է Օսմանյան կայսրության պետական իշխանության անմիջական մասնակցությամբ և հանցավոր անգործության հետևանքով: Այսինքն, հանցագործության սուբյեկտը Օսմանյան կայսրությունն է, սակայն թուրքերը շատ հաճախ փորձելով խուսափել իրավական պատասխանատվությունից, նշում են, որ ներկայիս Թուրքիան Օսմանյան կայսրության իրավահաջորդը չէ, քանզի կայսրության փլուզումից հետո առաջացել են մի շարք պետություններ՝ Իրաքը, Սիրիան, Լիբանանը և ինչու հենց Թուրքիան պետք է պատասխանատվություն կրի, սակայն կան մի շարք իրավական փաստեր, որոնք հաստատում են, որ հենց Թուրքիան է հանդիսանում Օսմանյան կայսրության լիիրավ իրավահաջորդը, մասնավորապես, այն արտահայտվեց օսմանյան պարտքի արբիտրաժի⁸ վճռում, որտեղ քննարկվում էր Օսմանյան կայսրության արտաքին պարտքի վճարման հետ կապված հարցեր, այս դատավարության ընթացքում որոշվեց, որ Թուրքիան համարվում է Օսմանյան կայսրության իրավահաջորդ և պարտավոր է ամբողջությամբ վճարել կայսրության արտաքին պարտքը և դրանով հավաստվեց Թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության լիիրավ իրավահաջորդ լինելը:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերվում է այն հարցին թե կատարվածի համար պատասխանատվություն պետք է կրի պետությունը, թե կազմակերպիչները, Թուրքիան 20-րդ դարասկզբին տեղի ունեցած ջարդերի համար մեղադրում է երիտթուրք ղեկավարներին, որոնք իբր թե գործել են իրենց պաշտոնական լիազորությունները չարաշահելով, դրա համար էլ նրանք ենթարկվել են իրավական պատասխանատվության, մասնավորապես 1919 թ. հուլիսին Թուրքիայի ազգային ռազմական դատարանը հեռակա կարգով մահվան դատապարտեց երիտթուրք ղեկավարներին⁹, նրանց մեղադրելով հայերի նկատմամբ զանգվածային ջարդեր կազմակերպելու

⁷ *Mr. Нерсесяна*, Геноцид армян в османской империи, Ереван 1983, 602-603.

⁸ *Toriguian S.*, The Armenian Question and International Law. La Verne, Ca: «ULV Press», 1988, p. 112.

⁹ *Gregory H. Stanton*, genocide watch, the 8 stage of genocide. <http://www.genocidewatch.org/aboutgenocide/8stagesofgenocide.html>

և իրականացնելու համար: Չնայած այդ դատավճիռները այդպես էլ չիրականացան, սակայն դրանցով Թուրքիան իրավական առումով հաստատեց հանցագործության առկայության փաստը: Ներկայումս հայկական կողմի համար 1919 թ. ընդունված դատավճիռները ունեն անասելի կարևորություն, քանի որ իրավական առումով 1915 թ. տեղի ունեցած արանքները նկարագրված են այնպես, ինչպես դա հետագայում ամրագրվեց 1948թ. կոնվենցիայում, միակ տարբերությունն այն է, որ այդ դատավճիռներում չի օգտագործվել ցեղասպանություն բառը հասկանալի պատճառով: Ներկայումս այս փաստը հասկացել են նաև թուրքերը, որոնք փորձում են ամեն կերպ քողարկել վերոհիշյալ դատական ակտերը, նշելով որ, այդ դատավճիռները իրավական առումով հիմնավորված չեն եղել, և Թուրքիան այս դատական ակտերը ընդունել է գերտերությունների ճնշման ներքո: Ըստ էության հայոց ցեղասպանության հարցը իրավական հարթությունում քննարկելու դեպքում, հայկական կողմի համար ամենակարևոր զենքը պետք է լինի 1919թ. Թուրքական ռազմական դատարանի դատավճիռները:

Ինչ վերաբերվում է այն հարցին, որ հանցագործությունը կազմակերպել են պետական պաշտոնյաները՝ իրենց լիազորությունները չարաշահելով, ապա Թուրքիան ազատվում է պատասխանատվությունից: Նշենք, որ մասնագետների մեծ մասը հակված են պետությանը վերագրելու որոշիչ դեր ցեղասպանության նախապատրաստության և իրականացման մեջ: Խոսքը գնում է առաջին հերթին այն ցեղասպանությունների մասին, որոնք կազմակերպվում են պետության կողմից իր իսկ հպատակների դեմ: Այդ տեսակետին են ցեղասպանության երևույթի և նրա առանձին կողմերի հետազոտման բնագավառի այնպիսի առաջատար մասնագետներ, ինչպիսիք են՝ Ֆ.Հ. Լիթթլը, Հ. Ֆայնը, Ֆ. Չոքը, Ռ. Հովհաննիսյանը, Իվ. Թերնոնը, Ռ. ՈՒ. Սմիթը և ուրիշներ: Անցյալ դարում նման ոճրագործությունների զոհ են գնացել շուրջ 120 միլիոն մարդ¹⁰:

Կարևոր հանգամանք է պետությունների պատասխանատվությունների մասին կոնվենցիայի 7-րդ հոդվածը, համաձայն որի՝ *«Պետական իշխանություն իրականացնելու համար լիազորված անձի կամ կազմակերպության վարքագիծը պետք է դիտվի որպես տվյալ պետություն պաշտոնական վարքագիծ՝ նույնիսկ այն դեպքում երբ տվյալ պաշտոնյան վերազանցում է իր լիազորությունները»*: Այսպիսով՝ Ցեղասպանության համար պատասխանատվություն պետք է կրեն ոչ թե երիտթուրք ղեկավարները, այլ հենց Թուրքիան:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերվում է նրան, թե կան արդյոք կատարված հանցագործության համար պատիժը և պատասխանատվությունը բացառող հանգամանքներ, միջազգային իրավունքն այս հարցին հստակ պա-

¹⁰ Սաֆրաստյան Ռ., Օսմանյան Կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երևան, 2009, էջ 31-32:

տասխան է տալիս, մասնավորապես «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցան»¹¹ որտեղ նշվում է, որ ցեղասպանությունն դիտվում է որպես իրավունքի իմպերատիվ նորմի խախտում, իսկ իմպերատիվ նորմի խախտման դեպքում հանցագործությունը, պատիժն և պատասխանատվությունը բացառող ոչ մի նորմ չի գործում:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերվում է վաղեմության ժամկետներին: Նախ նշենք, որ վաղեմություն ժամկետն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հնարավոր է խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությունը: Որոշ հետազոտողներ այս հարցի վերաբերյալ կարծիք են հայտնել, որ երկարատև ժամանակ անցնելու հետևանքով սպառվում է Թուրքիային պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, այս տեսակետը սակայն ոչ մի իրավական հիմնավորում ունենալ չի կարող, քանզի 1968 թ. «Պատերազմի և մարդկության դեմ ուղղված հանցագործության վաղեմության ժամկետների չկիրառելու»¹² մասին կոնվենցիայում նշվում է վաղեմության ժամկետ չի կիրառվում մարդկության դեմ ուղղված հանցագործության վերաբերյալ:

Այսպիսով, քննարկելով վերոհիշյալ մի քանի հարցերը, փաստենք, որ 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի նկատմամբ կատարվել են զանգվածային ջարդեր, որոնք միջազգային իրավունքում որակվում են որպես հանցագործություն: Ցեղասպանություն հանցագործությունն իրականացրել է Օսմանյան Կայսրությունը, իսկ նրա փլուզումից հետո Թուրքիան հանդիսանում է նրա իրավահաջորդը: Նշենք նաև, որ չկա պատիժն և պատասխանատվությունը բացառող հանգամանք, ինչպես նաև չեն գործում վաղեմություն ժամկետները: Այս ամենը փաստելով իրավաչափ է դառնում հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցի քննարկումը:

Պետությունների պատասխանատվությունների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածը սահմանում է. «Միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասները հատուցել՝ ինչպես նյութական վնասը, այնպես էլ բարոյական վնասը»: Հիմք ընդունելով Թուրքիայի կողմից կատարած հանցագործությունը, տեսական գրականության մեջ քննարկվում է Թուրքիայի Հանրապետություն նկատմամբ

¹¹ «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցա» 1948թ. <http://www.parliament.am/library/MAKkonvencianer/2.pdf>

¹² «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցա» 1968թ. <http://www.parliament.am/library/MAKkonvencianer/5.pdf>

միջազգային իրավական պատասխանատվության հետևյալ ձևերի կիրառման հնարավորությունը՝ *ռեստիտուցիա, կոմպենսացիա, սատիսֆակցիա*¹³:

Ընդհանրացնելով նշենք, որ արդեն անցել է մեկ դար և ոչ մի իրավական գնահատական չի տրվել կատարված ցեղասպանությանը, թեպետ կան բավարար իրավական երաշխիքներ Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար: Ցեղասպանության հարցի կարգավորումը ներկայումս կարող է ընթանալ 2 ուղով՝ *բանակցային* և *դատական*: Բանակցությունների ընթացքում կողմերը պետք է քննարկեն հարցի լուծման հնարավոր տարբերակները և քաղաքական կոմպրոմիսի արդյունքում փորձեն միջազգային պայմանագիր կնքել, որը պետք է կարգավորի ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին պատճառված նյութական և բարոյական վնասների հարցը: Սակայն տեսնելով 2008 թ. սկսված «Ֆուտբոլային դիվանագիտություն» անվամբ հայտնի հայ-թուրքական բանակցությունների ձախողված փորձը, ինչպես նաև Թուրքիայի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ժխտողական քաղաքականությունը, որն ըստ էության համարվում է ցեղասպանության վերջին փուլը, ներկայումս կարելի է քննարկել նաև դատական կարգով հարցի լուծումն հնարավորությունները, այս հարցի վերաբերյալ հայ ազգի գիտնական, իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յուրի Բարսեղովը գրում է. «ՀՀ որպես *ինքնիշխան պետություն եզակի հնարավորություն ունի հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության համար հայց հարուցել ՄԱԿ-ի միջազգային դատարան*»¹⁴: Դատարան դիմելու հետ կապված հայոց ցեղասպանության մասին իրավական գնահատական է տրվել նաև 2012թ Ռուանդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի կողմից, մասնավորապես դատարանը անրադառնալով ցեղասպանությանը, այդ թվում Ռուանդայում արձանագրված դեպքերի պատճառներին, փաստել է, որ միջազգային հանրությունը համարժեք հետևություն չի արել հայոց եղեռնի փաստից, ինչն էլ նպաստել է այդպիսի երևույթի կրկնվելուն:

Summary—The main objective of the study is to examine the nature and the main features of the crime of the Genocide and to present in terms of the international law the issue of international legal responsibility of the modern Republic of Turkey, the legal successor of the Ottoman Empire, for the implementation of the

¹³ *Հովհաննիսյան Ն.*, Հայոց ցեղասպանություն ճանաչման հարցը թուրքական դատավարությունների լույսի ներքո, 1919-1920: <http://hpj.asj-oa.am/1754/1/2006-3%2823%29.pdf>.

¹⁴ *Барцеров Ю.*, Геноцид армян—предомление по межнапогножу праву, 2006.

monstrous crime, i.e. Genocide, by the Ottoman Empire against the Armenian people in the late 19th - early 20th centuries. In the work it is given special part in the examination of international legal documents and different theoretical questions. It's suggested conceptual approaches and formulations. The most important from them is international liability of Republic of Turkey.

Резюме—Основная цель исследования—рассмотреть сущность и основные признаки преступления геноцида и представить с точки зрения международного права проблему международной правовой ответственности современной Турецкой Республики, правопреемницы Османской империи, за осуществление Османской империей в конце 19-ого-начале 20-ого века в отношении армянского народа чудовищного преступления-геноцида.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՄԱՐԴՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ԱՆԻ ՄԱՐԲԵԿՅԱՆ

Խ. Արդյունի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

«Մարդկությունը հակադրվել է բնությանը: Եթե վերահսկողության չենթարկենք մեր գործունեությունը, հիմնովին չփոխենք մեր արդի կուրսը, աշխարհը կփոխվի այնպես, որ այլևս չի կարողանա պահպանել բնականոն կյանքը»

Մարդկությունը թևակոխեց 21-րդ դար՝ գլոբալ էկոլոգիական խնդիրներով: Ինչպես նշում է Լ.Թ. Ասատրյանը. «էկոլոգիական ներկա իրավիճակը ոչ միայն էկոլոգիական վերահաս աղետի ազդանշան է, այլև ցույց է տալիս բնության նկատմամբ մարդու և հասարակության հարաբերությունների սահմանափակությունը»[1, էջ 3]:

Ժամանակակից հասարակության տեղեկատվական, տեխնոլոգիական, քաղաքակրթական զարգացման արդի պայմաններում մարդկությունը կանգնած է էկոլոգիական ճգնաժամի առաջ: Խախտվել են կենսոլորտի, բնական միջավայրի հավասարակշռությունը, որը և հարցականի տակ է դրել երկիր մոլորակի վրա քաղաքակրթության երկարատև գոյության խնդիրը:

Ժամանակակից քաղաքակրթությունը մեծ ճնշում է գործադրում բնության վրա: Արդյունաբերական թափոններով բնական միջավայրի աղտոտումը վնասակար ազդեցություն է գործում մարդկանց, կենդանիների, բույսերի, հողի, շենքերի և շինությունների վրա, բարձրացնում է օդի խոնավությունը, մեծացնում մառախլապատ օրերի թիվը, իջեցնում մթնոլորտի թափանցիկությունը և փոքրացնում տեսանելիությունը, առաջ է բերում մետաղական իրերի կոռոզիա: Շրջակա միջավայրի աղտոտում ասելով հասկանում ենք միջավայրի հատկությունների փոփոխությունը (քիմիական, մեխանիկական, ֆիզիկական, կենսաբանական և դրանց հետ կապված տեղեկատվական), որը տեղի է ունենում բնական կամ արհեստական գործընթացների արդյունքում և հանգեցնում միջավայրի ֆունկցիայի վատթարացմանը՝ ցանկացած կենսաբանական կամ տեխնոլոգիական օբյեկտի առումով: Իր գործունեության մեջ օգտագործելով շրջակա միջավայրի զանազան տարրեր՝ մարդը փոխում է դրանց որակը: Հաճախ այդ փոփոխությունները արտահայտվում են աղտոտման տարբեր ձևերով: Իրենց ծավալներով՝ մարդածին փոփոխությունները համադրելի են դառնում բնականների հետ, իսկ մի շարք դեպքերում անգամ գերազանցում են դրանք: Շրջակա միջավայրի աղտոտումը մարդկանց, բույսերի և կենդանիների կենսագործունեության վրա բացասա-

բար ազդող նյութերի թույլատրելի քանակի գերազանցումն է միջավայրում: Տարբերում ենք շրջակա միջավայրի բնածին և մարդահարույց աղտոտիչներ:

Բնածին աղտոտիչներն առաջանում են բնական երևույթների, օրինակ՝ հրաբուխների, երկրաշարժերի, ջրհեղեղների, հրդեհների պատճառով, իսկ մարդահարույցները՝ մարդու գործունեության հետևանքով:

Մարդահարույց աղտոտիչների թվին են դասվում արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային և կենցաղային թափոնները, էներգիայի տարածումը ջերմության (ջերմային աղտոտում), աղմուկի (աղմկային աղտոտում), ճառագայթման (ճառագայթաակտիվ աղտոտում) և այլ ձևերով:

Ըստ ծավալների, տարբերում են շրջակա միջավայրի աղտոտուման հետևյալ ձևերը՝ գլոբալ (համընդանուր), ռեգիոնալ (տարածքային), լոկալ (տեղային) աղտոտումներ:

Գլոբալ աղտոտումները դիտվում են ամբողջ մոլորակի տարածքում, հաճախ աղտոտման աղբյուրներից զգալի տարածության վրա: Հիմնականում դրանց առաջացումը ունի անթրոպոգեն ծագում:

Տարածքային աղտոտումները գերազանցում են բնական միջին կոնցենտրացիաների մակարդակները, դիտվում են որոշակի տարածքներում, չունեն մոլորակային տարածում:

Լոկալ աղտոտումները դիտվում են ոչ մեծ տարածքներում, հիմնականում բնակավայրերում, արդյունաբերական տարածքների և ավտոմայրուղիների շրջակայքում:

Մթնոլորտն աղտոտող նյութերը բազմաթիվ տասնամյակների ընթացքում նշանակալի վնաս են հասցրել շրջակա միջավայրին: Ըստ երևույթին, նրանց վնասակար ազդեցության հետ հարկ կլինի հաշվի նստել նաև ապագայում: Այն հիմնական աղտոտող նյութերը, որոնց պարունակությունը կանոնակարգվում է ստանդարտներով, հանդիսանում են ծծմբի երկօքսիդը (SO_2), ազոտի օքսիդները (NO և NO_2), ածխածնի երկօքսիդը (CO), գազային ածխաջրածինները (CH_4 և այլն), ծծմբաջրածինը (H_2S), ծծմբաածխածինը (CS_2), ամոնիակը (NH_3), ինչպես նաև՝ հալոգեններ պարունակող գազերը:

Գոյություն ունի գազային աղտոտիչների ձևավորման երեք հիմնական աղբյուրներ.

- վառելանյութերի այրում,
- արդյունաբերական արտադրական գործընթացներ,
- բնական աղբյուրներ:

Ըստ գիտնականների գնահատականների՝ բնական աղբյուրներից ամեն տարի անջատվում է 117 մլն. տոննա ածխաջրածին, իսկ մարդածին աղբյուրներից՝ 100 մլն. տոննա: Մթնոլորտի աղտոտման ևս մեկ ոչ պակաս կարևոր աղբյուր է հանդիսանում քաղաքային պինդ թափոնների այրումը: Բոլոր քաղաքակիրթ երկրներում այդ նպատակի համար գոյություն ունեն աղբայրման վառարաններ, որոնց կառուցվածքը կախված է թափոնների բաղադրություններից:

Մթնոլորտի աղտոտման ծավալների մեծացումը պահանջում է այն աղտոտումներից պաշտպանելու արագ և արդյունավետ միջոցների ներդրում, ինչպես նաև՝ օդի աղտոտումների վնասակար ազդեցության կանխում: Մթնոլորտը կարող է առանց վնասակար ազդեցության արտահայտման պարունակել աղտոտումների որոշակի քանակ, քանի որ տեղի է ունենում նրա մաքրման բնական գործընթաց: Մթնոլորտի աղտոտման հետ կապված վնասակար ազդեցության որոշման առաջին քայլը հանդիսանում է օդի որակի ստանդարտները և դրա որոշման չափանիշների մշակումը: Որակի ստանդարտները որոշում են օդի որակի մակարդակները և սահմանային թույլատրելի արտանետումները (ՄԹԱ), որոնք անհրաժեշտ է պահպանել՝ անվտանգ կայքի ապահովման համար: Մթնոլորտի վիճակի բարելավման այլ մոտեցում է հանդիսանում առաջավոր տեխնոլոգիական համակարգերի և միջոցների կիրառումը, վնասակար նյութերի փոխարինումը անվնասներով, հումքի մշակման չոր եղանակների փոխարեն խոնավների կիրառումը:

Որպես կանոն, արդյունաբերական ձեռնարկություններում օգտագործվում են գազամաքրման և փոշեկլանման միջոցներ կամ սարքեր՝ փոքրացնելու կամ կանխելու արտանետման մեծությունը: Գազամաքրման գործընթացները կարող են նաև քայքայել կամ փոխել նրանց քիմիական կամ ֆիզիկական հատկություններն այնպես, որ այն դառնա պակաս վտանգավոր:

Կապված ստեղծված սոցիալ-էկոլոգիական իրավիճակի առանձնահատկությունների հետ՝ ժամանակակից արդյունաբերությանը երկու պայման է ներկայացվում: Նախ, արտադրությունը պետք է ոչ միայն նյութական բարիքներ ստեղծի, այլ նաև վնասագերծի իր գործունեության արգասիքները: Երկրորդ՝ արտադրության արգասիքները օգտագործելուց հետո համեմատաբար հեշտությամբ պետք է դրանք կրկին վերածվեն արտադրության արգասիքների:

Մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու և միջավայր արտանետվող վնասակար խառնուրդների քանակը նվազեցնելու նպատակով տարվելիք միջոցառումները կարելի է ստորաբաժանել 4 հիմնական խմբերի՝

1. Առաջին խումբն ընդգրկում է արտադրության՝ գոյություն ունեցող տեխնոլոգիական պրոցեսների բարելավումը, նոր, առավել կատարելագործված տեխնոլոգիայի ներդրումը, որը միանգամայն կբացառի վնասակար նյութերի անջատումը հենց տեղում:

2. Երկրորդ խմբի միջոցառումները կապված են վառելիքի որակի բարելավման, նոր, կատարելագործված շարժիչների ստեղծման, էներգիայի նոր ձևերի հայթհայթման, ինչպես նաև մաքրող հարմարանքների տեղադրման հետ:

3. Մթնոլորտի աղտոտումը կանխելու միջոցառումների երրորդ խումբը նախատեսում է խելացի տեղաբաշխել մթնոլորտային օդը վարակող արդյունաբերական ձեռնարկությունները և վերամշակված թափոններն օգտագործել տնտեսության տարբեր բնագավառներում:

4. Չորրորդ խմբի միջոցառումները կապված են սանիտարական-պաշտպանողական գոտիների ստեղծման, պաշտպանողական կանաչ տարածու-

թյունների, մասնավորապես անտառային տնկարկների հիմնադրման հետ [2, էջ 327] :

Շրջակա միջավայրի աղտոտումը սպառնում է մարդու առողջությանը, բույսերի ու կենդանիների տեսակային բազմազանությանը և հանգեցնում միջավայրի որակական փոփոխությունների:

Մարդը, լինելով բնության մի մասնիկը, պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվի այն հարցին, թե ինչն է բարերար կերպով և ինչը՝ կործանարար ազդեցություն ունենում իր շուրջը գոյություն ունեցող «հիանալի աշխարհի» վրա: Չէ՞ որ միայն մարդն է օժտված շրջակա միջավայրը փոխելու ունակությամբ, բայց նա այդ հնարավորությունն օգտագործում է անարդյունավետ կերպով և խախտում է էկոլոգիական հավասարակշռությունը: Մարդիկ պիտի գիտակցեն, որ չկարողանալով ժամանակին կանգ առնել՝ կարող են ոչնչացնել իրենց աշխարհը և իրենք՝ իրենց: Իսկ դա նշանակում է՝ կամ մարդը կկարողանա էվոլյուցիոն գործընթացը ղեկավարելու օգնությամբ պահպանել բնական և արդյունաբերական համալիրների դինամիկ հավասարակշռությունը, կամ մարդու կողմից ստեղծված արդյունաբերական համալիրները կոչնչացնեն բնական համալիրները՝ ոչնչացնելով նաև մարդուն [1, էջ 193-194]: Բնականության միջավայրի վրա մարդու ազդեցությունն իրոք հսկայական է, և այդ իրողությունը նա պետք է խորապես ըմբռնի: Ինչո՞ւ բնության էվոլյուցիոն զարգացման գազաթնակետը՝ մարդը, չարամտորեն վնասում է իրեն ծնած մորը՝ բնությանը: Հարկավոր է անհապաղ փոխել իրավիճակը. ամենուրեք պետք է գործեն շրջակա միջավայրը վերահսկող մեխանիզմներ, գիտական ներուժը պետք է աշխատի էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ ստեղծելու, մարդու անհոգ գործունեության հետևանքները վերացնելու համար նոր արդյունավետ ծրագրեր մշակելու վրա, այլապես համընդհանուր էկոլոգիական աղետը կանխել չի հաջողվի:

Ուստի պետք է «հարգել երկիրը» և կյանքն իր ողջ բազմազանությամբ, պահպանել երկրի «առատաձեռնությունն» ու գեղեցկությունը ներկա և ապագա սերունդների համար:

Резюме-В статье рассматривается проблема влияния человека на окружающую среду в связи с экологическим кризисом современного мира. Рассмотрены биогенные и антропогенные загрязняющие вещества на окружающую среду, а также глобальные, региональные и локальные формы загрязнения.

Summary-The problem of human influence on the environment in connection with the ecological crisis of the modern world is discussed in the article. Biogenic and anthropogenic pollutants on the environment, as well as global, regional and local forms of pollution are examined.

ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԽՐՈՑԱՆ ԱՐՄԻՆԵ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Համացանցային կախվածությունը 21-րդ դարի ամենավտանգավոր մարտահրավերներից մեկն է: Տարեցտարի այն դառնում է համաշխարհային մասշտաբի հոգեբանամանկավարժական հիմնախնդիր, որը չունի ո՛չ ազգային, ո՛չ սոցիալ-քաղաքական սահմաններ: Աշխարհի շատ երկրներում այն դիտարկվում է մի շարք մասնագետների՝ հոգեբանների, հոգեթերապևտների, սոցիոլոգների, քաղաքագետների և, ինչու ոչ, նաև մանկավարժների կողմից:

Հոգեբանական գրականության մեջ «կախվածություն» տերմինը լայն իմաստով մեկնաբանվում է որպես մարդու՝ որևէ գործողության անընդհատ կատարման մոլեգիլ պահանջմունք¹: Առանձնացնում են կախվածության տարբեր տեսակներ՝ դեղորայքային, ալկոհոլային, խաղային և այլն: Այժմ այս շարքը լրացնում է նաև համացանցային կախվածությունը, որը բժշկական չափանիշների համաձայն չի գիտակցվում որպես հոգեբանական շեղում, սակայն կարող է հանդիսանալ մի շարք հիվանդությունների պատճառ:

Ինչո՞վ է վտանգավոր համացանցային կախվածությունը

Իրականացվող ուսումնասիրությունները փաստում են, որ համացանցի երկար և չկարգավորված կիրառումը հանգեցնում է գլխուղեղի աշխատանքի զգալի վատացմանը:

Ամերիկացի նշանավոր գիտնական և գրող Նիկոլաս Կառը իր ուսումնասիրությունների արդյունքում հայնաբերել է, որ այն անձը, ով ունի համացանցային կախվածություն, ժամանակի հետ կորցնում է իրերն ու երևույթները վերլուծելու, ինքնուրույն մտածելու և տրամաբանությամբ առաջնորդվելու կարողությունը: Նա չի կարողանում զգալ և ընկալել խնդրի խորությունը, պատկերացումները դառնում են խիստ մակերեսային²: Առավել ակնհայտ է համացանցային կախվածության բացասական ազդեցությունը անձի սոցիա-

¹ **Менделевич В.Д.**, Зависимость как психологический и психопатологический феномен (проблемы диагностики и дифференциации), Вестник клинической психологии, 2003, № 2, с. 153-158.

² **Николас Карр**, Пустышка: Что интернет делает с нашими мозгами?, 2012, с. 78.

լական որակների վրա, օրինակ՝ ընկերասիրություն, հաղորդակցման ցանկություն, կենտրոնանալու կարողություն, անմիջականություն և այլն³:

Բնական է, որ նման մարդիկ չեն գիտակցում և չեն ցանկանում խոստովանել, որ տառապում են նման խնդրով:

Ա. Ե. Վոյսկունսկին առանձնացնում է համացանցային կախվածություն ունեցող անձի վարքային հատկանիշները: Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը՝

➤ անգամ կարճ ժամանակահատվածով համացանցից կտրվելու, առավել ևս՝ աշխատանքն ամբողջությամբ դադարեցնելու ցանկության և կարողության բացակայություն,

➤ համացանցից դուրս գտնվելիս ընկճվածության և անկհարժեքության զգացողության առկայություն,

➤ համացանցում աշխատելու ժամանակահատվածի ընդլայնման ձգտում, սեփական ժամանակի պլանավորման կարողության բացակայություն,

➤ համացանցում անվտանգ աշխատանքի ապահովման համար գումար վատնելու մոտիվացիայի աճի առկայություն, անգամ այն դեպքում, երբ այդ գումարը նախատեսված էր ծառայելու այլ ավելի հրատապ խնդրի լուծմանը,

➤ հարազատներին, ընկերներին համացանցում գտնվելու ժամանակահատվածի վերաբերյալ ոչ ճշգրիտ տվյալների հայտնում⁴:

Մարդիկ, ովքեր հակված են նման կախվածության

Մարդու մոտ այս կամ այն տեսակի կախվածության առաջացումը ենթադրում է անձնային որոշակի առանձնահատկությունների առկայություն: Անձի այդ տեսակը Կ. Յանգն (Young, 1999) անվանում է **կախվածությանը հակված**: Նման մարդիկ միտված են օգտագործելու վնասակար միջոցներ, գտնվելու այլ անձից հոգեբանական կախվածության մեջ և այլն: Յանգի կարծիքով գոյություն ունեն նշաններ, որոնք թույլ են տալիս կատարել եզրակացություն մարդու մոտ համացանցային կախվածության առկայության վերաբերյալ: Դրանք են՝ էլեկտրոնային հասցեն անընդհատ ստուգելու և համացանց մուտք գործելու բուռն ցանկության առկայություն, շրջապատողների բողոքն այն մասին, որ տվյալ անձը չափազանց երկար ժամանակ է անցկացնում համացանցում և այլն⁵:

Համացանցային կախվածության կանխարգելումը

Համացանցային կախվածության կանխարգելման կոնկրետ ձևեր և միջոցներ դեռևս մշակված չեն: Դրանք բազմազան են՝ կախված խնդրի դրսևորման

³ **Войскунский А.Е.**, Психологические исследования феномена Интернет-аддикции, Тезисы докладов 2-й Российской конференции по экологической психологии ,2000, с.251-253.

⁴ **Войскунский А.Е.**, Актуальные проблемы зависимости от интернета, Психологический журнал, 2004, №1, с. 90-100.

⁵ **Янг К.**, Диагноз , Интернет-зависимость, Мир Интернет, 2000, №2-с. 24-29.

ձևից և աստիճանից: Համացանցային կախվածության բուժման ամենատարածված և արդյունավետ միջոցներից մեկը հատուկ կլինիկաներում իրականացվող բուժումն է՝ հստակ մշակված ծրագրի համաձայն: Առաջացած խնդրի լուծման ընթացքում կարևորվում է հատկապես ոչ միայն համացանցային կախվածությամբ «տառապողի», այլև նրա հարազատների մոտեցումն առաջացած խնդրին և դրա ամբողջական գիտակցումը:

Նման խնդրի լուծումն իր կարևորությունն է ստանում հատկապես կրտսեր դպրոցահասակ երեխաների շրջանում: Այս տարիքում գտնվող երեխան, հայտնվելով դպրոցում, ոչ միայն պետք է կարողանա յուրացնել նոր գիտելիքներ և կարողություններ, այլև՝ իր նոր սոցիալական կարգավիճակը: Նման իրավիճակում կրտսեր դպրոցականը հաճախ է բախվում այնպիսի խնդիրների, որոնք պայմանավորված են կոլեկտիվում սեփական դերի ընկալման, հաղորդակցական և համագործակցային կարողությունների դրսևորման հետ⁶: Կրտսեր դպրոցական տարիքում երեխայի անձի զարգացումն իրականում է մի քանի ուղղություններով՝ հոգեբանական, ֆիզիոլոգիական, սոցիալական, իմացական և այլն: Այս ամենը հանգեցնում է մի շարք կոնֆլիկտների, վարքային փոփոխությունների առաջացմանն ու հուզականության մակարդակի բարձրացմանը⁷: Համացանցն այն ոլորտն է, որտեղ կրտսեր դպրոցականն ունի լիարժեք ինքնադրսևորման հնարավորություն. այն հնարավորություն է տալիս նրան վերականգնելու ինքնավստահությունը, սակայն դա դրսևորվում է միայն վիրտուալ հարաբերությունների միջավայրում: Բացի այդ, համացանցում գտնվող երեխան հեշտությամբ կարողանում է փոխել իր տարիքը, սոցիալական կարգավիճակը, անգամ՝ սեռը: Միաժամանակ հանդես գալ տարբեր՝ հաճախ հորինված և անիրական անհատների անունից՝ հաղթահարելով այն վախերը և կաշկանդվածությունը, որոնք նա ունի իրական կյանքում: Այս հանգամանքը թույլ է տալիս կրտսեր դպրոցականին հասնել այնպիսի կարգավիճակի, որը նրան անհասանելի է իրական կյանքում: Նման խնդրի լուծման համար մենք առաջարկում ենք գործունեության հետևյալ եղանակը, որտեղ կարևորվում է հատկապես դպրոց-ծնող համագործակցությունն ու երեխայի անձնային ու տարիքային առանձնահատկությունների հաշվառումը՝

Աշխատանք ընտանիքի և ծնողների հետ

Հաճախ առաջացող հիմնական խնդիրները պայմանավորված են երեխայի մոտ դրսևորվող անվստահությամբ, թերաբժեքությամբ, իսկ այդ իրավիճակում անչափ կարևոր է ծնողների աջակցությունը: Չի կարելի երեխայի ամեն

⁶ **Леонтьев А.Н.**, Психологические основы развития ребёнка и обучения, 2009, с. 310-311.

⁷ **Оськина Н.Г.**, Профилактика интернет-зависимости у младших школьников: новая модель, Журнал «Начальная школа», 2012, №7, с. 17-20.

մի քայլը խիստ քննադատության արժանացնել, ընդգծել նրա թերություններն ու համեմատել նրան այլ երեխաների հետ: Դա միայն կարող է խորացնել առաջացած խնդիրը:

Անհրաժեշտ է որոշ չափով կիսել երեխայի հետաքրքրությունները համացանցային նյութերի և խաղերի նկատմամբ: Դա կնպաստի ինչպես հարաբերությունների մտերմացմանը, այնպես էլ կվերականգնի վստահությունը ծնողների տված խորհուրդների նկատմամբ: Հետվելով մի շարք մանկավարժների և հոգեբանների կարծիքների վրա, ձևակերպեցինք այն հիմնական խորհուրդները, որոնք կօգնեն ծնողներին ճիշտ կողմնորոշվելու նման իրավիճակներում՝


- Միշտ պետք է հստակորեն որոշել երեխայի՝ համակարգչի առջև գտնվելու ժամանակը: Ժամանակի ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով երեխայի տարիքից:

- Անհրաժեշտ է հնարավորինս շատ շփվել երեխայի հետ, նրա մոտ ձևավորել ներդաշնակ հուզական միջավայր, այցելել տարբեր միջոցառումների, որպեսզի երեխան կարողանա շփվել տարբեր մարդկանց հետ:

- Խիստ կերպով կրճատել քնից առաջ համակարգչի առջև գտնվելու ժամանակը:

- Անհրաժեշտ է երեխայի մոտ առաջացնել հետաքրքրություն ակտիվ խաղերի և ֆիզիկական հետաքրքրությունների նկատմամբ:

- Անհրաժեշտ է հետևել, որ համակարգչային խաղը չհանդիսանա հարազատների և հասակակիցների հետ շփման փոխարինողը:



• Նպատակահարմար է երեխայի հետ միասին քննարկել և վերլուծել խաղերը, առանձնացնել այն խաղերը, որոնք ունեն զարգացնող նշանակություն: Անհրաժեշտ է երեխային ցույց տալ սեփական անձնական օրինակը⁸:

Խմբային և կոլեկտիվ աշխատանքների նախագծում դպրոցում

Ուսուցման կոլեկտիվ և խմբային եղանակները ենթադրում են համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում և փոխուսուցման ու փոխօգնության սկզբունքներով առաջնորդվող միջավայրի ստեղծում: Նման միջավայրի առկայությունը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի՝ գիտակցելու ընդհանուր աշխատանքի բարձր մակարդակով կատարման գործընթացում իր դերն ու գործառույթը: Երեխան գիտակցում է, որ ունի պատասխանատվություն և ամեն ձևով պետք է իրականացնի այն: Խմբային և կոլեկտիվ աշխատանքների ժամանակ շփումը դառնում է առավել անմիջական, ընդհանուր նպատակի շուրջ աշխատանքը աշակերտներին դարձնում է միասնական և համախմբված: Նման միջավայրում աշխատանքը վերականգնում է երեխայի ինքնավստահությունը, երեխան սկսում է զգալ իր դերի կարևորությունը, գիտակցել փոխուսուցման և փոխօգնության նշանակությունը: Իսկ այս ամենը կարող է զգալի չափով նվազեցնել համացանցի նկատմամբ նրա ունեցած հետաքրքրությունը, քանի որ համացանցն արդեն կորցնում է իր գլխավոր գործառույթը երեխայի համար՝ իրական հարաբերությունների փոխարինման գործառույթը: Իրական հարաբերությունների, դրանց արդյունավետության, կարևորության գիտակցումը երեխայի առօրյայից դուրս կմղի վիրտուալ հետաքրքրություններն ու դրանց նկատմամբ պահանջմունքը:

Համացանցում գտնվելու ժամանակի վերահսկում

Այս գործընթացում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև համացանցում գտնվելու ժամանակի վերահսկումը: Իհարկե, դա մեծամասամբ ծնողների և ընտանիքի անդամների գործառույթն է, սակայն դպրոցի և դասվարի դերը մեծ է ծնողների ուշադրությունն այդ խնդրի վրա սևեռելու գործում: Օրինակ, հարցաթերթիկների, հարցումների, անկետաների միջոցով կարելի է պարզել ծնողի հետաքրքրվածությունը խնդրի վերաբերյալ, պարզել, թե ինչքան ժամանակ է երեխան անցկացնում համակարգչի առջև, արդյո՞ք ծնողը գիտի՝ ինչով է զբաղվում երեխան այնտեղ, ի՞նչ խաղեր է խաղում, ու՞մ հետ է շփվում և այլն: Դասվարը կարող է, անգամ պարտավոր է նախագգուշացնել, որ համակարգչի առջև նստած լուռ, համեստ, չաղմկող և չարաճճիություն չանող երեխան ոչ թե փրկություն է ընտանիքի համար, այլ ահազանգ, որ համացանցը կլանել է երեխային, որ երեխան ձեռք է բերում 21-րդ դարի ամենավտանգավոր հոգեբանական կախվածություններից մեկը:

⁸ Рубцов В.В., Ученик за компьютером: что можно, что нельзя Текст. Основы социально-генетической психологии, 1996., с. 23.

Ցավով, ծնողների մեծամասնությունը միշտ չէ, որ զգում է այդ վտանգավոր պահը, հաճախ՝ իրենք են երեխային մղում համացանցի կործանարար ճիրանները: Ծնողների նման վերաբերմունքը շատ պատճառներ և հետևանքներ ունի՝ սոցիալական, հոգեբանական, տնտեսական, անձնական և այլն:

Քանի որ նման խնդրի առկայությունն ու օրեցօր աճող ցուցանիշը հիմնականում խնդրի և դրա վտանգների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակի արդյունք են, ապա որպես տարրական դասարանների ուսուցիչ՝ առաջարկում ենք տանել աշխատանքների ծնողների իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Դա կարելի է իրականացնել ծնող-ծնող, ծնող-ուսուցիչներ, ծնող-համապատասխան մասնագիտական խումբ հանդիպումների հաճախակի կազմակերպմամբ: Բացի այդ կարելի է կազմել բրոշուրներ կամ փոքրիկ ամսագրեր, որոնք կիրազեկեն ծնողին խնդրի, դրա առաջացման, նախանշանների և կանխարգելման հնարավոր ուղիների մասին:

Резюме- В статье представлен один из быстро развивающихся и опасных вызовов 21-го века-интернет-зависимость. В статье акцентирована проблема распространенности и отрицательного влияния интернет-зависимости на учащихся младшего школьного возраста. Мы уверены, что запреты и отрицание интернета в жизни современного школьника не дадут положительного результата, поэтому предлагаем разработанную нами модель, в которой важное место занимают работа с родителями, планирование групповой и коллективной работы и контроль над временем, проведенном в интернете.

Summary- The subject of this article is one of the fast-developing and dangerous challenges of the 21 century, that is the Internet addiction. The article puts a bold accent on the problem of the widespread ness and negative effects of the Internet addiction on the pupils of elementary school. We are certain that the ban and rejection of the Internet for the modern pupils will not have positive result, that's why we offer model elaborated by us, where the work with parents, the projection of group and collective works and time control of being online is highlighted.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՌՈՒԶԱՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ Վանաձորի պետական համալսարան

Մեզ հրճվանք է պարզևում ոչ թե այն, ինչ մեզ շրջապատում է, այլ մեր վերաբերմունքը շրջապատի նկատմամբ

Ֆրանսուա դը Լառոշֆուկո

Ժամանակակից հասարակությունը կանգնած է լուրջ ընտրության առջև, պահպանել՝ բնության վրա իր իշխանությունը, թե՛ վերացնել և կանոնավորել իր գործունեությունը՝ նրա հնարավորություններին համապատասխան: Առաջին դեպքում, մասնագետների կարծիքով՝ էկոլոգիական աղետն անխուսափելի է, իսկ երկրորդ դեպքում՝ հնարավոր է կենսոլորտը պահել կյանքի համար պիտանի վիճակում, սակայն դրա համար անհրաժեշտ է արժեքների վերաիմաստավորումը և նոր համակարգի հիմնումը, որը կնպաստի մարդու, հասարակության և բնության ներդաշնակ զարգացմանը:

«Էկոլոգիական կոլտուրա» ասելով հասկանում ենք շրջակա միջավայրի, բնական համակարգերի պահպանման վերաբերյալ մարդու գիտելիքների, կարողությունների, արժեքային կողմնորոշումների, վարքային դրսևորումների համակարգը¹:

Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման բնագիտական հիմքը կազմում են գիտելիքները: Այդ վերաբերմունքն առաջանում է երեխաների հատկապես միջին դպրոցականների շրջանում, հուզական-զգայական ոլորտի զարգացման հիմքի վրա:

Դեռահասության տարիքը համարվում է անձնավորության ձևավորման տարիք: Բնապահպանական դաստիարակությունը պետք է սկսել այս տարիքում, քանի որ այս փուլում ձեռք բերած գիտելիքները կարող են վերափոխվել համոզմունքների: Դեռահասների բնապահպանական դաստիարակության առաջնային խնդիրը նրանց տարիքային տվյալ փուլի առանձնահատկությունների հաշվումն է:

Այս տարիքում են տեղի ունենում փոփոխությունները՝ նորագոյացությունները, ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ՝ հոգեբանական: Հոգեկանի այս փոփոխությունները շատ հաճախ արտահայտվում են բարդույթների ձևով՝ ագրեսիվ վարք, անհանդուրժողականություն կազմազրկություն, գնահատված պահանջմունքներ, անկայունություն, տրամադրությունների արագ հերթազայություն, սրված ինքնասիրություն, աշխատասիրության բացակա-

¹https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%AF%D5%B8%D5%AC%D5%B8%D5%A3%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

յություն և այլն: Նրանք անտարբերություն են դրսևորում հանրային կարևոր հարցերի նկատմամբ: Այդ հարցերից մեկն էլ բնապահպանությունն է:

Քննելով բնապահպանական խնդիրները, մենք տեսնում ենք նաև պատճառահետևանքային կապը: Բնությունը մարդու համար դառնում է արժեքների չափանիշ, հարստության աղբյուր: Ժամանակակից արժեհամակարգը հատկապես կարևորում է նոր տեխնոլոգիաները, որոնք ժամանակակից մարդու մոտ ձևավորում են գործնական վերաբերմունք աշխարհի մարդկանց և բնության նկատմամբ ոչ միայն որպես բնակություն միջավայրի, այլև նախ և առաջ որպես կարևոր համամշակութային արժեքի, քանի որ բնությունը գիտելիքների աղբյուր է: Այս առումով կարևոր են աշխատանքային գործերի որոնումն ու լարվածությունը, սովորողների որոնողական բնույթի աշխատանքներում դեռահասներին ընդգրկելը:

Այստեղ նրանք իրենց դրսևորելու և կոլեկտիվում նշանակալից տեղ գրավելու հնարավորություն են ստանում: Իսկ դեռահասներին դաստիարակելու հիմնական ուղին նրանց անձի այնպիսի որակների վրա հենվելն է, ինչպիսիք են եռանդունությունը և առաջնություն ձեռք բերելու ձգտումը, որոնք զուգորդվում են իրենց սոցիալական թերաթժեքության փաստի մասնակի գիտակցման հետ, ինչպես նաև հենվել նրանց առջև դրված նպատակին հասնելու գործում ցուցաբերող համառության վրա:

Նրանց նկատմամբ ցուցաբերվող ընդգծված վստահությունը, հասարակական-կազմակերպչական գործունեության մեջ ընդգրկելը, աշխատանքային հաջողությունների կատարելագործումը կրկնությունների միջոցով, կազմակերպչական գործունեության մեջ ներգրավելը, որտեղ կարգադրելու և ենթարկվելու կարողություններ են ձևավորում, ապահովում են դեռահասների համեմատաբար արագ մուտքը հանրօգուտ աշխատանքի բնագավառում: Սրանք ապահովում են դեռահասների զգոնությունը. որոնում և գտնում են խնդիրների լուծումը, իսկ եթե չեն գտնում հրավիրում են ուրիշների ուշադրությունը այդ խնդրին²:

Էկոլոգիան որպես գիտություն բնութագրելիս պետք է հաշվի առնել մի քանի ընդհանուր դրույթներ, որոնցից մենք ներկայացնում ենք հետևյալները.

1) Էկոլոգիան գիտություն է բնության և հասարակության փոխհարաբերությունների և հիմնախնդիրների մասին:

2) Գիտություն է բնության կազմության և գործառույթների մասին:

3) Էկոլոգիան համակարգերն ուսումնասիրող գիտություն է:

Էկոլոգիական դաստիարակությունը, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ուսուցման և փոխանցման համակարգված գործընթաց է: Էկոլոգիական դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի ուսումնա-

² Լաուրա Ասատրյան Էկոլոգիական դաստիարակություն, 2007թ:

կան հաստատությունների համատեղ գործունեության միջոցով միտում ունենալով հատկապես բարձրացնելու դեռահասության շրջանում:

2001 թ-ի նոյեմբերի 20 ին ՀՀ-ի ազգային ժողովը ընդունել է օրենք «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին»: Շատ կարևոր է էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում:

Սովորողները պետք է լուծեն ոչ թե զուբալ էկոհարցեր, այլ հիմնահարցեր, որոնք վերաբերվում են իրենց շրջապատին: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, հմտությունները փոխանցել իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին: Բնապահպանական կրթությունը ոչ միայն գիտելիքների ձևավորումն է, այլ գործնական կարողությունների զարգացում:

ՀՀ-ում էկոլոգիական անընդմեջ կրթության օրենքի նպատակն է՝

ա) Ապահովել մարդու և հասարակության անընդմեջ, համալիր, միասնական էկոլոգիական գիտելիքների մատուցումը:

բ) Նպաստել էկոլոգիական դաստիարակության և կուլտուրայի ձևավորմանը մարդկության, հասարակության և շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակման, համակողմանի զարգացած անձի ձևավորմանը:

Օրենքի խնդիրներն են՝

ա) էկոլոգիական գիտելիքների հաղորդման իրավունքի ապահովումը և պաշտպանումը:

բ) Ազգաբնակչության էկոլոգիական կուլտուրայի ձևավորման ու զարգացման, իրավական, սոցիալ- տնտեսական կազմակերպման և այլ երաշխիքների սպառումը:

գ) Գոյություն ունեցող տեղեկատվական ու կրթական կառույցների համակարգում առաջադրված խնդիրների կենսագործման մեխանիզմների ապահովումը³:

էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկն է: էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը, դեռահասը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ: Միջին դպրոցականների տարիքը համընկնում է դեռահասության շրջանի հետ: Տարիքային սահմանումն ընդգրկում է 10-15 տարեկան: Երբ 10 տարեկանը փոխադրվելով 4-րդ դասարան արդեն անցնում է էապես նոր կենսաձևի, կիրառում են «պատանեկություն» հասկացությունը՝ որպես միջդեռահասության, կրտսեր և ավագ դեռահասության շրջանների ամբողջություն: Դեռահասության տարիքի առանձնահատկությունը այն է, որ մարդը այս փուլ մտնելով որպես երեխա դուրս է գալիս չափահաս դարձած: Այս փուլում անցում է կատարվում մանկությունից դեպի հասունություն: Դպրոցական շրջա-

³ www.parliament.am

նում այն կարելի է կազմակերպել միջոցառումների, արշավների, էքսկուրսիաների տեսքով՝ այցելելով արգելավայրեր և արգելոցներ: Դեռահասների մասնակցությամբ կարելի է կազմակերպել ծառատունկ, թղթի թափոնների հավաքում, տարածքի կարգի բերում, ծառերի խնամք՝ ըստ յուրաքանչյուր սովորողին՝ «1 ծառ» նախագծի շրջանակներում և այլ միջոցառումներ⁴:

Այժմ ներկայացնում ենք աշխարհի ամենականաչ երկրների ցանկը, որոնց մեջ ցավոք Հայաստանը չի մտնում:

- Իսլանդիան վարկանշային աղյուսակի առաջատար հորիզոնականում է իր հիասքանչ բնությամբ: Տեղի բնակիչները երկրի ջերմային էներգիան բավական ճիշտ են գործածում, իսկ գործածվող էլեկտրաէներգիայի և ջերմային աղբյուրի 82%-ը հիմնված է ջրածնի վրա:

- Շվեդարիան ցուցակում 2-րդն է: Տեղի կառավարությունը, խոշոր և փոքր ընկերությունները պարբերաբար ներմուծում են կանաչ տեխնոլոգիաներ, երկրում բացվում են նոր ազգային՝ առավել կանաչ և մաքուր միջավայր ստեղծելու համար:

- Կոստա Ռիկան նույնպես մաքուր երկրների շարքում է: Նպատակ ունի մինչև 2021թ. Ազատվել ածխածնի արդյունաբերական արտանետումներից: Վերջին 5 տարիների ընթացքում արդեն իսկ 5մլն. Ծառեր են տնկվել:

- Ցուցակում հաջորդը Շվեդիան է:

1. Ամենականաչ երկրների հնգյակը զբաղեցնում է Նորվեգիան: Նպատակ ունի ամբողջությամբ ազատվել CO₂-ի արտանետումներից, որի համար էլ ձեռք են բերում համապատասխան սարքավորումներ⁵ [նկ.1 <http://www.inlobby.com/r/ZURiGO.html>]:

Հայաստանում աղտոտված գետ է համարվում Փամբակի լեռներից սկիզբ առնող Աղստև գետը, որը սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Այն գտնվում է աղտոտվածության ծայրահեղ վիճակում [նկ.2,3,4]:

1997-1999 թթ. 19000 հատ ծառատեսակներ են ոչնչացվել: Հրազդանի անտառներում գտնվող 10.000 հա տարածքում պատրաստվում են կատարել ծառատունկ: Վերջերս Սյունիքի մարզում կատարվել ապօրինի ծառահատում մեծ մասշտաբով: Ըստ հաշվումների 2015թ-ին կտրվել է 1972 հատ ծառ: Սա միայն բացահայտված տվյալներով⁶ [նկ.5,6]:

Հողվածի նպատակն է ոչ միայն բնապահպանական դաստիարակության գեղագիտական կողմը ցույց տալը այլև դրա զուգակցումը բարոյաբնապահպանական գիտակցականության հետ:

⁴ [showthread.php] ՀՀ օրենքը Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին

⁵ [<http://www.lragir.am/index/arm/0/society/home/80162>]

⁶ [Armenia TV 21.03.2016թ.]

Ելնելով մի հարցազրույցի արդյունքներից, տեղեկացանք, որ հարցվող-աշակերտները, կարծես թե ունեն տեսական գիտելիքներ, բայց դրանք չեն կիրառվում գործնականում և կյանքի չեն կոչվում:

Հարցեր և պատասխաններ

Երրորդ դասարանի աշակերտ Մկրտչյան Մհեր

1. Ի՞նչ եք հասկանում էկոլոգիա ասելով:

Ես բնություն ասելով հասկանում եմ մեզ շրջապատող կանաչապատ տարածքները:

2. Ի՞նչպես եք պահպանում բնությունը և բնության մաքրությունը:

Պետք է մեր գործողությունների հետևանքով առաջացած աղբը լցնենք աղբարկղը:

3. Ի՞նչ է մեզ տալիս բնությունը:

Բնությունը մեզ տալիս է վառելափայտ՝ փայտից ստանում ենք թուղթ:

4. Ի՞նչին է նպաստում բուսականությունը:

Բուսականությունը նպաստում է մաքուր և թթվածնով հարուստ օդին:

Երրորդ դասարանի աշակերտուհի Ոսկանյան Մանե

1. Ի՞նչ եք հասկանում էկոլոգիա ասելով:

Մեզ շրջապատող բուսականությունը:

2. Ի՞նչպես եք պահպանում բնությունը և բնության մաքրությունը:

Պետք է բնությունը ճիշտ խնամել, վնասակար նյութերը, աղբը գետերը չլցնել:

3. Ի՞նչ է մեզ տալիս բնությունը:

Բնությունը մեզ տալիս է վառելափայտ, շինափայտ:

4. Ի՞նչին է նպաստում բուսականությունը:

Բուսականությունը նպաստում է օդի մաքրմանը:

Երրորդ դասարանի աշակերտ Մադոյան Տիգրան

1. Ի՞նչ եք հասկանում էկոլոգիա ասելով:

Գեղեցկություն, անտառ, ծառ, ծաղիկ, գետ, լիճ:

2. Ի՞նչպես եք պահպանում բնությունը և բնության մաքրությունը:

Չենք աղտոտում, կրակը մարում ենք, որպեսզի անտառը չայրվի, աղբը չթափել գետերում, մեզ ոչ պիտանի իրերը չպետք է նետել ամենուր, այլ լցնել աղբարկղերը:

3. Ի՞նչ է մեզ տալիս բնությունը:

Բնությունը մեզ տալիս է շինանյութ, վառելափայտ, թուղթ:

4. Ի՞նչին է նպաստում բուսականությունը:

Նպաստում է, որ լինենք առողջ, տալիս է մաքուր օդ և գեղեցկացնում է շրջակա միջավայրը:

Երրորդ դասարանի աշակերտ Հակոբյան Էրիկ

1. Ի՞նչ եք հասկանում էկոլոգիա ասելով:

Գեղեցիկ անտառներ, ծառեր, ծաղիկներ:

2. Ի՞նչպես եք պահպանում բնությունը և բնության մաքրությունը:

Ոչ պիտանի իրերը չթափել փողոցներում և գետերում, այլ թափել աղբարկղերում:

3. Ի՞նչ է մեզ տալիս բնությունը:

Արեգակը մեզ տաքացնում է, լույս ու ջերմություն է մեզ հաղորդում, գետերից ստանում ենք ջուր և ձուկ:

4. Ի՞նչին է նպաստում բուսականությունը:

Բնությունը նպաստում է մաքուր օդին, ապահովում է մեր շրջապատի գեղեցկությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• Էկոլոգիական դաստիարակության տարրերի սերմանումը պետք է սկսել դեռևս նախադպրոցական դասարաններից, որպեսզի աշխարհընկալման ձևավորման սկզբնական փուլերում արդեն աշակերտը պատկերացում ունենա իր շրջապատող միջավայրի մասին:

• Դեպի բնություն կազմակերպված էքսկուրսիայից հետո որպես հաշվետվություն աշակերտները կնկարեն, փոքրիկ քառատողով կամ շարադրության ձևով կներկայացնեն, թե ինչպիսին կուզենային լինել իրենց շրջակա բնությունը:

• Հաճախակի դարձնել շաբաթօրյակները՝ բնությունը մաքուր պահպանելու համար:

• Աշակերտների մեջ սեր արթնացնել դեպի բնությունը, ծառերն ու ծաղիկները. Կարելի դա կատարել նաև համապատասխան եղանակային պայմաններում ծառատունկի միջոցով:

• Բացի պետական հաշվին կատարվող մաքրման միջոցառումներից, դպրոցականների, դեռահասների շրջանում ամեն շաբաթ կազմակերպել մաքրման աշխատանքներ:

• Ավելացնել աղբարկղերի քանակը (տեսախցիկներ տեղադրել որպեսզի մարդիկ աղբը լցնեն աղբարկղերը այլ ոչ թե աղբարկղի մոտակայքը)

Օգտագործված գրականության ցանկ

1. <https://hy.wikipedia.org/> Էկոլոգիական դաստիարակություն
2. Լաուրա Ասատրյան Էկոլոգիական դաստիարակություն, 2007թ
3. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1741&lang=arm>
4. showthread.php//22 օրենքը Ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին
5. [<http://www.lragir.am/index/arm/0/society/home/80162>]:
6. Armenia TV [21.03.2016թ.]// Ժամը լրատվական:

Резюме–В статье рассматриваются следующее важное положение. Говоря ”Экологическая культура” понимаем систему челоовеческих знаний, способ-

ностей, ценностных ориентаций в окружающей среде и сохранении природных ресурсов. Экологическое воспитание – это совокупная деятельность.

Экологических знаний, возможностей, изучение и передача навыков направленных для сохранения окружающей среды. Экологическое воспитание осуществляется посредством совместной работы семейных и учебных заведений, имея склонность повысить его в юношеском периоде.

Чтобы не делать экологических ошибок современный человек, юноша должен быть вооружен элементарными экологическими знаниями и новым экологическим мышлением. Средний школьный возрастов совпадает с юношеским периодом. Возрастное ограничение включает в себя юношей от 10-15 лет.

Summary-The article by saying "ecological culture" we mean the system of environment, the persons's knowledge about keeping natural systems, abilities, valuable orientations, expressing behavior system.

Ecological upbringing is a systematic process of keeping environment, abilities, teaching skills and transmitting. Ecological upbringing is taken place by the help of family and educational institutions, which intends especially develope at teenager's period.

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

ՄԱՐԴԱՆՑԱՆ ՕԿՄԱՆԱ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Այսօր ժամանակակից հասարակությունը ապագա մասնագետների համար բարձր պահանջներ է առաջադրում: Այդ պատճառով արդիականացվում են այն հարցերը, որոնք կապված են ուսանողների մասնագիտական ինքնորոշման խթանման հետ, հատկապես ցածր կուրսերում: Ուսանողների ինքնաճանաչման, անհատի ինքնագարգացման համար կարևոր բաղադրամաս են հարմարվողական գործընթացների խթանումը՝ կապված բուհական համակարգ ընդունվելու դրդապատճառների հետ, նրանց ռեֆլեքսիայի զարգացման և մասնագիտական գործունեության վրա թողած ազդեցության հետ:

Այսօր առավել արդիական խնդիր է՝ գտնել ուղիներ ապագա մասնագետների պատրաստման համակարգի արդյունավետության բարձրացման համար:

Հասարակության բարեկեցության համար անհրաժեշտ է, որպեսզի ապագա մասնագետները արագ և որակյալ տիրապետեն նոր գիտելիքներին, հմտություններին և կարողություններին, ակտիվորեն տիրապետեն մասնագիտական վարպետության ուղու հիմնմանը:

Պետք է նշել, որ «նոր ուղղությունները»՝ ուղղված մասնագիտական ինքնորոշման խթանմանը, անհրաժեշտ է կրտսեր կուրսերի ուսանողների հետ կիրառել, որոնք պետք են մասնագիտացման ավելի վաղ փուլերում՝ ստեղծելով նրանց մոտ դրական հուզական տրամադրվածություն իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ, նրանց հետաքրքրության բարձրացմանը կրթական գործընթացի նկատմամբ:

Վերոնշյալ գործընթացը բուհում կապված է անհատի կատարած գործունեության տեսակների որոշմամբ, «ուսանող-բուհ» հարաբերությունների համակարգի ձևավորմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատության ոլորտում [4]:

Հարմարվողականությունը ենթադրում է ուսանողի անհատի հաղորդակցումը սոցիալական և մասնագիտական փորձին, նոր սոցիալական գործառույթներին, բուհի մշակույթին, վարվեցողության նորմերին:

Բուհում ուսանողի հարմարվողականության հիմնական խնդիրները առանձնացվում են ըստ՝

- ուսանողի հարմարումը բուհական համակարգին (նորմերի, սկզբունքների յուրացում, համակարգի ուսուցում),
- ուսանողի հարմարումը նոր խմբում (համակուրսեցիների խմբում),
- խմբում կարողությունների զարգացում՝ որպես համարժեք փոխազդեցություն,
- ուսանողների պատրաստվածության դրդապատճառների խթանում մասնագիտական ինքնորոշման համար:

Ուսանողների մասնագիտական ինքնորոշման դրդապատճառներից ամենակարևորը սկզբնական փուլերում (1-2 կուրս), հանդիսանում է ապագա մասնագետների ուսուցումը:

Բուհում կարևոր արժեք է ներկայացնում մասնագիտական ինքնորոշման և անհատի գործունեության խթանումը:

Պրյաժնիկովն առանձնացնում է ակտիվության չորս ձևեր, որոնք կարելի է լիովին օգտագործել ուսանողների հետ տարվող աշխատանքներում՝ հատուկ դասընթացներ անցկացնելով՝ ուղղված սեփական «Ես»-ի նույնականացմանը ընտրած մասնագիտության հետ՝ կառուցելով հեռանկարներ անհատական-մասնագիտական աճի համար [3, էջ 39,43]:

1. Դրդապատճառային-հուզական, հուզական ակտիվության ձևավորումն է (հետաքրքրություններ, պահանջմունքներ), որի հիման վրա կարելի է ձևավորել դրդապատճառառներ՝ մասնագիտական ինքնորոշման կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Դրդապատճառների ձևավորումն նշանակում է մասնագիտական ինքնորոշման նպատակների ճշգրտում:

2. Ճանաչողական-ինտելեկտուալ, տվյալ ուղղությունը մասնագիտական ինքնորոշման համար իրականացվում է պրոբլեմային ուսուցման հիման վրա՝

- միասնական գործունեության մեջ ընդգրկել մասնագիտական կողմնորոշման խնդիրներ,
- խնդիրները բարդացնել և զուգահեռ ձևավորել պահանջմունքը,
- խնդիրը ինքնուրույն լուծել,
- սեփական ընդունակությունները վերլուծելու կարողության ձևավորում և խնդրի լուծում:

3. Պրակտիկ-վարքային ակտիվություն, որը ձևավորվում է աշխատանքում մեթոդների կիրառմամբ: Այս փուլում երիտասարդներին շատ ազատություն է տրվում ինքնուրույն առաջադրանքներ կատարելիս: Օգտագործվում է ցանկացած հնարավորություն, որպեսզի անհատին տա յուրօրինակ մղում ինքնուրույն գործունեության մեջ (օրինակ՝ հարցազրույցի գնալ, ժամանակավոր աշխատել):

Անհրաժեշտ է օգտագործել ցանկացած հնարավորություն և երիտասարդներին ընդգրկել խմբային գործունեության մեջ: Այն պետք է նպաստի ապագա մասնագետների վստահության զգացողության ձևավորմանը իրենց ուժերի նկատմամբ և հնարավորություններ տա ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

4. Բարոյականային, այս փուլում ինքնորոշվող երիտասարդներին, առաջին հերթին, անհրաժեշտ է նեցուկ լինել, քանի որ նրանք դրա կարիքը շատ են զգում:

Անհրաժեշտ է ապագա մասնագետին ցույց տալ նեցուկ լինելու պատրաստակամությունը բարդ իրավիճակներում: Կարելի է պատմել շրջանավարտ-

ների, սովորողների ինքնորոշվածության հաջողված օրինակներ, լավ կլինի հոգեբանա-մանկավարժական խաղեր կամ թրեյնինգներ կազմակերպել՝ առաջադրված նպատակներին հասնելու համար: Ակտիվության այս տեսակները փոխկապված են և ձևավորվում են զուգահեռ:

Ըստ Լ. Ե. Գալագանովայի, մասնագիտական ինքնորոշման գործընթացում պրոֆեսորադասախոսական կազմը՝ դեկանը, ամբիոնի վարիչը, դասախոսը ևս կարևոր դեր ունեն ուսանողների մասնագիտական ինքնորոշման գործընթացում՝ նրանց մասնագիտական ինքնորոշման դեկավարման գործընթացում, կրթական, մասնագիտական գործունեության տեսակներում, հետազոտական աշխատանքում՝ հանդես գալով որպես մասնագետ-խորհրդատու: Նրանք խորհրդակցում են ուսանողների հետ մասնագիտական ինքնորոշման, կրթադաստիարակչական, անհատական զարգացման հարցերի շուրջ, այս գործառույթը ակտիվորեն պետք է իրագործվի 1-ին կուրսում, քանի որ ապագա մասնագետներին անհրաժեշտ է օգնել, խթանել բուհի կրթական միջավայրին հարմարվելու գործընթացին [1, էջ 139]:

Մանկավարժի գործունեությունը նշանակալի բարձր մակարդակ ունի, եթե իրականացվում են հետևյալ ուղղությունները.

- պրակտիկ պարապմունքների կազմակերպում՝ փոխհարաբերություններ թեմայով զրույց ուսանողական խմբում,
- ապագա մասնագետների մասնագիտական կարևոր որակների և նրա զարգացման նպատակների ձևավորմանն ուղղված քննարկում,
- ապագա մասնագետների սոցիալական դիմանկարի ձևավորմանն ուղղված օգնություն, որը կնպաստի անհատի մասնագիտական կարևոր գծերի, որակների ձևավորմանը:

Այս եղանակով մասնագետը՝ դեկանը, ամբիոնի վարիչը, դասախոսը, հանդես գալով որպես մանկավարժ, մանկավարժ-հոգեբան, խթանում են ուսանողների մասնագիտական ինքնորոշմանը:

Ըստ Մարդախանի՝ բարձրագույն ուսումնական հաստատության կրթական միջավայրը հատուկ կազմակերպված՝ մարդու, խմբերի ուսուցանման համար տարածություն է: Նա տալիս է ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների ընդհանուր նկարագիրը՝ լայն ու նեղ իմաստներով:

Լայն իմաստով՝ ըստ մասնագիտական ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների ընդգրկում է՝ պրոֆեսորադասախոսական կազմը, նրանում ձևավորված մշակույթ ու ավանդույթներ, տեղեկատվության հնարավորություններ:

Նեղ իմաստով՝ ըստ կրթական անմիջական միջավայրի առանձնահատկությունների ընդգրկում է՝ լսարաններ, կենտրոններ, պրակտիկայի անցկացում, պրոֆեսորադասախոսական կազմ, ֆակուլտետի ավանդույթներ, դասավանդող-ուսանող փոխհարաբերություններ:

Պրոֆեսոր Լ. Վ. Մարդախանը առանձնացնում է բուհի կրթադաստիա-

րակչական միջավայրի հետևյալ ոլորտները, որոնք նշանակալի են ուսանողների մասնագիտական ինքնորոշման խնդիրների հետազոտման համար.

- սոցիալական (բուհի սոցիալական կարգավիճակը, բուհի ղեկավարման համակարգը, ֆակուլտետի, ամբիոնի դերը, ուսանողական ինքնակառավարման կազմակերպությունը, կրթության և պրակտիկայի ուղղությամբ կրթական, մեթոդական հիմքերը),

- մշակութային (բուհի վարչակազմի մշակութային, մասնագիտական ընդհանուր մակարդակը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ամբիոնները, ուսուցման մշակութային միջավայրը՝ հաստատություն, ամբիոններ, լսարաններ, դասախոս-ուսանող, աշխատակից-ուսանող փոխհարաբերությունների մշակույթը, բուհի թանգարանները, ֆակուլտետի պատմության հասանելիությունը),

- դաստիարակչական և կրթական (կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպումը, անմիջական ուսուցում լսարանում, պրակտիկաներ, պրակտիկայի կենտրոնների հեղինակությունը, մասնագիտության մեթոդական հիմքերի և ուսուցման որակն ու հասանելիությունը սովորողների համար):

Միավորելով այս ոլորտները՝ կարելի է կանխատեսել և պլանավորել և՛ անհատի ինքնորոշման, և՛ զարգացման գործընթացները՝ կրթական միջավայրում: [2, էջ 22-27]

Այսպիսով՝ սովորողների մասնագիտական ինքնորոշման արդյունավետությանը նպաստում է ինչպես ընտանիքը, հասարակությունը, այնպես էլ կրթական հաստատություններում հաստատված պայմանները, միջավայրը, որտեղ սովորում է ուսանողը:

Բարձրագույն ուսումնական հաստատության կրթական միջավայրը հանդիսանում է անհրաժեշտ պայման և գործոն մասնագիտական համակարգում և սովորողների մասնագիտական ինքնորոշման համար՝ նպաստելով մարդու հաջող հարմարմանը որոշակի միջավայրում և դրա միջոցով ուղղորդում նրանց դեպի հասարակական կյանք [5]:

Օգտագործած գրականության ցանկ

1. Галаганова Л.Е., Педагогические условия формирования профессионального самоопределения студентов университета: - Камерово, 1998, с. 248.
2. Жукова В.И., Методика преподавания в вузе: - РГСУ, 2006, с. 203.
3. Пряжников Н.С., Методы активизации профессионального и личностного самоопределения: учебнометодическое пособие. - М., 2002, с. 400.
4. Руфова Н.Л., Психологические условия адаптации молодых специалистов к современному рынку труда: (на примере психолого-педагогических профессий): - М., 1999, с. 250.
5. Соловьева И. К., Пути повышения эффективности системы подготовки будущих специалистов, Наука и современность, В., 2011.

Резюме-В статье рассматриваются важность особенностей профессионального самоопределения студентов в вузе.

Summary-In the article discusses about importance of student's professional self-determination peculiarities in higher educational establishment.

ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ *Վանաձորի պետական համալսարան*

Մանկական գրականությունը մատաղ սերնդի դաստիարակության կարե-
վոր միջոցներից է: Այն մանկավարժի դաշնակիցն է, փոքրիկի խորհրդատուն
ու դաստիարակը: Մանկական գիրքը հարստացնում է երեխայի կենսափոր-
ձը, ընդլայնում գիտելիքները, նպաստում նրա բնավորության ու աշխարհա-
յացքի ձևավորմանը, օժանդակում կենսուրախ և լավատես դառնալուն:

Մանկական գրականության զարգացման հիմքում ընկած է ժողովրդի գե-
ղարվեստական խոսքը, նրա բանահյուսությունը: Հենց այս իմաստուն և բազ-
մահարուստ աղբյուրից է սկզբնավորվել ու սնունդ առել երեխայի առաջին
պատկերացումները: Ժողովրդական երգերը, հեքիաթները, առած-ասաց-
վածքները և այլ բնույթի բանավոր ստեղծագործություններ դարեդար ուղեկ-
ցել են մանուկներին և դաստիարակել նրանց: Քանի որ կրտսեր դպրոցա-
կանի դաստիարակությունն իրականացվում է մանկական ստեղծագործու-
թյունների միջոցով ուրեմն մեր խնդիրն է երեխաների մեջ ձևավորել բարո-
յական որակներ և զարգացնել այն:

Մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս ,
որ դաստիարակության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված
է ուսուցիչների և ծնողների կողմից երեխաների բարդ , հուզական աշխարհը
ներթափանցելու և նրանց զգացմունքների վրա խելացիորեն ներգործելու
կարողությամբ¹:

Ժամանակակից աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաննե-
րում, երբ սրությամբ է դրված Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա
հարաբերությունները, երբ լուծված չէ Արցախի հիմնահարցը, դպրոցական-
ների և ուսանողների հայրենասիրական դաստիարակությունն առավել
ուշադրության է արժանի: Մասնավորապես ընդգծված կարևոր նշանակու-
թյուն է ստանում կրտսեր դպրոցականների մոտ ռազմահայրենասիրական
դաստիարակության ձևավորման խնդիրը, որի լուծման մի քանի եղանակ է
առաջարկված սույն աշխատանքում: Միանշանակ հայրենասիրական դաս-
տիարակությունը երեխաների մոտ ձևավորվում է ստեղծագործությունների
միջոցով: Այդ նպատակով անհրաժեշտ է ճիշտ ընտրել ծրագրային նյութերն
ու մատուցման մեթոդները և այդպիսով հասնել նրան, որ նոր սերնդի մոտ
զարգանա հայրենասիրության, ազգային հպարտության ու արժանապատ-
վության զգացումը և նրանց պարտավորեցնի , որ յուրաքանչյուրն իր հերթին
պահի ու պահպանի իր ազգային դիմագիծը՝ զերծ պահելով այն օտարամո-
լությունից: Տարբեր առարկաների դասգործընթացը, ելնելով ծրագրային նյու-

¹ Մ.Գ. Լալախանյան «Հայ մանկական գրականության պատմության գծերը» Երևան 1973թ. էջ5:

թից և ինքնուրույն աշխատանքի բնույթից, ճիշտ և ժամանակին օգտագործելու դեպքում մեծ հնարավորություն կա ձևավորել ազգային հպարտություն, արժանապատվություն, որոնցից «կառուցվում է» հայրենասիրության շքեզ ապրանքը: Հայրենասիրությունը այն կարևոր բարոյական որակն է որի մասին պետք է խոսել անընդհատ²: Մանկական գրականությունը այնքանով կարող է նպաստել հայրենասիրական դաստիարակությանը, որ այն հարուստ է խոսքով և պատմական երևույթների զգացմունքային գեղարվեստական նկարագրություններով, որոնք օգնում են ներգործելու երեխայի զգացմունքների վրա: «Հայրենասիրությունը, ազգասիրությունը ամեն անհատի սուրբ պարտականությունն է: Եվ հայրենիքի պաշտպանության համար կատարած պատերազմը սուրբ պատերազմ է»³: ԲաՖՖի Հայրենասիրությունը բարոյական զգացում է, որն առավել վառ դրսևորվում է հայրենիքի պաշտպանության ժամանակ, իսկ հայրենասիրության ձևավորման գործում հենքային ենք համարում ազգային արժանապատվության և հպարտության ձևավորումը: Հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսել վաղ տարիքից սեր ներարկելով դեպի հայրենիքը, հայ ժողովուրդը այս ամենը իրականացնելով մանկական ստեղծագործությունների միջոցով: Ռաֆաել Պատկանյանը առաջարկում էր հայրենասիրական դաստիարակությունը սկսել օրորոցից: Միրել հայրենիքը, մայրենի լեզուն, ժողովրդին, լինել բանիմաց, օգնել խավարում և օտարի բռնակալության տակ տառապող հայ ժողովրդին: Ահա Պատկանյանի բանաստեղծությունների հիմնական իմաստը: Հայրենասիրությունը փոքրիկի մեջ վառ պահելու նպատակով Թումանյանը մանուկներին հասցեագրված «Ամենից լավ տունը» բանաստեղծության մեջ դիմում է օտարի ուժին: Մարդը իր երջանկությունը կարող է գտնել միայն հայրենի երկրում: Այս է բանաստեղծությունից բխող եզրակացությունը: Կապուտիկյանի համար հայրենասիրությունը ,հայրենիքը մեծ տեղ է զբաղեցնում: Նա երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու նպատակն է հետապնդում, երբ ասում է.

Մեծացիր լավին, մեծացիր չարին ու բարուն գիտակ
Մեծացիր որպես ռամիկ ու կտրիճ
Մանկուց սովորիր ատել թչնամուն,
Քանզի նա մանկուց կյանքդ խռովեց:

Անգնահատելի է նաև Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, որում մամռապատ քարի, բերքի, հեզ աղջիկների, հայոց մեծերի, Հայաստանի հավերժ խորհրդանիշ Մասիս սարի արժևորումն է տրված: Ճիշտ է մայրենի դասագրքերում բավականին հայրենասիրական թեմաներ կան, սակայն անհրաժեշտ է նաև ձեռնարկել համապատասխան միջոցառումներ թե նեղ և թե լայն շրջանակներում: Երեխաները պետք է պատ-

² Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2012թ., էջ 146:

³ ԲաՖՖի «Մամվել» հատոր 8, 1986թ., էջ 60:

կերացում կազմեն հայրենիքի, հայոց բանակի, հայ զինվորի, ռազմական ուժի մասին և անպայման իմանան ռազմահայրենասիրական թե երգեր և թե ստեղծագործություններ ու ոգեշնչվեն դրանով: Միջոցառումների կազմակերպման գործում պետք է կարևորել տվյալ դասարանի բոլոր երեխաների մասնակցությունը, առանձնացնել հերոսների բնորոշ գծերը: Յուրաքանչյուր միջոցառում պետք սկսվի նպատակի, լուծվելիք խնդիրների հստակ ձևակերպումից: Երեխաներին պետք է հարցնել ու իմանալ նրանց կարծիքն ու պատկերացումները. հայրենասիրությունն արտահայտվում է միայն պատերազմների ժամանակ թե՞ նաև խաղաղ կյանքում: Ընտանիքում նախադպրոցական հաստատություններում պետք է աշխատանքներ տարվեն երեխայի գիտակցության մեջ ռազմահայրենասիրություն ներմուծելու ուղղությամբ: Ծրագրային նյութը, էքսկուրսիաները հնարավորություն են տալիս օգտագործելու հայոց պատմության դրվագները, որոնց միջոցով ծանոթանում են հայ հերոսների գործունեությանը: Հերոսների վերաբերյալ հարցումները, նրանց նմանվելու ցանկությունը երեխայի կողմից արդեն այն լավագույն սերմերն են որ հետագայում ծլարձակվելու, հզորացնելու և ամրապնդվելու են՝ խոր արմատներ ձգելով հայրենասիրության «հողում»:

Ավելի կանոնակարգված, համակարգված աշխատանքներն սկսվում են տարրական դասարաններում, երբ աշակերտներն արդեն անցնում են նյութեր՝ նվիրված հայոց պատմությանը և հայ մեծերին, սերտում են դրանցից իրենց համար մատչելի դրվագներ: Օրինակ «Հայկ և Բելը», «Հանդիպում Մաշտոցի հետ», «Մասունցի Դավիթը», «Մեծ Վարդանը» և այլն: Բերված օրինակները հնարավորություն են տալիս ձևավորելու կամային որակներ, հասնել ինքնագեշտնչման, ինքնահաղթահարման, թեկուզ նրանց վերաբերյալ հանձնարարությունները՝ շարադրություն, նկար և այլն: Շարադրությունները կարող են լինել հետևյալ թեմաներով՝ «Ոչ ոք չի մոռացվել», «Նրանք պաշտպանում են հայրենիքը», «Շենացնենք մեր հայրենիքը»: Այս գործընթացն արդեն գիտակցված է և կարելի է բնորոշել որպես առաջին հաղթանակ: Կարևոր է ուշադրության կենտրոնում պահել ազգային արժեքները և դրանց հետաքրքիր ու հուզումնալից հաղորդումը՝ ցերեկույթի, երեկույթի թատերականացված փոքրիկ ներկայացումների ձևով:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր պետք է ավելի կատարելագործվի: Այդ նպատակով էլ հենց դպրոցից տարրական դասարաններից սկսած պետք է պատրաստել գրագետ հայրենասեր զինվոր: Հայրենասիրությունը սկսվում է հենց դպրոցից: Դպրոցն այն վայրն է որտեղ երեխային պետք է հայրենասեր դարձնենք, քանի որ այսօրվա հայրենասեր աշակերտը վաղվա լավ զինուորն է և քաղաքացին: Դպրոցի բակում ու ներսում ծածանվող Եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն են ներշնչում: Այս մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ՝

անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահպանան ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի: Մթնոլորտը շատ է օգնում՝ հետաքրքրություն արթնացնել մեր պատմության, հերոսների, բանակի նկատմամբ⁴:

Մերօրյա պատմության էջերը նոր բովանդակությամբ լրացվեցին Արցախյան ազատամարտում հայ նվիրյալների հերոսական պայքարի օրինակներով, անհնարինը հնարավոր դարձնելու կարողությամբ, կամքի ուժի, քաջարի ու կորովի ռազմական տաղանդի, ազատատենչ ոգու դրսևորումներով: Այս ամենը փոքրիկներին նրբանկատորեն պետք է բացատրել, հասկացնել: Անհրաժեշտ է վերակառուցել մեր մոտեցումները երիտասարդ սերնդի ռազմական, հայրենասիրական և հոգեբանական դաստիարակության հարցերին, փորձելով գտնել լուծումներ: Այսինքն պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքով՝ «Ես մարտնչում եմ ու պաշտպանում իմ հայրենիքը, տունն ու տեղը, իմ հարազատին և հնարավոր է գոհվեմ, բայց այն ունի մեկ նպատակ՝ անկախ հայրենիք, անդորր, ընտանիք, այդ նպատակին հասնելու միակ ուղին՝ պահպանել և պաշտպանել⁵:

Ռազմահայրենասիրական դաստիարակության, հայրենասիրական գիտակցության ձևավորման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա բովանդակի աշխարհայացքային և բարոյական գաղափարներ՝ ազգային-հայրենասիրական, պատմական բնույթի հայրենասիրական գիտակցություն ձևավորելու համար: Իրավունքը, դրսևորելով կամք, դժվարությունները հաղթահարելու միանշանակ ձգտում»: Ինչպես նշեցի շատ կարևոր է համատեղ ծրագրեր, միջոցառումներ, հանդիպումներ, նոր նախաձեռնություններ երեխաներին առավելագույնս ներգրավելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, դրանով իսկ ապահովելով օրինակելի զինվոր, քաղաքացի դաստիարակելու մեր, մանկավարժներիս բուն աշխատանքը իմաստավորելու խնդիրը: Իհարկե, դպրոց-բուհ-բանակ-հասարակություն համագործակցությունն ավելի արդյունավետ կլինի, եթե մենք կարողանանք ընդլայնել հասարակության տարբեր շերտերի, հասարակական տարբեր կառույցների հետ մեր կապերը:

Իմ կողմից ուսումնասիրվել է Վանաձորի թիվ 3 հանրային դպրոցի, ինչպես նաև Վրաստանի Մառնեուլի ավան Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցի արտադասարանային միջոցառումները՝ նվիրված Արցախի հերոսամարտերին: Միջոցառումները, որոնց մասնակցում էի, ունեին ռազմահայրենասիրական մեծ նշանակություն: Հատկապես հուզիչ էր փոքրիկ երեխաների թատերականացված խաղերը, որտեղ նրանց դրսևորում էին հայրենիքի պաշտ-

⁴ Համացանց՝ <http://avangard.am/?page=news&>

⁵ Համացանց՝ dasaran.am

պանության համար ինքնանվիրումի, հանուն հայրենիքի եզերքի զոհվելու պատրաստակամություն: Ելույթը շատ հուզիչ էր, հուզմունքի արդյունքները նույնպես: Երեխաները այնքան էին մտել դերի մեջ, որ հուզմունքը տիրել էր բոլոր ներկաներին: Սա նշանակում է, որ սփյուռքում ապրող հայ երեխաները նույնպես ռազմահայրենասիրական դաստիարակություն են ստանում և այդ ոգով մեծանում, որպեսզի վերադառնան հայրենիք և պահեն ու պաշտպանեն հայրենիքի սահմանները թշնամուց:

Հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միշտ պետք է ներդնենք աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, կայքեր, հաճախակի անցկացնել ռազմական հայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝ «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ս. Գ. Լալախանյան «Հայ մանկական գրականության պատմության գծեր» Երևան 1973 թ.
2. Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2012թ., էջ 146
3. Բաֆֆի «Սամվել», Երևան, 1986թ., էջ 60
4. Համացանց՝ http://avangard.am/?page=news&cal_date=&news_id=659#.WMGWavKtFGZ
5. Համացանց՝ dasaran.am

Summary—Summarizing the article, the patriotic education in junior school is realized through children's literature as mentioned in the article. Children's literature can promote patriotic education since it is rich in words and artistic emotional description of historical events that help to influence children's emotions. Children should always use children's literature about their homeland recite it on every occasion, be it a holiday or a banquet, in order to get inspired and love their fatherland greatly, respect its culture, traditions, and history. In my opinion, loving one's homeland means to contribute to its development, maintain, and increase its beauty, and if necessary to fight against its enemies that try to disrupt the peace of the country.

Резюме—Как уже было отмечено выше, патриотическое воспитание младшего школьного возраста реализуется с помощью детской литературы. Детская литература является неотъемлемой частью патриотической литературы вообще, так как она богата художественными описаниями исторических событий, которые производят большое впечатление на ребенка и могут повлиять на его эмоции. Художественные произведения для детей должны стать составной

частью детских мероприятий и утренников, должны воспитывать любовь к Родине, уважение к культуре, традициям и истории своего народа. Любить родину, по моему глубокому убеждению, означает делать все то, чтобы внести свой личный вклад в развитие, сохранение традиций и приумножение красоты родного края, уметь при необходимости дать достойный отпор врагу, который пытается нарушить покой в нашей

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՆ**

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

XXI դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական պրոգրեսը շատ ակտիվ է տարածվում: Ամեն օր ի հայտ են գալիս ավելի ու ավելի նոր տեխնոլոգիաներ: Գրեթե բոլոր ժամանակակից մարդիկ իրենց տներում ունեն համակարգիչ, բջջային հեռախոս, պլանշետ և այլն: Մեր օրերում համակարգչային տեխնոլոգիաները մարդկանց առօրյայի մեծ մասն են կազմում: Այսօր հնարավոր չէ մեր կյանքը պատկերացնել առանց տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաների, որոնք մարդկությանը տալիս են լայն հնարավորություններ զարգանալու և առաջ գնալու համար: Համակարգչային տեխնոլոգիաները օգտագործվում են գրեթե բոլոր բնագավառներում՝ գիտական, կրթական, աշխատանքային և բազմաթիվ այլ ոլորտներում: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս կատարել և՛ դրամական միջոցների, և՛ ժամանակի խնայում, ստանալ անհրաժեշտ ինֆորմացիա ցանկացած պահի, ինչպես նաև մասնակցել ուսումնական օնլայն դասընթացների:

Տեղեկատվական տեխնոլոգիաները ունեն որոշակի նպատակներ, դրանք իրագործելու մեթոդներ և իրականացման միջոցներ: ՏՏ-ի նպատակն է տեղեկատվական ահռելի պաշարներից մշակել և խմբավորել այնպիսի հատուկ ինֆորմացիոն խմբեր, որոնք կկարողանան բավարարել օգտագործողի պահանջները:

Տեղեկատվական տեխնոլոգիաները սկսել են արագորեն մուտք գործել նաև կրթական դաշտ: Պրակտիկորեն յուրաքանչյուր դպրոց ունի համակարգիչ կամ համակարգչային դասարան: Մեծ է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ:

Դպրոցում աշակերտներն անցնում են երաժշտություն առարկան: Երաժշտությունն աշակերտի գեղարվեստական ու գեղագիտական դաստիարակման լավագույն միջոցն է: Այն հարստացնում է աշակերտի հոգևոր ներաշխարհը, ձևավորում է նրա սեփական վերաբերմունքը բարության, գեղեցկության նկատմամբ: Երաժշտությունն աշակերտին հաղորդակից է դարձնում համամարդկային արժեքներին և, միաժամանակ, նպաստում է ազգային գիտակցության ձևավորմանը: Երաժշտությունը, հուզական բնույթի հետ մեկտեղ, ունի նաև ճանաչողական գործառույթ և դրա ուսումնասիրումը նպաստում է ոչ միայն զուգորդական, այլ նաև տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը: Երաժշտությունն աշակերտին վարժեցնում է խմբային աշխատանքին, կարգ ու կանոնին, կարգապահությանը: Բացի այդ, որպես սեփական գիրն ունեցող հաղորդակցական լեզու, երաժշտությունն

աշակերտի համար ստեղծում է ցանկացած հասարակության հետ շփվելու լայն հնարավորություններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց տեղն են գտել նաև երաժշտության դասերին, որոնց օգտագործումը մեծ հնարավորություններ է տալիս նաև ուսուցիչներին, դասը դարձնում է ավելի գունեղ, հետաքրքիր, հիշվող և հասկանալի: Հնարավորություն է տալիս նորովի օգտագործել երաժշտության դասերին տեքստային, հնչյունային և տեսատեղեկատվական մասերը, հարստացնում է երաժշտության դասի մեթոդական հնարավորությունները, տալիս է նրան ժամանակակից մակարդակ: Աշակերտի մոտ առաջացնում է նյութի նկատմամբ հետաքրքրություն և ակտիվ մասնակցելու ցանկություն: Դրանց շնորհիվ ցանկացած նյութի ուսուցումն ու դրա արդյունավետությունը աշակերտներին նոր հնարավորություններ է տալիս՝ մտածել յուրովի, մասնակցել դասապրոցեսի ստեղծմանը սեփական գաղափարներով, և այս բոլորը ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ:

Երաժշտության դասի բաղադրիչ մասերն են երգեցողությունը, ունկնդրումը, երգառիթմական շարժումը, իմպրովիզացիան, նվագարանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով հեշտանում և ավելի մատչելի է դառնում մատուցվող նյութը, ավելի հեշտ է դառնում երեխային դասապրոցեսում ընդգրկելը:

Ժամանակակից դպրոցը չպետք է հետ մնա ժամանակի պահանջներից: Օգտագործելով տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաները երաժշտության դասերին՝ պետք է չմոռանալ այն մասին, որ դասի ընթացքում երեխաները շփվում են մշակույթի հետ: Շատ կարևոր է, որ երաժշտության դասը չվերածվի շփում համակարգչի հետ: Այն չպետք է դարձնել մյուս բոլոր դասերի նման: Օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները, անհրաժեշտ է կիրառել միայն նրա այն ձեռքբերումները, որոնք կոգնեն բացահայտել և զարգացնել աշակերտների երաժշտական կարողությունները:

Համակարգիչը տալիս է լայն հնարավորություններ ստեղծագործական գործընթացում երաժշտության կրթության ինչպես մասնագիտացված, այնպես էլ սիրողական ստեղծագործական մակարդակի համար:

Գոյություն ունեն համակարգչով աշխատելու բազմաթիվ ծրագրեր երաժշտության համար¹: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել խմբերի՝

- Երաժշտական խաղարկիչներ
- Ծրագրեր կառավարել երգելու համար
- Երաժշտական հանրագիտարաններ
- Երաժշտական գործիքներ
- Ուսուցանող ծրագրեր

Առաջին խմբին են պատկանում այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են Windows Media Player, Win Amp և այլն: Այս ծրագրերի հնարավորությունները բավականաչափ մեծ են՝ երգերի ցանկի ստեղծում, երաժշտական ֆայլերի

նվագարկում, տարբեր ֆորմատներով ձայնագրում: Ցանկանալով գրավել երեխաների ուշադրությունը, ուղղորդել նրանց մտածողությունը դեպի վերացական կողմը՝ կարելի է օգտվել այս ծրագրերի հնարավորություններից և երաժշտությունը դարձրել գունեղ:

Երգի ուսուցման համար կարելի է օգտագործել այնպիսի ծրագրեր, որոնցից է VocalJam-ը: Այն իրենից ներկայացնում է կառավելի ծրագիր, որը հնարավորություն է տալիս զարգացնելու երաժշտական լսողությունը, և սովորեցնում է արագ կարդալ նոտաները: Այս ծրագիրը նաև հնարավորություն է տալիս կազմակերպել հումորային կառավել-մրցույթներ: Այսպիսի կառավել ծրագիր է նաև KarMaker-ը:

Երաժշտական գրականությանը մեծ օգնություն են ցուցաբերում երաժշտական հանրագիտարանները, որոնք տեղեկություններ են պարունակում ինչպես դասական այնպես էլ հանրամատչելի և ջազային երաժշտության մասին: Այս հանրագիտարանի շնորհիվ կարելի է տեղեկանալ տարբեր երկրներում ռոկի, ջազի, էստրադային երաժշտության ձևավորման հետ, լսել ձայնագրություններ և դիտել տեսանյութեր: Հանրագիտարանում գիտելիքների ստուգման համար կա հատուկ բաժին, որը կոչվում է «Վիկտորինա»՝ բաղկացած տարբեր հարցերից և երաժշտական դրվագներից:

«Երաժշտության գլուխգործոցներ» ծրագրում հավաքված են հետազոտական նյութեր երաժշտության տարբեր ուղղությունների մասին: Նյութը ընդգրկում է բարրեկոյից մինչև ժամանակակից երաժշտության ժամանակահատվածը: Բացի այդ, ծրագրում առկա են կենսագրական տվյալներ կոմպոզիտորների մասին, նկարագրություններ հայտնի ստեղծագործությունների ստեղծման պատմության մասին: Ստեղծագործությունները ուղեկցվում են մեկնաբանություններով, ձայնա և տեսադրվագներով: Ծրագիրը հագեցած է տարբեր տերմինների և երաժշտական գործիքների բառարանով, ինչը զգալիորեն նպաստում է աշխատանքին:

«Երաժշտական դաս» ծրագիրը թույլ է տալիս զբաղվել ինչպես երաժշտությամբ, այնպես էլ սոլֆեջիոյով: Այս ծրագիրը ունի ուսուցողական նպատակ: Այն հարմարեցված է տարրական դասարանների համար: Ծրագրում առկա է նաև «Երաժշտության տեսություն» բաժինը, որտեղ օգտատերը կարող է ինքնուրույն ընտրել դասը, լսել այն և կատարել վարժություններ գիտելիքի յուրացման կամ ստուգման համար: Ծրագրի թերություններից է երաժշտական նյութերի կատարման արագ տեմպը:

Ծրագիրը ներառում է նաև երաժշտական խաղերի եղանակներ, օրինակ՝ «X-O», «Երաժշտական խորանարդներ»: Խաղերի էությունը կայանում է գործիքների, նոտայի տևողության սահմանման մեջ: Այս խաղերը թույլ են տալիս գրել երաժշտական թելադրություններ խորանարդների միջոցով:

«Երաժշտական գործիքների պատմություն» բաժինը պարունակում է տեղեկություններ երաժշտական գործիքների խմբերի, նրանց տեսակների և ստեղծման պատմության մասին: Իսկ այս բաժինն լրացնում է «Էլեկտրոնա-

յին դաշնամուր» բաժինը: Այն հնարավորություն է տալիս կատարել ստեղծագործություն այնտեղ թվարկված 10 գործիքներից ցանկացածի վրա: Այսպիսի համադրությունը շատ արդյունավետ է, քանի որ տեսականին զուգահեռ իրագործվում է նաև գործնականը: Օգտատերը ոչ միայն տեսականորեն ուսումնասիրում է երաժշտական գործիքները, այլևս վիրտուալ նվագում է այդ գործիքներով:

Այսպիսով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը պրակտիկորեն տալիս է ստեղծագործական գործունեության անսահմանափակ հնարավորություններ ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների համար: Պետք է նշել նաև դրանց անօգտավետությունը ավանդական ինֆորմացիոն-բացատրական ուսուցման մեջ :

Բացի այդ պետք է նշել այն փաստը, որ նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը ուսուցողադաստիարակչական ընթացքում նախաձեռնում է զարգացման գործընթացը և տեսողական-պատկերավոր մտածողության տիպը, նաև լավ է ազդում սովորողների ստեղծագործական ընդլայնման և ինտելեկտի վրա:

Երաժշտության դասին տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նպաստում է կրթական մոտիվացիայի մեծացմանը, ձևավորում է էմոցիոնալ դրական վերաբերմունք առարկայի հանդեպ, նպաստում է պատասխանատվության մեծացմանը դասին պատրաստվելու համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաները երաժշտության ուսուցման և նրա հետ կապ ունեցող առարկաների անբաժանելի բաղադրիչ մասն են: Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները թույլ են տալիս բարձրացնել ուսուցման էֆեկտը և երաժշտագիտական կարգապահությունը: Համակարգչային տեխնոլոգիաների ընդլայնումը երաժշտության մեջ կարևոր, առաջ մղող և օբյեկտիվ նշանակություն ունի:

Անհնար է պատկերացնել ուսումը, աշխատանքը և ժամանակակից կյանքը ամբողջությամբ առանց տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաների:

Резюме-XXI век-век компьютерных технологий, которые стремительно внедряются в различные сферы деятельности, в том числе и в образовательную.

В статье говорится об актуальности применений компьютерных технологий на уроках музыки в общеобразовательных школах.

Существует множество программ для того, чтобы сделать урок музыки более интересным и продуктивным. В статье приведены различные методы использования тех или иных компьютерных программ на уроках музыки.

Summary-The XXI century is the age of computer technologies, which are rapidly being introduced into various fields of activity, including the educational ones.

The article talks about the relevance of computer technology applications for music lessons in general education schools.

There are many programs to make the music lesson more interesting and productive. The article describes various methods of using various computer programs in music lessons.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆՂԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

ՄԱՐԻԱՄ ԵՆՈՔՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսին արևմտահայ մանկավարժական մտքի ու դպրոցական գործի ականավոր ներկայացուցիչներից մեկն է հանդիսանում Հ. Հինդլեանը: Նրա մանկավարժական հայացքներն ու գաղափարներն այսօր էլ արդիական են և կարող են օգտակար լինել շատ մանկավարժների ուսումնական գործունեության ճիշտ դասավանդման հարցում: Երկար տարիներ լինելով թաղային վարժարանների տեսուչ, ինչպես նաև ուսումնական խորհրդի անդամ նա շատ լավ ծանոթ էր դպրոցների ներքին անցուղարձին, խնդիրներին: Ուսումնասիրելով դպրոցներում տիրող իրավիճակը նա առաջադրել է մի շարք մանկավարժական գաղափարներ, որոնց իրականացումը կնպաստի դպրոցի առաջավոր նպատակների իրականացմանը:

Ըստ Հինդլեանի «Ամեն անոնք որ կճանչնան մեր հանրային կրթությունը՝ պիտի խոստովանին թե այն վերքն, որմե կտառապինք ամենեն ավելի, ոչ միայն նախակրթարանին, այլ նաև ամեն աստիճանե դպրոցներուն մեջ, ավելաբանությունն է: Չափազանց բառ, ոչ բավական իր բառերուն տակ չենք տեսներ իրերը»¹: Պիտի համաձայնենք, որ Հինդլեանի դիտարկած խնդիրները այսօր էլ շատ դպրոցներում և նախակրթարաններում կա: Սակայն շատերս աչք ենք փակում համարելով դրանք մանրուքներ: Հինդլեանի կարծիքով շատ և շատ ուսուցիչներ զբաղված են միայն երեխաների հիշողությունը լցնելով. «Անդադար աշակերտներին կլեցնենք և կստիպենք ուշադիր լինել և հիշել, սակայն ազատ չենք թողնում նրանց դատողությունը և բանականությունը»:

Նա գտնում էր, որ. «Ուսուցանել, արդարև, չի նշանակեր մտքին մեջ մտցնել բառերու, պարբերություններու, վճիռներու դեզ մը, այլ միտքը բանալ իրերու միջոցավ: Մորվելու համար յուրացնել պետք է, և գաղափարներն յուրացնող ուժը դատողությունն է: Չենք կրնար գաղափարի մը տիրանալ մինչև որ չորոճանք զայն՝ վերլուծելով, բաղդատելով, ընդհանրացնելով, համդրելով: Նույնպես, իբր կրթիչ միջոց, ուսուցման այս մեթոդը միայն կարող է ազդել հոգվոյն վրա կազմել մարդը, կյանքի պատրաստել տղան, մարդու արհեստը սորվեցնող անոր»²:

Հաջորդ երևույթը որին բախվում ենք կրթարաններում դա «կրկնությունն է»: Պետք է համաձայնենք, որ կրկնությունը ուսուցանելու հոգին է, մասնավորապես նախակրթարաններում, սակայն շատ ուսուցիչների կարծիքով կրկնությունը, ունակությունները զարգացնելու լավագույն միջոցն է, և սա գործիք է դառնում շատ ու շատ ուցուցիչների ձեռքին կրթելու և ուսուցանելու գործում:

¹ «Հայ մանկավարժներ 19-20-րդ դդ.» գիրք F/ կազմեց Ա.Մ. Շավարշյան Եր. 1961, էջ 438:

² Նույն տեղում, էջ 439:

Հաջորդ կարևոր ազդակը ըստ Հինդլեանի՝ «նմանողությունն է»։ Գաղտնիք չէ, որ հատկապես տարրական դասարաններում երեխաները նմանակում են իրենց ուսուցչին, իսկ ուսուցիչը նրանց համար այդ տարիքում օրինակ է և հեղինակություն։ Ուստի ուսուցիչը չպետք է մոռանա, որ իր աշակերտների համար խորհրդատու և առաջնորդ պետք է լինի, քանի որ աշակերտը ընդօրինակում է ուսուցչին լավ կամ վատ հատկություններով, ուստի դաստիարակը պետք է վառ օրինակ հանդիսանա, պետք է փայլի իր բոլոր գործերում. «Եթե դաստիարակը ինքզինքը ուշադիր, հետաքրքիր ցուցնե, աշակերտներն էլ ուշադիր, պիտի ըլլան նմանողությամբ։ Փախանակ ըսելու՝ «դիտեցեք», ինքը կդիտե, կկեղծե դիտել, հաճույք զգալ, զարմանալ։ Աշակերտներուն մեջ գոնե մեկը պիտի գտնվի, որ տեսնե ուսուցչին այս դիրքը և նմանողությամբ ինքն ալ ուշադիր պիտի ըլլա»³։

Հինդլեանի հումանիստական մանկավարժության առանցքը երեխային ծառայելն է, նրա համար ուսումը, ուսումնադաստիարակչական գործընթացը հետաքրքիր և դյուրին դարձնելու մտահոգությունն է։ Հինդլեանը խստորեն քննադատում էր իր ժամանակի «թուրակներ» պատրաստող դպրոցը, այդ դպրոցի բովանդակությունը, նպատակը, ուսուցման սկզբունքներն ու դասավանդման մեթոդները։ Հինդլեանը կարծում էր, որ, որպեսզի ուսուցումը «կրթիչ լինի», պետք չէ, որ ուսումը նպատակ լինի, ուսումը պետք է միջոց լինի՝ հասնելու համար ավելի վսեմ նպատակի։ Հինդլեանի հումանիստական գաղափարների տեր մարդ էր և դպրոցում նրա սահմանած կանոնագիրը, ծավալած կրթական գործունեությունը, մի շարք աշխատություններում կատարած վերլուծությունները հավաստում են մեծ տեսաբանի, մանկավարժի խորագիտակ և հումանիստ լինելու մասին։

Երեխայի ազտությունը՝ որպես դաստիարակության գլխավոր պայման ընդունելը չափազանց կարևոր է. «Դպրոցի նպատակը պետք է ըլլայ տղան մեծցնել իբր ազատ մարդ, ազատ քաղաքացի, եւ վարժեցնել զայն՝ ազատութիւնը գործածելու արուեստին»⁴։ Երեխայի ազատ զարգացման համար պայմաններ ստեղծողը ուսուցիչն է, ուստի ուսուցիչը ևս պետք է լինի ազատ տարաբնույթ մեթոդներից. «Ամէն անգամ, որ մանկավարժական սկզբունք մը կիրարկել կ'ուզենք, պետք չէ, այդ սկզբունքին գերի ըլլալ, այլ անոր ոգվոյն թափանցել եւ այդ ոգին կիրարկել՝ յարմայ պատշաճեցումներով, որոնք կրնան փոփոխիլ պարագային համեմատ»⁵։ Հինդլեանը դաստիարակության մեջ կարևորում էր ընտանիքի դերը։ Դեռևս դարասկզբին հիմնավորում էր որ երեխան իր նախնական դաստիարակությունը ստանում է ընտանիքում՝ հիմնականում խաղի միջոցով, որը երեխայի կյանքում մեծ նշանակություն ունի։ Նա մեծապես կարևորում էր ընտանքի-դպրոց-հասարակություն միասնության սերտ կապը, համագործակցությունն ու համերաշխությունը։

³ Նույն տեղում, էջ 440

⁴ **Յ. Հինդլեան**, Անկեղծ էջեր (1890-1914), հ.Գ, Կ. Պոլիս, 1914, էջ 188։

⁵ **Յ. Հինդլեան**, Փունջ մանկավարժական բանախօսութեանց, Կ. Պոլիս, 1900, էջ 220։

«Դաստիարակության բոլոր աստիճաններու մեջ տիրող սկզբունքը պիտի ըլլայ յարգել տղուն ազատութիւնը, առաջնորդուիլ տղուն յատուկ բնախօսական, հոգեբանական պահանջներէն, պատշաճ սահմաններու մեջ եւ ողջամտօրէն»⁶: Հինդլեանը «Նոր դպրոց» մտցրեց «Ամսեկան պարտականութեան դրութիւնը», մի մեթոդ, որի շնորհիվ ծնողները հաղորդակից էին դառնում դպրոցի աշխատանքներին: Այդ ժամանակաշրջանում այն դպրոցը նոտանիք կապի ստեղծման լավագոյն ձևերից մեկն էր: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը համարում էր երեխայի դաստիարակության գործին նպաստող գլխավոր ազդակներից մեկը: Ծնողներից յուրաքանչյուրը իր անհատական ըմբռնումներն ունի դաստիարակության վերաբերյալ և այդ ըմբռնումներն էլ փնտրում էր դպրոցի մեջ: Ծնողները շատ անգամ սխալ պատկերացում են կազմում դպրոցի մասին հիմնվելով իրենց երեխաների սուտ կամ սխալ տեղեկությունների վրա:

Դաստիարակության խնդիրների համակարգում անվանի մանկավարժը նաև առաջնային էր համարում մտավոր կրթությունը՝ համոզված լինելով, որ առանց համապատասխան գիտելիքների չի կարող իրականացվել ոչ մի դաստիարակչական խնդիր: Մասնավորապես այն վերաբերում է գեղագիտական կրթությանն ու դաստիարակությանը: Նա քննադատում էր իր ժամանակի դպրոցները, կարծում էր, որ դրանք խոչընդոտում են երեխայի համակողմանի զարացմանը: Նա դպրոցում արգելում էր մրմնական պատիժները, քարոզում էր, որ երեխան սոսկ դաստիարակության առարկա չէ, այլ առաջին հերթին անձնավորություն է, որն ունի իր ներաշխարհը, պարտականություններն ու իրավունքները, օժտված է ինքնուրույն մտածելակերպով: Ուսուցիչը, դաստիարակելով աշակերտին, պետքեցույց տա ճիշտ ուղին և օգնի նրան, որ երեխան ձևավորի իր սեփական ես-ը, ունենա կայուն դիրքորոշումներ՝ առաջնորդելով նրան դեպի կյանքի ճշմարիտ ուղի:

Դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հինդլեանը առաջ է քաշել խնդիրներ, բերել փաստարկներ, առաջադրել լուծումներ, որոնք այսօր համակ ուշադրության արժանի են: Մեծն մանկավարժը կարևոր է համարել երկսեռ ուսուցումը՝ գտնելով, որ դրանք գործությունը ավելի բարերար է ու արդյունավետ: Կարևորելով երկու սեռի համատեղ ուսուցման անհրաժեշտությունը՝ գրում է, որ դպրոցների մեջ մանչ և աղջիկ մեծացնելու սովորությունը, իր կարծիքով, ամենաթանկագին միջոցը պետք է լինի սեռական բանավոր հրահանգման: Հինդլեանը իրեն նվիրաբերել է «հովի քմայքէն դողդողացողայդ նուրբ ծիւրերը հսկելու, խնամելու, մշակելու գործին, որպէսզի անոնց հողը լավ արմատ կապէ եւ ուժեղ մշակուած, հասուն ու գիտակից անհատներ դառնան»⁷:

⁶ Յ. Հինդլեան, Քսան եւ հինգ տարուան կեանք մը, Կ. Պոլիս, 1934, էջ 48:

⁷ Մ. Միսյան, Բարոյական դաստիարակության հիմնախնդիրը Հինդլեանի մանկավարժական համակարգում, Յովհաննէս Հինդլեան, Միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, Երևան, 2016, էջ 141

Հինդլեանի մանկավարժական հայացքներում իրենց տեղն ունեն և բազմակողանի քննարկվում են դաստիարակության և կրթության այն կարևոր հարցերը, որոնք հսկայակն նշանակություն ունեն այդ դպրոցի կյանքում՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Հայ մեծ մանկավարժը, անգամ իր կյանքի վերջին տարիներին չէր դադարում մտածել հայ մանչուկի դաստիարակության, զարգացման ինչպես նաև կրթության որակի բարձրացման հարցերի մասին: Երանի թե յուրաքանչյուրս էլ լցված լինեինք երեխայի նկատմամբ հինդլեանական սիրով:

Օգտագործած գրականության ցանկ

1. «Հայ մանկավարժներ 19-20-րդ դդ.» գիրք Բ/ կազմեց Ա.Մ. Շավարշյան Եր. 1961:
2. Յ. Հինդլեան, Անկեղծ էջեր (1890-1914), հ.Գ, Կ. Պոլիս, 1914:
3. Յ. Հինդլեան, Փունջ մանկավարժական բանախօսութեանց, Կ. Պոլիս, 1900:
4. Յ. Հինդլեան, Քսան եւ հինգ տարուան կեանք մը, Կ. Պոլիս, 1934:
5. Ս. Սիսյան, Բարոյական դաստիարակության հիմնախնդիրը Հինդլեանի մանկավարժական համակարգում, Յովհաննես Հինդլեան, Միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, Երևան, 2016:

Summary- H. Hindlean is one of the most prominent figures of Western Armenian pedagogical thought in the late 19th century and the beginning of the 20th century. His Pedagogical ideas are still modern today and can be useful for pedagogue-scholars, school work organizers, teachers and parents, as his Pedagogy is completely full of warm love toward Armenian child and his or her future. Hence today the study of his pedagogical ideas is very important. Hindlean has put forward many methods to make educational process more accessible, more understandable and more effective.

Резюме- О. Индлян из выдающихся деятелей западно-армянской педагогической мысли конца 19-ого начала 20-ого вв. Предложенные им педагогические методы, остаются актуальными, и по сей день и могут быть полезны как для педагогов, занимающихся научной деятельностью, так и для организации школьного обучения, применяться как учителями, так и родителями. Педагогика О. Индльяна наполнена любовью и заботой о будущем подрастающих поколений армянских детей. В связи с этим возрастает актуальность изучения педагогических воззрений О. Индльяна. О. Индлян выдвинул множество методик для того, чтобы сделать учебный процесс более доступным, понятным и результативным.

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ,
ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆ**

ՆԱԶԵԼԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան

Գիտական գրականության մեջ ներկայացված են կոլեկտիվին վերագրվող բազմազան սոցիալ-հոգեբանական նշաններ: Դրանցից նշենք կոլեկտիվի նշանների հարցի երկու մոտեցում: Օրինակ, Ա.Վ. Պետրովսկին դրանց թվին է դասում հետևյալները.

1. կոլեկտիվ ինքնորոշման ակտերի գերակշռումը կոնֆորմ և բացասական ռեակցիաների հանդեպ

2. արժեքային կողմնորոշումային միասնությունը, որպես կոլեկտիվի համախմբվածության ցուցանիշ

3. կոլեկտիվի ռեֆերենտայնությունը և չափանմուշային բնույթը իր անդամների համար:

Դիտարկելով կոլեկտիվում ընթացող գործընթացների յուրահատկությունը, Ա. Վ. Պետրովսկին առաջադրում է ավելի բարձր կարգի հանրության մեջ և միջխմբային փոխազդեցությունների համակարգում կոլեկտիվի դիրքի որակական առանձնահատկությունների հարցը¹: Կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական բնութագրիչներին կարելի է թվել հետևյալները.

1. Կոլեկտիվի ուղղվածությունը հանրորեն նշանակալից նպատակների ձեռքբերմանը: Այս բնութագրիչը կապված է.

- Խմբի անդամների կողմից հասարակության առաջադրած խնդիրները, ինչպես նաև իրենն ընդունելու հետ,

- ԸՆդունվելիք նպատակների սոցիալական, խմբային և անձնային նշանակալիության գիտակցման և նրանց նվաճումների սոցիալապես ուղղված մոտիվացիայի հետ:

Կոլեկտիվի նպատակաուղղվածության զարգացումը միշտ չէ, որ լինում է ինքնաբերական, ուստի տրված նշանի ձևավորումը պահանջում է հատուկ դաստիարակչական աշխատանք, որը կառուցված է սոցիալ-հոգեբանական գիտության տվյալների հաշվառման վրա: Թեև տվյալ նշանը կանխորոշում է կոլեկտիվի մյուս սոցիալ-հոգեբանական բնութագրիչների զարգացումը, խորհրդային սոցիալական հոգեբանության մեջ խմբային նպատակների ինտերիորիզացման և սոցիալապես ուղղված մոտիվացիայի ձևավորման մեխանիզմները դեռևս լրիվ ուսումնասիրված չեն:

2. Կոլեկտիվի ստական-փոխհարաբերությունների տիրապետումը շփման գործարար և անձնային ոլորտներում: Ա.Ս. Մակարենկոն նշել է, որ «այնտեղ, ուր կա կոլեկտիվի կազմակերպում, ընկերների միջև վերաբերմունքի հարցը բարեկամության հարց չէ, այլ՝ պատասխանատու կախվածության»: Գործարար կոլեկտիվի հարաբերությունները դիտարկվում էին, որպես կոլեկտիվաստեղծ նշան և համեմատականորեն ուսումնասիրվում էին արտադրա-

կան և ուսումնական խմբերի հարաբերությունների ընդհանուր կառուցվածքում:

3. Կոլեկտիվիստական ինքնակազմակերպվածությունը խմբի ունակությունն է՝ ինքնուրույն ընդունել և իրագործել խմբային նպատակներին հասնելու համար լավագույն որոշումներ՝ արտաքին ղեկավարության պակասի դեպքում:

4. Կոլեկտիվի համախմբվածությունը, որը լայն առումով ընկալվում է , որպես նրա անդամների գաղափարաքաղաքական, բարոյական, մտավոր և կամային միասնություն, զարգանում է կազմակերպական միասնության վրա¹:

Համախմբվածությունը մանկավարժական կոլեկտիվի ինտեգրալ սոցիալ-հոգեբանական բնութագիրն է: Երիտասարդ, անփորձ մանկավարժը միաձույլ, վարպետ առաջնորդ ունեցող կոլեկտիվում կարող է անել ավելին, քան փորձառու ուսուցիչը, որի փորձն ու մեթոդները չեն ընդունվում մանկավարժական կոլեկտիվում: Կոլեկտիվի համախմբվածությունը դրսևորվում է ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածության, արժեքային-կողմնորոշումային միասնության, համատեղ գործունեության հաջողությունների և ձախողումների դեպքում պատասխանատվությունը համարժեք բաժանելու մեջ¹: Ակնհայտ է, որ ցանկացած համատեղ գործունեության հաջողությունը կախված է նրա մասնակիցների գործողությունների փոխհամաձայնեցումից: Այն կարող է ձեռք բերվել միայն, երբ ընդհանուր նպատակ ունեցող գործունեության մասնակիցները պատկերացնում են մեկը մյուսի ընդունակությունները, ձգտումներն ու պարտականությունները և գտնում են, որ գործընկերը կգործի իրենց սպասումներին համապատասխան:

Մանկավարժական կոլեկտիվի համախմբվածության առաջին բնութագիրը ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցումն է, այսինքն՝ այն պատկերացումների, թե կոլեկտիվի անդամներից յուրաքանչյուրը հատկապես ինչ հետևողականությամբ պետք է կատարի բոլորի համար ընդհանուր նպատակն իրագործելիս: Օրինակ՝ կենսաբանության ուսուցիչը, բախվելով աշակերտներից մեկի մշտական վատ առաջադիմությանը և նրա հետ անցկացնելով լրացուցիչ պարապմունքներ, միաժամանակ սպասում է, որ այդ մասին դասդեպ իմանալով կլինի տղայի տանը, կպարզի, թե ինչ պայմաններում է նա ապրում, ինչն է նրան խանգարում կատարել տնային հանձնարարությունները, ինչպես են նրա ծնողները վերաբերվում նրա «երկուսներին» և այլն: Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցման դեպքում դասդեպ անհրաժեշտ կհամարի վարվել իր գործընկերոջ սպասումներին համապատասխան: Միաժամանակ վերոհիշյալ համաձայնեցման բացակայությունը կարող է դառնալ կոնֆլիկտների աղբյուր, համախմբվածության քայքայման և կոլեկտիվում անհամատեղելիության առաջացման պատճառ:

Ֆունկցիոնալ-դերային սպասումները կարելի է համաձայնեցնել, եթե համատեղ գործունեությունը ձևավորված է, և կոլեկտիվի ներսում առկա է պարտականությունների հստակ բաշխում: Վերջինս էական է և գործի շահերի, և

դպրոցում բարենպաստ մթնոլորտի ապահովման համար: Այն հանգամանքը, որ նույն դասարանում տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչները աշխատում են իրար կողքի, բայց ոչ միասին, ստեղծում է կոլեկտիվաստեղծ գործընթացը արգելակող սոցիալ-հոգեբանական իրավիճակ: Մանկավարժը պետք է գիտակցի դա, ինչպես և մանկավարժական կոլեկտիվում կոլեկտիվաստեղծ ուղիների ամրապնդումը:

Մանկավարժական կոլեկտիվի համախմբվածության մյուս կարևոր բնութագրիչը դպրոցի աշխատողների դիրքորոշումների և արժեքային կողմնորոշումների միասնությունն է: Նման միասնության կոլեկտիվը հասնում է համատեղ ակտիվ գործունեության արդյունքում: Արժեքակողմնորոշումային միասնությունը գնահատականների և դիրքորոշումների մերձեցումն է կոլեկտիվի կյանքի նշանակալից հարցերում՝ բարոյական և գործնական ոլորտում գործունեության նպատակների ու խնդիրների մոտեցման մեջ: Եթե, օրինակ, ուսուցիչների մի մասը և տնօրենը գտնում են, որ սովորողների մասնագիտական կողմնորոշման համար տվյալ վայրում կարելի է ստեղծել ուսումնաարտադրական բազա, իսկ ուսուցիչների մյուս մասը և փոխտնօրենը դա համարում են անհնար և առաջարկում են կենսամիջոցներ, ապա մանկավարժական կոլեկտիվը զուրկ է համախմբվածությունից, որպես նրա արժեքային կողմնորոշումային միասնություն: Խմբային համախմբվածությունը խմբի հատկությունն է, որը նրա անդամներին կապում է միասին և խթանում է խմբի անդամների միջև համակրանքի ստեղծմանը¹: Կոլեկտիվի համախմբվածության մասին կարելի է դատել նրանում կոլեկտիվիստական նույնականացման դրսևորումներից, որը ենթադրում է ուսուցչի վերաբերմունքն իր գործընկերների հանդեպ՝ ինչպես ինքն իրեն և ինքն իր հանդեպ՝ ինչպես մյուսներին²:

Այն վարքը, որի դեպքում նույն կամ նման իրավիճակում մարդն ինքն իր կամ մյուսների հանդեպ կիրառում է տարբեր նորմեր, վկայում է կոլեկտիվիստական նույնականացման բացակայության մասին, աշխատանքային կոլեկտիվի անդամների վարքում անթույլատրելի «երկակի բարոյականության» առկայության մասին: Կոլեկտիվիստական նույնականացումը ընկած է ուսուցչական միջավայրում մարդասիրական հարաբերությունների փոխօգնության, ընկերական համերաշխության հիմքում: Այն առկա է և՛ մասնագիտական գործունեության մեջ (հիվանդ ուսուցչի փոխարինում, տարբեր միջոցառումների ժամանակ կամավոր օգնություն և այլն), և՛ առօրյա կյանքում՝ դպրոցի պատերից դուրս: Մանկավարժական կոլեկտիվի միասնության մասին վկայում է ուսուցիչների կողմից համատեղ գործունեության հաջողությունների կամ ձախողումների համար պատասխանատվության համարժեք բաշխումը իրենց կամ գործընկերների վրա: Եթե մի քանի մանկավարժներ մասնակցել են միջոցառման կազմակերպմանը, ապա սովորաբար դժվար է ճշգրիտ սահմանել նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բաժինը: Մինչդեռ հաջողության և հատկապես անհաջողության դեպքում դպրոցի ղեկա-

վարությունը կարիք է զգում կատարվածի արդյունքի համար ի հայտ բերել պատասխանատվություններին: Հենց այդ դեպքում է հստակ արտահայտվում իսկական կոլեկտիվիզմը, մանկավարժների համախմբվածությունը: Եթե ուսուցիչը հաջողությունները վերագրում է իրեն, իսկ անհաջողության դեպքում մեղավորներ է փնտրում իր գործընկերների մեջ, և այս միտումը տիպիկ է տվյալ մանկավարժական կոլեկտիվի համար, դա վկայում է նրա զարգացման ցածր մակարդակի, նրանում համախմբվածության, որպես կոլեկտիվիստական նույնականացման բացակայության մասին: Միաձույլ կոլեկտիվն իր սահմաններում տարածում է համատեղ գործունեության հաջողությունների համար պատասխանատվության համարժեք բաշխում: Կոլեկտիվի բարոյական ուժը պայմաններ է ստեղծում սոցիալական արդարության սկզբունքների հիման վրա նրա անդամների համախմբման համար չխուսափել պատասխանատվությունից, եթե մեղավոր ես, հաջողությունը չվերագրել միայն ինքդ քեզ, չնվազեցնել դրանում ընկերներիդ բաժինը, չարդարանալ «օրլեկտիվ հանգամանքներով»: Մանկավարժական կոլեկտիվի ղեկավարման գործընթացում հաճախ առաջանում են կոնֆլիկտային իրավիճակներ: Կոնֆլիկտները հանգեցնում են կոլեկտիվի սոցիալական մթնոլորտի վատթարացմանը, աշխատանքի արտադրողականության անկմանը, կոլեկտիվի պառակտմանը: Բայց և այնպես կոնֆլիկտները մարդկային հարաբերությունների անբաժանելի մասն են կազմում՝ նպաստելով անհատի զարգացմանը, պատասխանատվության և ինքնագնահատականի մակարդակի բարձրացմանը¹: Գոյություն ունի կոնֆլիկտի չորս հիմնական տիպ՝ ներանձնային, միջանձնային, կոնֆլիկտ անձի և խմբի միջև, միջխմբային: Մենք առավել կմանրամասնենք մանկավարժական կոլեկտիվում ծագող միջանձնային կոնֆլիկտները: Դրանք կոնֆլիկտների մյուս տիպերի համեմատ քիչ են ուսումնասիրված: Պատճառն այն է, որ միջանձնային կոնֆլիկտները ավելի բարդ են ու բազմազան ուսուցիչների, քան թե աշակերտների միջև: Միջանձնային կոնֆլիկտների առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են հոգեբանական գործոններով՝ անձի առանձնահատկությունների, շահերի, հետաքրքրությունների, համոզմունքների, դիրքորոշումների, ցանկությունների տարբերություններով: Կոլեկտիվի անդամների միջև կոնֆլիկտայնության պատճառը հիմնականում մասնագիտական մրցակցությունն է, վարքագիծը, իսկ մանկավարժական կոլեկտիվում կոնֆլիկտի պատճառ կարող է լինել տնօրենի պաշտոնական լիազորությունների մեջ կողմնակալ վերաբերմունքը¹:

Կոլեկտիվում մարդիկ ունեն բնավորության տարբեր, անհատական գծեր, ինչի հետևանքով էլ ստիպված ենք լինում բախվել այսպես կոչված կոնֆլիկտային անհատների հետ: Այդպիսի մարդկանց վարքի յուրահատկության իմացությունը կոլեկտիվում, դրանց ճիշտ ժամանակին հայտնաբերումը ծառայում է, որպես կոնֆլիկտային իրավիճակների առաջացման պատճառների նախազգուշացման և դեստրուկտիվ կոնֆլիկտների կանխար-

գելման միջոցների իրականացման մաս: Կոմֆլիկտի հիմքը միշտ հանդիսանում է սուբյեկտների շահերի միջև առկա հակասությունը: Այդ իսկ պատճառով կոմֆլիկտի լուծման առավել լավ և արդյունավետ եղանակ է հանդիսանում այդպիսի հակասությունների միջև չեզոքացումը: Բայց առավել կարևոր և արդյունավետ է անցանկալի կոմֆլիկտի նախագգուշացումը, քան թե դրա դադարեցումը կամ վերացումը:

Աշխատանքային կոլեկտիվում մարդկանց համատեղ գործունեությունն իրագործվում է հաղորդակցման միջոցով, որն ունի ընդհանուր նպատակ՝ կոլեկտիվի անդամներին կողմնորոշել ընդհանուր վերջնական արդյունքի հասնելուն: Դրա հետ կապված համատեղ գործունեությունը ենթադրում է ընդհանուր առաջադրանքի բաժանում: Հաղորդակցման հաջորդ գործառույթը դա մարդկանց կողմից մեկը մյուսին ճանաչելն է: Համատեղ գործունեության պրոցեսում մարդկանց միջև ծագող տարբեր տիպի շփումների և փոխազդեցությունների ընթացքում ձևավորվում է կարծիք մեկը մյուսի նկատմամբ: Եվ իսկապես, այլ մարդու հետ հաղորդակցման մեջ մտնելու համար անհրաժեշտ է պատկերացնել, թե ինչ կարելի է սպասել նրանից, ինչպես նա կարձագանքի քո կողմից կատարվող արարքներին:

Աշխատանքային կոլեկտիվի կյանքի գործունեության կարևոր կողմը հանդիսանում է միջանձնային հարաբերությունների ձևավորումը և զարգացումը, որը բխում է նախորդ երկու գործառույթներից: Այդ հարաբերությունները գոյություն ունեն երկու հիմնական ձևով՝ ինչպես գործնական հարաբերություններ և ինչպես անձնական (համակրանք-հակակրանք): Բայց այդ երկու հարաբերության ձևերը չպետք է դիտարկել որպես իրարից անկախ փոխհարաբերություններ, քանի որ դրանք փոխկապակցված են և միմյանց վրա ուժեղ ազդեցություն են գործում: Շփումը հանդիսանում է անձի գլխավոր պահանջմունքը: Կյանքի գործունեության բոլոր ժամանակակից ձևերն ունեն կոլեկտիվ բնույթ: Մարդը չի կարող իր գոյությունը պահպանել այլ մարդկանց հետ հաղորդակցման մեջ չմտնելով: Կոլեկտիվի անդամների անհաջող փոխհարաբերությունների հիմքում ընկած են միմյանց հասկանալու անկարողությունը, համատեղ որոշումներ իրականացնելու հմտությունների բացակայությունը, որը փոխհարաբերությունը դարձնում է երկարաժամկետ, դժվար և նաև հիվանդագին: Կոլեկտիվում հազվադեպ չեն հանդիպում այդպիսի «դժվար շփման իրավիճակներ»: Երբեմն դրանք ունենում են սուր կոմֆլիկտների ձևավորում, երբ մարդիկ անգամ չեն կարողանում հասնել ոչ միայն համատեղ որոշման, այլ նաև հասարակ փոխադարձ հասկացման: Հազվադեպ չեն նաև այն փոխհարաբերությունների խանգարումները, երբ արտաքինից ամեն ինչ երևում է համեմատաբար բարենպաստ, բայց շփման մասնակիցներին ինչ-որ բան առանձնացնում է: Նրանց խանգարում է վստահության բացակայությունը միմյանց նկատմամբ, փոխադարձ անբարյացակամությունը: Ամեն դեպքում առկա դժվարությունները արտահայտվում են նաև համատեղ գործունեության արդյունավետության և կոլեկտի-

վում առկա հարաբերությունների վրա: Աշխատանքային կոլեկտիվում ձևավորված հոգեբանական մթնոլորտը ազդեցություն է թողնում նրանում առկա կոնֆլիկտայնության ֆոնային մակարդակի վրա, այն բանի վրա, թե ինչպես են մարդիկ ապրում լարված սթրեսային իրավիճակները:¹ Մարդուն շփման մեջ «դժվար» դարձնող պատճառներն ընդունված է բաժանել իրավիճակային և անձնային: Իրավիճակային պատճառները, երբ արտաքին իրավիճակներից մարդը կոնֆլիկտային արձագանք է ցուցաբերում և ընկալում է այդ իրավիճակները սրացված ձևով: Դա մարդու հոգեկան վիճակն է, որը ժամանակավոր է՝ հոգնածություն, լարվածություն, դժգոհություն իրենից և շրջապատից, անարդարության զգացում և այլն: Հենց այդպիսի գործոնների ազդեցությամբ, սովորաբար համբերատար մարդը սուր լարված վիճակում դառնում է բռնկվող, կտրուկ, մարդկանց հետ հարաբերությունների սրացման ընդունակ: Մարդու վարքի հենց այդպիսի դրսևորումներն էլ ընդունված է անվանել իրավիճակային, քանի որ դրանք պատահական են և բնութագրական չեն նրա համար: Անձնային պատճառներն առավել հանդիպող են: Դրանք ծագում են, երբ մարդն ունի կոնֆլիկտային արձագանքի կայուն հակում, որն էլ կարող է բերել միջանձնային հարաբերություններում կարծիքների տարամիտման, միջանձնային սրացումների և բախումների առաջացման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Петровский А. В. – “О социально-психологической концепции групповой активности” Вопросы психологии, 1973г
2. Крутов В. Ф., Учаева Е.Г., – “Социальная психология”, 1979г.
3. Аронсон Э., Уилсон Т., Эйкерт Р., – “Социальная психология” Психологические законы поведения человека в социуме, 2004г
4. Петровский А. В., Абраменкова В.В., Зеленова М.Е., – “Социальная психология”, 1987г
5. “Конфликтология” под ред. А. Кармина, Москва, 1999г
6. “Конфликтология” под ред. В. Ратникова, Москва, 2012г
7. Ворожейкин И.Е., Кибанов А.Я., Захаров Д.К., – “Конфликтология”, 2002г

Резюме–В данной статье теоретическому анализу подвержена сплоченность педагогического коллектива, как интеграл его социально-психологической характеристики, которая во всех аспектах своего проявления имеет важное значение. Эффективность любой совместной деятельности зависит от взаимосогласованности действий его участников. Этого можно достичь в том случае, если имеющие общую цель участники деятельности имеют представление о способностях, стремлениях и обязанностях своего коллеги и считают, что партнер будет действовать соответственно их ожиданиям.

Summary–Thus, the consolidation of the pedagogical collective, as an integral socio-psychological reference of that very collective, alongside with all the sides of

its manifestation has a big importance. Any efficiency of the activity depends on the coordinated actions of its participants. It can only be obtained, when the participants of an activity, who has a general aim, imagine and see each other's abilities, aspirations and responsibilities and think, that the coworker will act according to their expectations.

**ՇԱԽՄԱՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԿՐՏՄԵՐ
ԴՊՐՈՑԱԿԱՆԻ (II ԴԱՍԱՐԱՆ) ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ**

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

**«Շախմատն ըստ ձևի խաղ է, բովանդակությամբ՝ արվեստ, իսկ խաղին
տիրապետելու դժվարությամբ՝ գիտություն»:
Տիգրան Պետրոսյան**

Կարևորելով շախմատը որպես անձի իմացական ոլորտի զարգացման, մտածողության ճկունության, հիմնականների և կարողությունների ձևավորման օղակ [1,2], որն ընկած է անձի զարգացման հիմքում, հիմնական դպրոցներում պարտադիր ուսումնական առարկաների շարքում վերջին տարիներին ընդգրկվել է նաև այն: Շախմատը նպաստում է ստեղծագործական մտքի զարգացմանը, անձին օժտում է համառությամբ, ճկուն մտքով, կայուն հետաքրքրություններով: Այն իր մեջ ներառում է արվեստի գիտության և սպորտի տարրեր: Ըստ այդմ էլ՝ այն կարող է դառնալ երեխայի բազմակողմանի զարգացման աղբյուրներից մեկը: Այն տարբերվում է մյուս ուսումնական առարկաներից նրանով, որ համարվում է նաև միջազգային սպորտաձև: Հայաստանն առաջին երկիրն է, որ շախմատն ընդգրկել է կրթական համակարգ և Հայաստանի փորձն ու աշխատանքը հետաքրքրել է ամբողջ աշխարհին:

2011-ին, երբ շախմատը ընդգրկվեց Հայաստանի կրթական համակարգում, ծրագրի շուրջ սկսեցին իրականացվել հսկայածավալ աշխատանքներ, այդ թվում՝ կազմվել են հոգեբանների եւ սոցիոլոգների խմբեր, որոնք անցկացնում են գիտական հետազոտություններ մի քանի փուլերով՝ պարզելու շախմատի դասավանդման արդյունավետությունը, շախմատ առարկայի ազդեցությունը երեխաների տրամաբանության, ստեղծագործական մտածողության, ինտելեկտի և այլ հատկանիշների զարգացման վրա [3]:

Հետազոտության վերլուծություն

Ծանոթանալով մի շարք հետազոտությունների, որոնց կիզակետում գտնվում է շախմատը իր բոլոր յուրահատկություններով, մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք՝ ուղղված կրտսեր դպրոցականների վերաբերմունքի բացահայտմանը «Շախմատ» ուսումնական առարկայի հանդեպ: Հետազոտական աշխատանքը իրականացվել է ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների շրջանում: Հետազոտության գործիքակազմը իր մեջ ներառում է մեր կողմից մշակված հարցաթերթիկը: Հարցաթերթիկը միտված է բացահայտելու հետևյալ առանձնահատկությունները՝

ՀՈԿՍԵԹՅԱՆ ՍԿԵՏԱՆԱԾ

ՇԱԽՄԱՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆՂԵՊ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ (II
ԴԱՍԱՐԱՆ) ԿԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

շախմատ առարկայի հանդեպ:


- Պարզել շախմատի կապը կյանքի, այլ առարկաների, առօրյայի հետ:

- Վերլուծել փորձարարական հետազոտության արդյունքները, որոնք ստացվել են հարցաթերթիկի կիրառման շնորհիվ:

Ըստ շախմատ ուսումնական առարկայի հանդեպ ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցի II դասարանի աշակերտների վերաբերմունքի բացահայտման հետազոտության արդյունքների վերլուծության՝ հետազոտվողների 21%-ը շախմատ առարկան համարել է ամենահետաքրքրականը: Առաջատար դիրքը մաթեմատիկային է՝ 42%, նրան զիջում է ֆիզկուլտուրան՝ 28% և 7,1%-ը բաժին է ընկնում մայրենիին(տես դիագրամ 1):

Հենվելով հետազոտության տվյալների վրա՝ կարելի է եզրակացնել, որ երեխաների 75 %-ը ունեն ընդգծված դրական վերաբերմունք շախմատ ուսումնական առարկայի հանդեպ, նույն տոկոսի մոտ շախմատ ուսումնական առարկան կապվեց կյանքի, առօրյայի հետ:

Բացահայտվեց մեկ օրինաչափություն ևս, աշակերտները, հետազոտվողները, ովքեր նշել են շախմատ ուսումնական առարկան իրենց հետաքրքրական առարկաների ցանկում, նշել են նաև մաթեմատիկան: Հետևաբար եզրակացնում ենք, որ շախմատ- մաթեմատիկա կապը առկա է:



■ Մաթեմատիկա ■ Մայրենի ■ Շախմատ ■ Ֆիզկուլտուրա

Դիագրամ 1

Резюме-Статья касается раскрытия отношения младшего школьника к учебному предмету “шахматы”.

Summary-The article apply to discover of junior schoolss’ treatment towards the educational subject of “chess”.

Օգտագործված գրականության ցանկ

1. Շախմատի կրթական հետազոտություններ: Ուսումնամեթոդական ձեռնարկ շախմատի ուսուցիչների համար: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն/Երևան, Լուսաբաց 2015, էջ 98:

2. II դասարանի շախմատ առարկայի չափորոշիչ-<http://www.chessa-ca-de-my.am/res/news/2014/Criterion.pdf>

3. <https://sport.news.am/arm/news/48139>

Ա. ՍԱԹՅԱՆԻ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱԼՔՈՍ»-Ը ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խ. Արքայանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Արդի հայ երաժշտության նշանավոր ներկայացուցիչներից է կոմպոզիտոր Արամ Սաթյանը՝ Սաթյանների կոմպոզիտորական գերդաստանի ներկայացուցիչը, որի հիմնադիրներն են եղբայրներ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աշոտ Սաթյանը և Արամ Սաթունցը, նրանց որդիներն ու թոռները՝ թվով յոթ կոմպոզիտոր:

Կոմպոզիտորն իր երաժշտա-հասարակական և մանկավարժական գործունեությամբ մշտապես փորձել է բազմաբովանդակ դարձնել հանրապետության երաժշտական կյանքը:

Սաթյանը հեղինակ է հայկական առաջին փոփ օպերաների՝ «Լիլիթը» (1991թ.) և «Փոքրիկ Ցախեսը» (2011 թ.), որոնցում անդրադառնում է ստեղծագործող անհատի և հասարակության փոխհարաբերության բարդ հարցին:

«Լիլիթ» օպերայի (երկու գործողությամբ) հիմքում՝ Ավ.Իսահակյանի «Լիլիթ» լեգենդն է: Կոմպոզիտորի խորին համոզմամբ՝ «Մերը և գեղեցիկը պետք է հաղթեն»[1, էջ 8]: Մյուս՝ «Փոքրիկ Ցախեսը» փոփ-օպերայի հիմքում էռնեստ Թեոդոր Ամադեուս Հոֆմանի համանուն հեքիաթն է: Պատմում է գաճաճ, անբան Ցախեսի մասին, որը, սակայն, դիցանուշի կախարդանքով դառնում է հասարակության սիրելին: Սաթյանը Ցախեսին նմանեցնում է Քաջ Նազարին»[2, էջ 11]:

Ա. Սաթյանը հեղինակ է 300-ից ավելի երգերի և ռոմանսների, կինոյի և թատրոնի համար երաժշտության: Ստեղծագործական գործունեության ընթացքում հրատարակվել են կոմպոզիտորի վոկալ, խմբերգային, գործիքային և այլ երկեր:

Այսպիսով, Արամ Սաթյանը հանդիսանում է արդի հայ կոմպոզիտորական դպրոցի այն ներկայացուցիչը, ով ժամանակակից հայ դասական երաժշտությունը ներկայացնում է աշխարհի երկրներում և դրանով մեծապես նպաստում հայ երաժշտության, ինչպես նաև մեր ստեղծագործ ժողովրդի հեղինակությանը և ճանաչմանը:

Սաթյանը հեղինակել է դաշնամուրային ստեղծագործություններ, այդ թվում նաև մանուկների համար, որոնք ամփոփված են «Մենք դաշնամուր ենք նվագում» խորագրով «Մանկական ալբոմում»՝ նվիրված իր թոռնիկին (ժողովածուն հրատարակվել է երկու անգամ 2007 և 2014 թթ.):

Մանուկների համար գրված երկերում կոմպոզիտորը կարևորում է երեխայի տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրությունները, կյանքից ստացած տպավորությունները:

Ալբոմը ստեղծված է պարզից դեպի բարդին գնալու սկզբունքով: Ժողովածուի մանրանվագներում կիրառված են XX դարի երաժշտությանը բնորոշ ստեղծագործական գրելառճի առանձնահատկություններ: Այս

ժողովածուում ներառված մանրանվագները, թեպետ, ստեղծված են դաշնամուրի նվագի տիրապետման նպատակով, սակայն կարող են օգտակար լինել նաև հանրակրթական դպրոցի «Երաժշտության» դասին՝ երգեցողության, նոտագրության և ունկնդրման համար:

«Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուն ներառում է 71 ծրագրային մանրանվագ, որոնցից յուրաքանչյուրն ունի երեխայի կատարողական հմտությունների յուրացման որոշակի առանձնահատկություն. էտյուդներ՝ նախատեսված կատարողական և տեխնիկական դժվարությունների հաղթահարմանը, պոլիֆոնիկ երկեր՝ ուղղված պոլիֆոնիկ կերտվածքի յուրացմանը, իսկ մնացածը՝ տարբեր բնույթի և ոճի ծրագրային մանրանվագներ [3, էջ 2]:

Ժողովածուի առաջին բաժնում տեղ են գտել փոքր կտավի այնպիսի երկեր, որոնց անվանումներն ինքնին երեխային ուղեկցում են դեպի կոմպոզիտորի ստեղծած երաժշտական աշխարհ: Դրանցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ երաժշտական իմաստ և միտված է երեխայի կատարողական հմտությունների զարգացմանը, օրինակ «Արևիկ», «Արջուկ», «Կկու» և այլն:

Հանրակրթական դպրոցի երաժշտության դասին երեխաների համար ավելի հասկանալի կլինեն դիսկո և ջազային ստեղծագործությունները, ինչպես նաև վաղ կերպարային մանրանվագները, ինչպես խաղալիքները և մանկական խաղերը-«Կոստան-նստան», «Գնդակով խաղը», «Ուրախ գնացք», «Ցատկապարան», «Պարող տիկնիկը», «Հոլ», «Ցատկել-թռչել» մանրանվագները:

Երաժշտության դասավանդումը բոլոր ժամանակներում առանձնահատուկ կարևոր դեր է ունեցել հայկական կրթահամակարգում, ազգի դաստիարակության գործում: Հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկան երեխաներին ներգրավում է երաժշտական հնչյունների կախարդական «աշխարհը», որտեղ երեխան երգում, պարում, երաժշտություն է ունկնդրում, ստեղծագործում և ստանում գեղագիտական հաճույք [4, էջ 215]:

Արամ Սաթյանի «Մանկական ալբոմում» ներկայացված են տարբեր տարիքի երեխաների կատարմանը և յուրացմանը համապատասխանող մանրանվագներ, որոնք կարելի է օգտագործել որոշակի երաժշտական թեմայի շրջանակներում՝ իրականացնելով երաժշտական մանկավարժության առջև ծառացած նպատակները:

«Երաժշտության» դասին աշակերտներն սկսած առաջին դասարանից **երաժշտություն են ունկնդրում**: Սա կարևորագույն գործընթացներից մեկն է, որի միջոցով երեխաները հաղորդակցվում են երաժշտության կախարդական աշխարհի գանձարանին: Դասին ունկնդրվող նյութի շնորհիվ աշակերտները տարբերակում են երգը, պարը, քայլերգը: Այս մատչելի և պարզագույն ժանրերը երեխային հնարավորություն են տալիս ընդլայնել երաժշտության մասին իր գիտելիքներն ու պատկերացումները [5, էջ17]: Այսպես. **երկրորդ դասարանի «Երաժշտության երեք տեսակները» թեմայում** [6, էջ 9] առաջարկում ենք ծրագրում ընդգրկել. «Արջուկ», «Օրորոցային», «Երգ» մանրանվագները («Երգ» ենթաթեմա), «Պարող տիկնիկը», «Հոլ», «Լարախաղաց»,

«Ժողովրդական», «Ցատկապարան», «Փերիների պարը», «Մելամաղձոտ վալս», «Վալս» («Պար» ենթաթեմա), «Թզուկների քայլերգը», «Փոքրիկ զինվորը» «Քայլերգ» մանրանվագները («Քայլերգ» ենթաթեմա):

«Ինչի մասին է պատմում երաժշտությունը» թեմայում ուսուցիչը ներկայացնում է «Աստիճան», «Առվակ», «Ամառ», «Առաջին քայլեր», «Տարօրինակ տատիկը», «Կորել է տիկնիկը», «Նեղացրել են», «Չինական լապտերներ», «Քաղցր քուն», «Աշուն», «Կկու», «Փայտփորիկը», մանրանվագները:

«Երաժշտությունն արտահայտում է բնավորության գծեր» թեմայում առաջարկվող մանրանվագներն են՝ «Տխուր տրամադրություն», «Ուրախ գնացք», «Տխուր հեքիաթ», «Դժվար խնդիր», «Մտորում», «Հումորեսկ», «Երկու կարծիք»:

Չորրորդ դասարան. «Իմ ժողովրդի երաժշտությունը» թեմայի շրջանակներում՝ «Շարական», «Ժողովրդական», «Օրհներգ» մանրանվագները:

Հինգերորդ դասարան. «Երաժշտությունը և գրականությունը» թեմայում՝ «Կկու» (Հովհ. Թումանյանի «Չարի վերջը»), «Քաղցր քուն» (Ա. Պուշկինի «Քնած գեղեցկուհին»), «Վախկոտը» (Դ. Դեմիժյանի «Քաջ Նազարը»), «Թզուկների քայլերգը» (Հ.Ք. Անդերսեն «Մպիտակաձյունիկը և յոթ թզուկները»):

Յոթերորդ դասարան. «Դասական և հանրամատչելի երաժշտություն», **թեմայի** շրջանակներում՝ «Ժողովրդական», «Օրհներգ», «Օստինատո», «Ինվենցիա», «Թեմա և ինվենցիա», «Ֆուգետա», «Սոնատինա», «Պրելյուդ», «Բարկարոլա», «Վեց բազատել», «Նվիրում Բրուքսկին», «Մայրուղի» մանրանվագները:

Մանկավարժական գործունեության ընթացքում երաժշտության ուսուցիչը և հոգեբանը համատեղ կազմում են լրացուցիչ պարապմունքների ծրագիր յուրահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների համար (նմանատիպ ծրագիր կազմվել է և իրագործվել մանկավարժական պրակտիկայի ընթացքում): Ծրագիրը ներառում է մանկավարժական մեթոդներ, որոնց օգնությամբ ավելի դյուրին է դառնում երաժշտության դասի ընթացքը: Այսպես. դասը սկսվում է երաժշտաօժանկան շարժումով, որին երեխաները մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում: Այնուհետև, նրանք թղթից կենդանիներ են պատրաստում կամ նկարում բնության պատկերներ այն երգի թեմայի վերաբերյալ, որը նրանց ուսուցանվել է: Աշխատանքը կատարելուց հետո փորձում են վերնագրել իրենց աշխատանքը: Ներառական կրթությամբ աշակերտների հետ պարապմունքների ընթացքում մենք կիրառեցինք նաև Արամ Սաթյանի «Մանկական ալբոմ»-ի մանրանվագները: Մանրանվագները հարմար են նաև խաղերի համար: Օրինակ, կարելի է անցկացնել «Գուշակիր մեղեդին» խաղը, որի շրջանակներում ընտրվում են այնպիսի մանրանվագներ, որոնք հնարավորինս մոտ կլինեն աշակերտների երևակայությանը. դրանցից են «Արջուկը», «Կկուն», «Փայտփորիկը», «Փոքրիկ զինվորը» և այլն: Կիրառված արտահայտչամիջոցները այնքան պարզ են և հասկանալի, որ երեխաներն իսկույն հասկանում են մանրանվագի բովանդակությունը:

Հայտնի է, որ ներառական կրթությամբ երեխաները դժվարությամբ են ներգրավվում դասին, առաջարկված մեթոդներն ուսուցչին կօգնեն «Երաժշտության» դասն ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնել:

Մեր առաջարկությունները նպատակ չեն հետապնդում ծրագրային նյութը փոխարինել Ա. Սաթյանի մանրանվագներով, սակայն առաջարկված մանրանվագները տարբեր թեմաների ուսուցման ժամանակ ուսուցչին ազատ ընտրության հնարավորություն են տալիս:

Արամ Սաթյանին և նրա «Մենք դաշնամուր ենք նվագում» խորագրով «Մանկական ալբոմին» նվիրված կարելի է կազմակերպել արտադասարանական միջոցառում: Միջոցառմանը պետք է մասնակցեն տարբեր դասարանների աշակերտներ:

-դրանք աշակերտներ են, ովքեր հաճախում են երաժշտական դպրոց, ովքեր դաշնամուրով կատարում են որոշ մանրանվագներ;

-երաժշտության դասին որոշ մանրանվագների հիման վրա ստեղծված երգերի կատարմամբ հանդես են գալիս տարբեր դասարանի աշակերտներ:

Միջոցառմանը ներկայացվում է Ա. Սաթյանի ստեղծագործական ուղին, կազմակերպվում է որոշ երգերի և գործիքային ստեղծագործությունների ունկնդրում. ունկնդրության համար կարելի է առաջարկել Բալլադը՝ գալարափողի և նվագախմբի համար, երգերից՝ «Իմ քաղաքը», «Հուստ Ադոքքը», «Ave Maria» հատվածը «Լիլիթ» փոփ-օպերայից: Միջոցառման ընթացքում աշակերտները ցուցադրում են նախապես բեմադրված պար՝ Ա. Սաթյանի «Ժողովրդական» մանրանվագի երաժշտությամբ: Պարին մասնակցում են տարբեր դասարանների աշակերտներ: Պարը սկսվում է տղաների քայլով, այնուհետև հեղաձկուն շարժումներով մուտք են գործում աղջիկները: Պարին հաջորդում է ներկայացումը՝ «Մանկական խաղահրապարակում» մանրանվագի հիման վրա, որին մասնակցում են նաև ներառական կրթությամբ աշակերտները: Մանրանվագի ձայնակարգաելնեջային և չափակշռության առանձնահատկությունները ստեղծում են մանկական խաղահրապարակի խառնաշփոթ տեսարանը. աշակերտների խնդիրն է՝ ներկայացնել այն կիրառելով իրենց արդեն ծանոթ երաժշտառիթմական շարժումները, ընդ որում դրանք պետք է հարմարեցված լինեն ներառական կրթությամբ աշակերտների հնարավորություններին: Հնարավորության դեպքում կարելի է հրավիրել Ա. Սաթյանին ներկա գտնվել միջոցառմանը և կոմպոզիտորին ներկայացնել աշակերտներին: Միջոցառումը կխորացնի աշակերտների գիտելիքները և կընդլայնի նրանց մտահորիզոնը:

Կատարված աշխատանքը բերեց այն համոզմանը, որ ժողովածուն լիովին հնարավորություն է տալիս ուսուցողական նպատակով այն կիրառել երաժշտական ու հանրակրթական դպրոցներում, այդ թվում նաև այն դպրոցներում, որոնք ներառված են ներառական կրթության ոլորտը:

Հոդվածում կատարված առաջարկները համահունչ են հանրակրթական դպրոցների «Երաժշտություն» առարկայի ծրագրին և կարող են «Երաժշտու-

թյան» դասը դարձնել ավելի բազմաբովանդակ՝ երաժշտության ուսուցչին հնարավորություն տալով կիրառել ուսուցման բազմապիսի և բազմազան մեթոդներ:

Այսպիսով, «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուի կիրառումը երաժշտական և հանրակրթական դպրոցներում, մեծապես նպաստում է երեխաների երաժշտագեղագիտական դաստիարակությանը, խթանում նրանց երաժշտական ընդունակությունների, լսողության, մտածողության և ընկալման զարգացումը՝ ձևավորելով համակողմանի զարգացած անհատի, մեր երկրի ապագա քաղաքացուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Շաբոյան Ի.-Մերը և գեղեցիկը պետք է հաղթեն, Ազգ շաբաթաթերթ, Երևան 1997թ.
2. Պետրոսյան Լ.- Այսօր Ցախեսներ շատ կան, Ժամանակ շաբաթաթերթ, Երևան 2010թ.
3. Սաթյան Ա, Ա., -Մենք դաշնամուր ենք նվագում, Երևան 2014թ.
4. Մելիքսեթյան Գ. Բ.,-Երաժշտության դասավանդման ազգային ավանդույթները և արդի մանկավարժությունը, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին, Երևան 2010թ.
5. Մելիքսեթյան Գ.-Դպրոցականների բազմաձայն մտածողության ձևավորումը երաժշտության դասին, Երևան 2007թ.
6. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի. Երաժշտությունը 1-4-րդ և 2-7-րդ դասարաններում Ուսուցչի մեթոդական ձեռնարկներ, Երևան 2013թ.

Резюме–Одним из ярких представителей современной армянской музыки является Арам Сатян. Сатян-автор первых армянских поп-опер “Лилит” (1991 г.) и “Маленький Цахес” (2011 г.), в которых отражается сложный вопрос о взаимоотношениях между творческой личностью и обществом. Сатян является автором более 300 песен, инструментальных и симфонических произведений. Использование детского альбома композитора “Мы играем на рояле” в общеобразовательной школе, в том числе с инклюзивным образованием, способствуя музыкально-художественному воспитанию детей, стимулируя развитие их музыкальных способностей, слуха, мышления и восприятия- формируя всесторонне развитую личность, будущего гражданина нашей страны.

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՎԵՍՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունը թելադրում է մանկավարժի նոր գործառույթներ, խնդիրներ: Այդ է պատճառը, որ առաջնային է դառնում սովորողների ստեղծագործական կարողությունների, տրամաբանական մտածողության զարգացումը, ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունները: Այս բարդ խնդիրների լուծման եղանակներից է ուսուցողական քվեստը, որը մենք փորձել են կիրառել տարրական դպրոցում: Իր բուն իմաստով քվեստը (անգլ. թարգմանաբար quest - փնտրել) նշանակում է խաղ, որը խաղի մասնակցից պահանջում է մտավոր խնդրի լուծում՝ սյուժեի զարգացման համար¹: Սյուժեն նախօրոք կազմում է ուսուցիչը՝ հաշվի առնելով քվեստի անցկացման վայրը, ժամանակը, մասնակիցների տարիքը և այլ առանձնահատկություններ, ընդ որում՝ այն կարող է լինել ճկուն՝ կախված մասնակիցների զարգացվածության աստիճանից, առաջադրված տեսանկյուններից, արդյունքներից²: Ուսուցողական քվեստը կարելի է իրականացնել ինչպես դպրոցում, այնպես էլ արտադպրոցական պարապմունքների ձևով՝ էքսկուրսիա դեպի թանգարան, անտառ, այցելություն պատմամշակութային հուշարձաններ և այլն:

Կախված բովանդակությունից՝ քվեստը կարող է լինել.

- **Գծային**, որտեղ խաղը կառուցված է շղթայաձև. պատասխանելով հարցին՝ մասնակիցները ստանում են հաջորդ հարցը և այսպես շարունակ:

- **Գրոհային**, որտեղ մասնակիցներից յուրաքանչյուրը ստանում է առաջադրանք և ինքնուրույնաբար գտնում կատարման եղանակները:

- **Օղակային**, որը նույն գծային քվեստն է, միայն այն տարբերությամբ, որ իրականացվում է օղակաձև, այսինքն՝ խմբերի մեկնարկը տրվում է տարբեր տեղերից, որը հանդիսանում է նրանց համար նաև վերջնակետ³:

Տարրական դպրոցում ուսուցողական քվեստը կարելի է կիրառել տարբեր առարկաների դասավանդման գործընթացում: Մենք մշակել և տարրական դասարաններում կիրառել ենք մի շարք ուսուցողական քվեստներ: Ներկայացնենք տարրական դպրոցում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի շրջանակներում մեր կողմից անցկացված ուսուցողական քվեստի օրինակ:

Դասարան՝ երկրորդ

Թեմա՝ Բնությունն իմ շուրջը⁴

Քվեստի անցկացման նպատակն ու խնդիրները՝

- Բնության մեջ օրինաչափորեն գործող փոխադարձ կապերի բացահայտում, բնության ամբողջականության ընկալում

- ջրի, օդի և լույսի մասին գիտելիքների հաղորդում

- կրտսեր դպրոցականների հետազոտական, ինքնուրույն դատողություններ անելու, համագործակցային կարողությունների զարգացում,

- հետաքրքիր, ինտերակտիվ միջավայրի ստեղծում,
- տեսականի և գործնականի միջև կապի ապահովում,


Ուսումնասիրվող բնության տարրեր՝ **ջուր, օդ, լույս**

Քվեստի տեսակը՝ **օղակային**

Տևողությունը՝ 45 ր

Քվեստի անցկացման նկարագրություն

Դասարանը բաժանվում է երեք տարասեռ խմբի՝ յուրաքանչյուրում 7-9 աշակերտ: Սովորողներին տեղեկացվում է, որ նրանք պետք է հետքագրեն բնության երեք տարրերը՝ օդը, ջուրը, լույսը: Նրանք անպայման պետք է նշումներ կատարեն, անցնեն այդ տարրերը ուսումնասիրող կայաններով՝ յուրաքանչյուրում լինելով ընդամենը 8 րոպե: Անհրաժեշտ է ուշադիր լինել, վերլուծել տեղեկույթը և իրենց հետաքրքրող հարցերը տան կայանի ավագին: Յուրաքանչյուր խումբ պետք է գտնի այդ տարրերի միջև առկա կապերը և համապատասխան տվյալները լրացնեն աշխատանքին վերաբերող հարցաթերթում: Հաղթող կճանաչվի այն խումբը, ով ամենաարագը կլրացնի հարցաթերթը, կգտնի տարրերին վերաբերող ամենաշատ կապերը և ամենաշատ թվով ճիշտ պատասխաններ կտա:



Քվեստի սկզբում առաջին խումբը լինում է առաջին կայանում, երկրորդը՝ երկրորդ, երրորդը՝ երրորդ, իսկ աշխատանքները ավարտելուց հետո առաջին խումբը աշխատում է երկրորդ կայանում, երկրորդը՝ երրորդ և այսպես շարունակ: Սովորողները յուրաքանչյուր կայանում կարող են լինել ընդամենը 8 րոպե, որից հետո փոխվում են կայաններով: Հարցաթերթի լրացմանը տրվում է 5 րոպե, իսկ տարրերի միջև կապերը գտնելուն ևս 5 րոպե, որից հետո ամփոփվում են սովորողների ցուցադրած արդյունքները և հայտարարվում հաղթող թիմը, իսկ 2-րդ և 3-րդ հորիզոնականը զբաղեցրած թիմերը արժանանում են շնորհակալագրերի:

Քվեստի ընթացքը. Առաջին կայան- օղ /8ր/

1. Նախապատրաստական գրույց, որը ընթանում է հարց ու պատասխանի ձևով: Պարզում ենք օղի ֆիզիկական հատկությունները /ձև, գույն, համ, հոտ/, բացահայտում օղրի դերը և նշանակությունը կենդանական, բուսական աշխարհի կյանքում:

2. Փորձ N1. Արդյո՞ք դատարկ է բաժակը

Երեխաներին ցուցադրում ենք դատարկ բաժակ և հարցնում, թե այնտեղ ինչ-որ բան կա: Որից հետո տարայի մեջ, որը լցված է ջրով, բերանքսիվայր իջեցնում են դատարկ բաժակը այնքան, որ այն ծածկվի ջրով: Իջեցնում ենք ուղիղ, որ հանկարծ միջի օղը դուրս չգա, որից հետո այն թեքում ենք և տեսնում, որ օղը պղպջակներով դուրս է գալիս: Երեխաների հետ փորձում ենք պարզել, թե որտեղից առաջացան պղպջակները:

3. Փորձ N2. Ինչպե՞ս են վեր ու վար անում ձկները¹

4. Փորձ N3. Պարոզ մետաղադրամը¹

5. Կատարած փորձերի ամփոփում և եզրահանգումների կատարում, հարցեր կայանի ավագին երեխաների կողմից:

Երկրորդ կայան- ջուր /8ր/

1. Նախապատրաստական գրույց և մուլտֆիլմի դիտում¹

2. Փորձ N 1. Ջրի շրջապտույտը տոպրակում¹

3. Փորձ N2. Ինչո՞ւ ջուրը չի լցվում շշի մեջ

Ձագարի օգնությամբ շշի մեջ ջուր ենք լցնում: Պլաստիքինով պատում ենք այն հատվածը, որը գտնվում է շշի և ձագարի շփման վերնի հատվածում, որից հետո տեղադրում ենք այն շշի վրա ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ պլաստիքինը ամբողջությամբ փակի շշի և ձագարի շփման մակերեսը, որց հետո լցնում ենք ջուրը: Կտեսնենք որ ջուրը կաթ-կաթ է թափվում, որն էլ պայմանավորված է նրանով, որ շշի միջի օղը չի կարողանում դուրս գալ:¹

4. Կատարած փորձերի, ստացած տեղեկության ամփոփում, հարցեր կայանի ավագին և եզրահանգումների կատարում:

Երրորդ կայան- լույս /8ր/

1. Նախապատրաստական գրույց

2. Փորձ N1. Ծիածանի ստացում

Ջրով լի տարայի մեջ տեղադրել հայելի և լապտերի լույսը գցենք նրա վրա: Կտեսնենք, որ նրա մոտ պահված սպիտակ թղթի վրա հայտնվեց ծիածան:

3. Լույսի մասին հեքիաթի ընթերցում և փորձ N2. Ձեռքով ծածկված լապտեր /այն նկարագրվում է հեքիաթում:¹

4. Կատարած փորձերի, ստացած տեղեկության ամփոփում և եզրահանգումների կատարում: Հարցեր կայանի ավագին երեխաների կողմից:

Կայաններում աշխատանքը ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ լրացնում է հարցաթերթը, բացահայտում ուսումնասիրված տարրերի միջև գոյություն ունեցող կապերը, ձեռք բերում նոր, ինտեգրված գիտելիքներ:

Տարրական դպրոցում ուսուցողական քվեստի կիրառման մեր փորձը թույլ է տալիս փաստելու, որ այն իսկապես ունի բարձր օգտակար գործողություն գործակից, նպաստում է կրտսեր դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը, ինքնուրույնության խթանմանը: Հետևաբար, առաջարկում ենք այս մեթոդը ևս ակտիվորեն կիրառել տարրական դպրոցում՝ ի թիվս արդյունավետ այլ մեթոդների:

Օգտագործված գրականության ցանկ

1. Квест (значения) // Википедия [2015-2015] (дата обновления: 25.03.2015).- URL: <http://ru.wikipedia.org/?oldid=69566952> (дата обращения: 25.05.2015).
2. Жебровская О. О. Международный Вебинар «Живые квесты в образовании (современные образовательные технологии)» [Электронный ресурс].- Режим доступа: <http://ext.spb.ru/index.php/webinars/2209-22012013-qq-qq.html> (дата обращения: 04.06.2015).
3. Осяк С. А., Султанбекова С.С., Захарова Т.В., Яковлева Е.Н., Лобанова О. Б., Плеханова Е.М. ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КВЕСТ-СОВРЕМЕННАЯ ИНТЕРАКТИВНАЯ ТЕХНОЛОГИЯ // Современные проблемы науки и образования.- 2015.- № 1-2.
4. Թորոսյան Ն., Ալեքսանյան Լ., Ես և շրջակա աշխարհը: Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Երևան 2011
5. <https://www.youtube.com/watch?v=ORM8aCgCKXQ>
6. <https://www.youtube.com/watch?v=qBdM9z5jtYU> 0:17 րոպեից մինչև 1:14 ր
7. <https://www.youtube.com/watch?v=MbJEbzIUFR8>
8. <https://www.adme.ru/zhizn-nauka/6-prostejshih-opytov-dlya-detej-858260/>
9. <https://www.youtube.com/watch?v=GBHMAFlz96M> 2:50-3:23
- <http://mariun.ru/skazka-pro-fonarik-i-raznotsvetnyih-svetikov/>

Резюме–В статье говорится об одном из интерактивных методов - о квесте. Представлены особенности, виды, способы проведения квеста. Автор предлагает использовать его и в начальной школе. В этом контексте мы рассматривали образовательные квесты в рамках интегрированного курса «Я и окружающий мир». Метод интересный, развивают исследовательские способности младших школьников, так же способствуют формированию ценности здоровья.

Summary–The article speaks about the quest: one of the interactive methods of education. In the article presented features, types, ways of carrying out the quest. The author suggests using it also in the primary school. In this context, we considered educational quests in the framework of the integrated course "Me and the World". The method is interesting, it develops the research abilities of young pupils, also contribute to the formation of the value of health.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԱՆԱՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՂԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ -----3

ԳՍՅԱՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹԻ
ԷԶԵՐՈՒՄ (1877-1878 թթ.) ----- 9

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՔԱՌՈՐԴԻՆ ----- 19

ԳԵՂԱՄԱ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԷԶԵՐ ՍԵՎՔԱՐԵՅԻ ՍԱՔՈՅԻ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ----- 25

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

SYUZANNA SHAHNAZARYAN

THE INFLUENCE OF GLOBALIZATION ON THE CREATION OF
NEOLOGISMS ----- 33

ANOUCHE PACHINYAN

LES PROBLÈMES SÉMANTIQUES DES PROVERBES FRANÇAIS ----- 39

SERINE MATINIAN

LE LANGAGE DES JEUNES EN FRANCE ----- 43

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԵՏԱ ՕՐԴԻՆՅԱՆ

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ----- 47

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼՄԻՐԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՃԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՖՈՐՄԱԼ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ----- 53

ՄԻՇԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՔՈՐՇՈՒՄՆԵՐ ----- 58

ՄԱՐԻԱ ԲԱԲԱՅԱՆ

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՆՁԻ ՄԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՄԱՆԸ
ՀԱՆԳԵՑՆՈՂ ԳՈՐԺՈՆ ----- 64

ՀՈՒՄԻԿ ԽԱՆՈՒՍՅԱՆ

ԱՂԴԻԿՅԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼ – ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ ----- 69

ԱՆՆԱ ԲԱՂՐԱՍՅԱՆ

ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ----- 72

ՄԱՆՈՒԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՐԱՋԱՏԻ ԿՈՐՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ ----- 77

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՈՆԻԿԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄՕՏՀ-Ն ՈՐՊԵՄ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-
ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ----- 82

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱԹԵՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ----- 92

ՄԻՓԱՆ ԿԵՍՈՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ----- 99

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻ ՍԱՐԲԵԿՅԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՄԱՐԴՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ----- 107

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԽՐՈՑԱՆ ԱՐՄԻՆԵ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ
ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ----- 111

ՌՈՒՋԱՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ ----- 117

ՄԱՐԴԱՆՅԱՆ ՕԿՍԱՆԱ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ----- 124

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ----- 129

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՆ ----- 135

ՄԱՐԻԱՍ ԵՆՈՔՅԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆԴԼԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ----- 140

ՆԱԶԵԼԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ----- 144

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՇԱԽՄԱՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ
(II ԴԱՍԱՐԱՆ) ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ----- 151

ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՍԱԹՅԱՆԻ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱԼԲՈՄ»-Ը ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ----- 154

ԱՆԱՀԻՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՎԵՍՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ ՏԱՐՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑՈՒՄ ----- 159

**«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԶՈՐԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ»**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17 –ԻՆ ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**

Տեխնիկական խմբագիր՝ Թամարա Սարգսյան

Զափսը՝, Տպ. մամուլ...,
Տպաքանակ՝ 100

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, ԱԼ. Մանուկյան 1